ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՄԱԿԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ ԱՍՔԱՆԱԶԻ**

# ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ (ԿԱԹՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

**Ը.00.02-<<Տնտեսություն, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**Գիտական ղեկավար՝**
**տնտեսագիտության թեկնածու,**
**պրոֆեսոր Լ.Ա. Մարգարյան**

**ԵՐԵՎԱՆ - 2016**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**............................................................ **2**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**..................................................................... **4**

**ԳԼՈՒԽ 1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**.................................. **10**

1.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության հասկացության էությունը և բովանդակությունը........................................................................ 10

1.2. Հայաստանի Հանրապետությունում փոքր ու միջին ձեռնարկատիրության չափանիշները և իրավական հիմքերը..................... 24

1.3. ՀՀ գյուղատնտեսական հումքի վերամշակման ոլորտի փոքր ու միջին ձեռնարկատիրության առանձնահատկությունները............. 38

**ԳԼՈՒԽ 2. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁՆ ՈՒ ՀՀ ԿԱԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**.......................................... **54**

2.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման միջազգային փորձը........................................................................................ 54

2.2. ՀՀ կաթի վերամշակման ոլորտի հումքի արտադրության ենթաճյուղում ստեղծված վիճակի ու միտումների բնութագիրը....... 68

2.3. ՀՀ կաթ վերամշակման փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտում ձևավորված հարաբերությունների և միտումների վերլուծությունը........................................................................ 77

2.4. ՀՀ կաթի վերամշակման փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները........................................................................ 84

**ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԿԱԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՓՈՔՐ ՈՒ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ**

**ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**.......................... **96**

3.1. Կաթի վերամշակման ոլորտի գործունեության վրա տարբեր գործոնների ազդեցության չափի գնահատումը............................. 96

3.2. Կաթի վերամշակման ոլորտի փոքր ու միջին ձեռնար-կատիրության զարգացումը կոոպերացիայի և պայմանագրային հարաբերությունների խթանման միջոցով.................................................. 107

3.3. Կաթի վերամշակման ոլորտի փոքր ու միջին ձեռնար-կատիրության հիմնախնդիրների լուծման քաղաքականության հիմնական ուղղությունները........................................................................ 118

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**......................................................... **146**

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**................................. **159**

**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**........................................................................ **169**

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**<u>Հետազոտության թեմայի արդիականությունը:</u>** Ընդհանուր առմամբ տարբեր երկրներում սոցիալական համերաշխության, քաղաքական կայունության և տնտեսական աճի ապահովման երաշխավորված միջոցը զարգացած փոքր և միջին ձեռնարկատիրության առկայությունն է: Զբաղվածության ապահովման և, դրանով իսկ, աղքատության հաղթահարման խնդիրներն արմատական լուծումներ են ստանում միայն հասարակության միջին խավը ձևավորող փոքր և միջին ձեռնարկությունների միջոցով: Հետևաբար հրատապ է փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտների վերացումը՝ շարունակաբար բացահայտելով և ներդնելով պետական աջակցության առավել արդյունավետ մեխանիզմներ:

Հայաստանի Հանրապետությունում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումն է կոչված ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ տնտեսությանը հաղորդելով նորարարական ուղղվածություն և ճկունություն:

Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին ուղղված պետական աջակցության միջոցառումները ուղղված են երկրի, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը: Այս առումով փոքր և միջին ձեռնարկատիրությունն իր առանձնահատկություններով և զարգացմամբ ընձեռած հնարավորություններով այն անկյունաքարն է, որը նշանակալի ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման վրա՝ ապահովելով զգալի սոցիալ-տնտեսական արդյունք և տարածքային համաչափ զարգացում:

Հանրապետության փոքր և միջին ձեռնարկատիրության մեջ իրեն կարևորությամբ առանձնանում է գյուղատնտեսական հումք վերամշակող ոլորտը, որի կարևորագույն բաղադրիչն է հանդիսանում կաթի վերամշակման կազմակերպությունները, վերջիններս կարևոր նշանակություն ունեն անասնապահության

ճյուղի արդյունավետ գործունեության, անասնապահական տնտեսությունների եկամուտների ձևավորման և գյուղական տարածքների զարգացման համար:

Հանրապետության մշակող արդյունաբերությունում առկա 6061 փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների շուրջ 40 տոկոսը հանդիսանում են պարենային ոլորտի կազմակերպություններ[1]: Հանրապետությունում ներկայումս գործող 70 կաթ վերամշակող կազմակերպությունների գերակշռող մասը՝ 81.5 %-ը հանդիսանում են փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներ[2]: Կաթը և կաթնամթերքը ՀՀ պարենային ազգային հաշվեկշռի էներգետիկ արժեքի մեջ կազմում է շուրջ 10 %[3] և ֆիզիո-լոգիական նորմաների ապահովման հետ կապված այն բարձրացնելու անհրաժեշտություն ունի:

2001 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետությունում մշակվում և իրականացվում են փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության տարեկան ծրագրեր, որոնք նպատակաուղղված են ապահովելու «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով ամրագրված փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացումը: Նշվածի հետ մեկտեղ ոլորտի առջև դեռևս ծառացած են բազմաթիվ խնդիրներ:

Կարևորելով փոքր և միջին ձեռնարկատիրության, մասնավորապես գյուղատնտեսական մթերքներ վերամշակող կազմակերպությունների դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, պարենային անվտանգության մակարդակի բարձրացման և դրանով իսկ աղքատության հաղթահարման համար, անհրաժեշտություն է ուսումնասիրել բնագավառի փոքր և միջին ձեռնարկատիրության վիճակը, բացահայտել ծառացած հիմնախնդիրները և առաջադրել դրանց լուծման քայլերն ու միջոցառումները:

Կաթի վերամշակման բնագավառում փոքր ու միջին

[1] Հաշվետվություն: Փոքր և միջին ձեռնարկությունները բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ.: Երևան 2013, էջ 7
[2] http://www.minagro.am
[3] Պարենային ապահովությունը և աղքատությունը 2015թ. հունվար-հունիսին: ՀՀ ԱՎԾ: Երևան 2015թ., էջ 68-70

ձեռնարկատիրության հիմնախնդիրները բազմազան են, այն առնչվում է բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտի բարելավման, ոլորտին հումքի ապահովման, կաթ արտադրողների հետ փոխշահավետ պայմանագրային հարաբերությունների ձևավորման, արտադրանքի տեսականու ընդլայնման և որակի չափանիշների կիրառման, շուկայի պահանջարկի բավարարման, արտադրանքի մրցունակության բարձրացման, կաթի և կաթնամթերքի իրացման համակարգի և այլ գործոնների հետ:

Վերը նշված հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծմանն ուղղված մեխանիզմների, միջոցառումների և քայլերի ձեռնարկումը պահանջում է բնագավառում համակողմանի գիտական ուսումնասիրությունների իրականացում:

Հանրապետությունում փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման տարբեր հարցերի ուղղությամբ գիտական հետազոտություններ իրականացվել են հայրենական տնտեսագետների, մասնավորապես՝ Ն.Գ. Գոլեցյանի, Ս.Ա. Վարդանյանի, Վ.Ս. Համբարձումյանի, Հ.Ս. Հովհաննիսյանի, Վ.Ս. Աբրահամյանի և այլ ուսումնասիրողների կողմից, սակայն գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության, այդ թվում կաթի վերամշակման ոլորտի փոքր ու միջին ձեռնարկությունների հիմնախնդիրների լուծման ուղղությամբ համակողմանի ուսումնա-սիրություններ չեն եղել: Նշվածն էլ պայմանավորում է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, որն էլ բխում է երկրի պարենային ապահովության, գյուղական տարածքների համաչափ զարգացման, զբաղվածության ապահովման, աղքատության հաղթահարման և այլ խնդիրների լուծման անհրաժեշտությունից:

**Հետազոտության նպատակը և խնդիրները**: Աշխատանքի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության հումքի վերամշակման, մասնավորապես՝ կաթի վերամշակման ոլորտի փոքր և միջին ձեռնարկատիրության կազմակերպությունների զարգացման հիմնախնդիրների բացահայտումն և դրանց լուծման մեխանիզմների, միջոցառումների, քայլերի առաջադրումն է: Այդ նպատակի իրականացման համար աշխատանքում դիտարկվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել փոքր և միջին ձեռնարկատիրության տեսական և մեթոդական հիմունքները,
- ուսումնասիրել ՀՀ-ում փոքր ու միջին ձեռնարկատիրության չափանիշները և իրավական հիմքերը,
- գնահատել ՀՀ գյուղատնտեսական հումքի վերամշակման ոլորտի փոքր ու միջին ձեռնարկատիրության առանձնահատկությունները,
- ուսումնասիրել փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման միջազգային փորձը,
- վերլուծել ՀՀ կաթի վերամշակման ոլորտի հումքի արտադրության ենթաճյուղում ստեղծված վիճակն ու միտումները,
- վերլուծել ՀՀ կաթ վերամշակման փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտում ձևավորված հարաբերությունները և միտումները,
- գնահատել ՀՀ կաթի վերամշակման փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները,
- գնահատել կաթի վերամշակման ոլորտի գործունեության վրա տարբեր գործոնների ազդեցության չափը,
- դիտարկել կոոպերացիայի և պայմանագրային հարաբերությունների խթանումը որպես կաթի վերամշակման ոլորտի փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման միջոց,
- առաջարկել կաթի վերամշակման ոլորտի փոքր ու միջին ձեռնարկատիրության հիմնախնդիրների լուծման քաղաքականության հիմնական ուղղությունները:

**Հետազոտության օբյեկտ և առարկան:** Ուսումնասիրության օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական հումքի վերամշակման, մասնավորապես՝ կաթի վերամշակման ոլորտի կազմակերպություններն են, իսկ առարկան՝ կաթի վերամշակման ոլորտի փոքր և միջին ձեռնարկատիրության հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման ուղիների առաջադրումն է:

**Ատենախոսության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը:** Ատենախոսության համար տեսական և մեթոդաբանական հիմք են

հանդիսացել` փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտի հետ առնչվող հայեցակարգերը, ծրագրերը, արտասահմանյան և հայրենական հետազոտողների փոքր ու միջին ձեռնարկատիրության, գյուղատնտեսական մթերքների վերամշակման ոլորտին առնչվող հետազոտություններն ու աշխատությունները: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել` ուսումնասիրվող բնագավառի հետ առնչվող իրավա-օրենսդրական փաստաթղթերը, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների ու ՀՀ գյուղատնտեսության նախարարությունների, Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի տեղեկատվական, վերլուծական, հաշվետվական նյութերն, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակումները և ուսումնասիրվող բնագավառի հետ առնչվող այլ տեղեկատվական նյութերը: Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակա-գրական, տնտեսամաթեմատիկական, ինչպես նաև համեմատական վերլուծության մեթոդներ:

**<u>Ատենախոսության գիտական նորույթը և արդյունքները:</u>** Հետա-զոտության հիմնական նորույթը կայանում է նրանում, որ գյուղատնտեսական մթերքների վերամշակման ոլորտում փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում հիմնախնդիրների բացահայտման արդյունքում կանխորոշվել են դրանց հնարավոր լուծումներ: Հիմնական գիտական արդյունքները պայմանավորված են հետազոտության շրջանակներում առաջադրված խնդիրներով և մասնավորապես հետևյալն են.

- Բացահայտվել է ՀՀ կաթի վերամշակման փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները:
- Էկոնոմետրիկ վերլուծությունների արդյունքում գնահատվել է կաթի վերամշակման ոլորտի գործունեության վրա տարբեր գործոնների ազդեցության չափը:
- Հիմնավորվել է կոոպերացիայի և պայմանագրային հարաբերությունների խթանումը որպես կաթի վերամշակման ոլորտի փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ուղղություն:

- Մշակվել է կաթի վերամշակման ոլորտի փոքր ու միջին ձեռնար-կատիրության հիմնախնդիրների լուծման քաղաքականության հիմնական ուղղությունները՝ կաթի արտադրության կազմակերպման, նախնական մշակման և պահպանման, կաթնամթերքի հումքի իրացման, կաթնամթերքի արտադրության գործընթացի, սննդամթերքի անվտանգության չափանիշների ներդրման, կաթնամթերքի իրացման, կաթնամթերքի արտադրական հարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտի բարելավման շրջանակներում:

**<u>Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը</u>:** ՀՀ գյուղատնտեսական հումքի վերամշակման փոքր և միջին ձեռնար-կատիրության ոլորտի հիմնախնդիրների լուծման ուղղությամբ ատենախոսությունում իրականացված բազմակողմանի ուսումնասիրությունները և ներկայացված առաջարկությունները տեսական ու գործնական նշանակություն ունեն և կիրառության դեպքում կարող են իրական հիմք հանդիսանալ տվյալ բնագավառում պետական քաղաքականության կատարելագործման, հայեցակարգերի, ծրագրերի մշակման համար:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների կողմից՝ համապատասխան քաղաքականության մշակման ու իրականացման ուղղությամբ, ինչպես նաև օգտակար լինել ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների հետազոտությամբ զբաղվող տնտեսագետների, ասպիրանտների և ուսանողների համար:

**<u>Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները</u>:** Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի <<Ագրոբիզնեսի կառավարման>>, <<Ագրոբիզնեսի կազմակերպման>>, <<Ագրոպարենային համալիրի էկոնոմիկայի>> ամբիոնների համատեղ նիստում:

Հետազոտության մի շարք արդյունքներ օգտագործվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից և ստացել են գործնական կիրառություն:

Ատենախոսության թեմայով հրապարակված է 8 գիտական հոդված:

**<u>Հետազոտության կառուցվածքը:</u>** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 169 էջ, ներառյալ` օգտագործված գրականության ցանկը, ներառում է 31 աղյուսակ և 10 գծապատկեր:

# ԳԼՈՒԽ 1: ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

## 1.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության հասկացության էությունը և բովանդակությունը

Զարգացած շուկայական տնտեսության պայմաններում փոքր և միջին ձեռնարկատիրությունը կարևոր դեր է խաղում, ապահովելով համախառն արտադրանքի և բնակչության զբաղվածության մեծ տիրույթ: Այն ունակ է հարմարվել արագ փոփոխվող ներքին և արտաքին միջավայրին, շուկայական իրավիճակին, արագ կենսագործել ծագած մտահղացումները, նորարարությունները:

Միջազգային փորձը վկայում է, որ շուկայական համակարգի արդյունավետ գործունեությունը կախված է նրա անքակտելի մասից` ձեռնարկատիրությունից: Ձեռնարկատիրությունը հանդիսանում է տնտեսության սոցիալական կողմնորոշման հիմքը, նպաստում է տնտեսական գործընթացների արագացմանը,

հանդիսանում է տնտեսության նոր որակական մակարդակի շարժիչ ուժ[4]:

<<Բիզնես>> (գործարարություն) հասկացությունը ունի անգլիական ծագում (business), որը թարգմանաբար նշանակում է գործ, գործունեություն, զբաղմունք: Սակայն դժվար է գտնել այդ հասկացության միանշանակ ձևակերպում: Տնտեսագիտական գրականության մեջ, հրապարակված տարբեր ժամանա-կահատվածներում դրան տալիս են տարբեր մեկնաբանություններ: Հաճախ <<բիզնես>> և <<ձեռնարկատիրություն>> սահմանվում է միատեսակ: Այսպես, ժամանակակից տնտեսագիտական բառարանում <<բիզնեսը>> դա գործ է, ձեռնարկատիրություն է[5]:

Անգլիացի պրոֆեսոր Ալան Հոսկինգի կարծիքով բիզնեսը՝ դա <<գործունեություն է, որը իրականացվում է մասնավոր անձանց կամ կազմակերպության կողմից՝ արտադրության բնական բարիքների առանձնացման կամ այլ ապրանքների փոխանակման, ծառայության մատուցման, ծառայությունների կամ փողի համար, որը հանգեցնում է շահագրգիռ անձանց կամ կազմակերպությունների փոխադարձ օգուտի>>[6]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ չկա միանշանակ մեկնաբանություն այնպիսի հասկացությունների համար ինչպիսիք են <<ձեռնարկատիրությունը>> և <<բիզնեսը>>: Այսպես Տնտեսագիտական մեծ բառարանում ձեռնարկատիրության տակ հասկացվում է <<...քաղաքացիների նախաձեռնողական ինքնուրույն գործունեություն՝ ուղղված շահույթի կամ անձնական եկամուտի ստացմանը, որը իրականացվում է քաղաքացու անունից, իր նյութական պատասխանատվության ներքո կամ իրավաբանական անձանց անունից և իրավական պատասխանատվության ներքո>>: <<Բիզնեսը>> սահմանվում է որպես տնտեսական գործունեություն, որը տալիս է եկամուտ, ցանկացած տեսակի

[4] Л.А. Маркарян, Р.А. Макаряан-Сущность и роль малого и среднего предпринимательства в экономической ситеме Республики Армения.// Известия аграрной науки. Том 6, Ном. 3, 2008. с.98

[5] Райзберг Б.А. Современный экономический словарь/ Б.А. Райзберг, Л.Ш. Лозовский, Е.Б. Стародубцева.-6-е изд., перераб. и доп.-Москва: ИНФРА-М, 2011. -512 с.

[6] Хоскинг А.А. Курс предпринимательства/ А. Хоскинг.-Москва: Международные отношения, 1993.-350 с.

գործունեություն, որը բերում է եկամուտ կամ այլ անձնական օգուտ>>[7]:

Տնտեսագիտության տեսությունում <<ձեռնարկատիրություն>> հասկացությունը կապվում է Ռ. Կանտիլոնի հետ: Նա ձեռնարկատերերի մասին գրել է որպես հատուկ սուբյեկտ, որոնք օժտված են կանխազգալու, ռիսկի գնալու, ընդունված որոշումների ամբողջ պատասխանատվությունը կրելու հատկություններով[8]:

Շուկայական հարաբերությունների տեսության հիմնադիր Ա. Սմիթը[9] առաջադրել է <<տնտեսական մարդու>> հայեցակարգը, որի շարժառիթը կառուցվում է անձնական օգուտի և արմատական շահերի վրա և դրա հանրագումարը ձևավորում է հասարակության հետաքրքրությունները:

Ջ. Շումպետերը հաստատել է, որ ձեռնարկատիրական գործունեությունը <<կայանում է արտադրության գործոնների նոր կոմբինացիաների (համակցությունների) ստեղծման և մարմնացման>>[10], նոր կոմբինացիաների օգտագործման մեջ, ձեռնար-կատերը ստեղծում է ինովացիա: Տնտեսավարող սուբյեկտը հանդիսանում է ձեռնարկատեր այն դեպքում երբ նա <<... իրականացնում է ոչ թե այն, ինչ իրականացնում են մյուսները>> կամ <<... չի անում այնպես, ինչպես կատարում են մյուսները>>:

Զարգացնելով այդ գաղափարը, Սեյը[11] շեշտը դնում է արտադրության երեք գործոնների վրա` աշխատանք, հող, կապիտալ: Այդ դեպքում ձեռնարկատերը <<քարշ է տալիս>> ռեսուրսները ցածր արտադրողականության և շահութաբերության ոլորտից, այնպիսի ոլորտ որտեղ այն կարող է տալ առավել մեծ արդյունք:

Ա. Վ. Բուսիգինի մոտ առկա է <<բիզնես>> և <<ձեռնարկատիրություն>> կատեգորիաների մի քանի բնորոշումներ` որպես <<...գործարար ակտիվության վարման արվեստ>>, <<...որպես գիտակցված գործընթաց>>, որպես <<...հոգու հատուկ տրամադրություն, գործարար ռոմանտիկայի ձև և մարդուն

---

[7] Большое экономический словар [Текст]; под ред. А.Н. Азрилияна.-7-е изд. доп.- Москва: Инститвут новой экономики, 2008.-1472 с.

[8] Карлоф Б. Деловая стратегия: Концепция. Содержание. Символы: Пер. с англ. М.: Экономика, 1991. с. 17

[9] Смит А. Исследование о природе и причинах богатства народов. М.: Эконов, 1993. Т.-1-2. М., с. 25

[10] Шумпетер Й. Теория экономического развития. М.: Прогресс, 1982. с. 169

[11] Сей Ж.Б. Трактат политической экономи. М.: Солдатенков, 1986. с. 58

ներհատուկ ներուժի դրսևորման միջոց>> և որպես <<...սեփական բիզնեսի կազմակերպման ունակություն և սեփական գործի վարման հետ կապված ֆունկցիայի բավարար իրականացում>>[12]:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով <<Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է>>[13] (փոքր և միջին ձեռնարկատիրության ՀՀ օրենսդրական հիմքերին կանդրադառնանք առանձին բաժնով):

Ռուսաստանի Դաշնության Քաղաքացիական օրենսգիրքը ձեռնարկատիրական գործունեությունը սահմանում է որպես <<...ինքնուրույն, իրեն ռիսկով իրականացվող գործունեություն է ուղղված պարբերաբար շահույթի ստացմանը` ունեցվածքի օգտա-գործումից, ապրանքների վաճառքից, աշխատանքների կատարման կամ անձանց ծառայությունների մատուցումնից, այդ կարգավիճակում գրանցված լինելով օրենքով սահմանված կարգով>>[14]:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Ա.Ի. Ագեևի հետևությունները, որը դիտարկել է ձեռնարկատիրությունը որպես տնտեսական երևույթ, որը իհայտ է գալիս կազմակերպական-տնտեսական նորարարության և տնտեսական ազատության պայմաններում: Այդ դեպքում տնտեսական ազատությունը, ըստ գիտնականի կարծիքի, բնութագրվում է տնտեսավարող սուբյեկտի որոշակի իրավունքի առկայությամբ, որը երաշխավորում է անկախ, ինքնուրույն որոշումների ընդունում` կապված տնտեսական ակտիվության ձևի և ոլորտի փնտրման և ընտրության հետ: Որոշումների ընդունման ինքնավարությունը հանդիսանում է ձեռնարկատիրության հիմնական պայմանը[15]:

Որոշ հեղինակների կարծիքով <<բիզնես>> հասկացությունը առավել լայն է, քան <<ձեռնարկատիրությունը>>: Այսպես, Ֆ.Ի.

---

[12] Бусыгин А.В. Предпринимательство: учебник / А.В. Бусыгин.-3-е изд.- Москва: Изд-во “Дело”., 2003. -644 с.

[13] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք: Հոդված 2: Երևան, 28 հուլիսի 1998թ. ՀՕ-239

[14] Гражданский кодекс Российской Федерации. Режим доступа: http://ivo. garant.ru/SESSION/ PILOT/main.htm, 2013

[15] Агеев А.И. Предпринимательство: проблемы собственности и культуры/ А.И Агеев.-Москва: Наука, 1991. -112 с.

Շախմատովը և Վ.Ս. Նեչիպրենկոն բիզնեսի տակ հասկանում են ցանկացած տնտեսական գործունեություն, որը բերում է շահույթ, իսկ ձեռնարկատիրությունը` առանձնահատուկ բիզնես է, տնտեսավարման համակարգ ուղղված շահույթի ձևով եկամուտների կապիտալացմանը, որտեղ ձեռնարկատերը արտադրության գործոնների նոր կոմբինացիաներ իրականացնող գործունեության գլխավոր շարժվող սուբյեկտն է>>[16]:

Ձեռնարկատիրական գործունեությունը կարելի է համարել բիզնես, եթե այն համապատասխանում է հետևյալ չորս չափանիշներին[17].

- այդպիսի գործունեության արդյունքը միշտ իրական շահույթն է, իսկ վնասը կամ դիտավորություն կամ սուբյեկտիվ համոզվածություն,
- շահույթի ստացումը պետք է լինի կայուն, բիզնեսը շարունակական գործունեություն, այլ ոչ թե մեկանգամյա գործարք,
- այդ օրինական գործունեություն է, ոչ օրինական ստացված ցանկացած եկամուտ չի կարելի համարել բիզնես,
- այդ գործունեությունը պետք է օգուտ բերի հասարակությանը կամ նրա տարրերին:

Յուրաքանչյուր երկրում ձեռնարկատիրությունը համարվում է կայուն տնտե-սական զարգացման հիմնաքարերից մեկը: Այն երկրի տնտեսության աճն ապահովող կարևոր խթան է հանդիսանում` զարկ տալով գործարարությանը և ձեռներեցության ունակությունների բարձրացմանը, տնտեսական ներուժին, որն իր ճկունությամբ հեշտությամբ հարմարվում է շուկայի փոփոխական միջավայրին, ստեղծում նոր աշխատատեղեր և տնտեսական գործունեության հնարավորություններ` նպաստելով ապրանքների արտահանմանը և մրցունակության բարձրացմանը: Ձեռնարկատիրության էությունը նաև կայանում է նրանում, որ, այն միմյանց է կապում տնտեսական

---

[16] Шахматов Ф.И. Государственная поддержка предпринимательства в россии/ Ф.И. Шахматова, В.С. Нечипренко. – Москва, 1997. -265 с.
[17] Синтез понятий “бизнес” и “предпринимательство” Режим доступа://http://do.gendocs.ru/docs/index-102093.html.

համակարգի բոլոր օղակները, որոնց հիման վրա կարելի է կառուցել կայուն տնտեսական աճ և սոցիալական բարձր կենսամակարդակ[18]:

Գրականության աղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մի շարք ուսումնասիրողներ ձեռնարկատիրության նմանատիպը (անալոգը) համարում են բիզնես հասկացությունը: Մենք նույնպես կիսում ենք այդ տեսակետը և ատենախոսական հետազոտությունում հնարավոր ենք համարում փոքր և միջին բիզնեսի հարաբերությունների համար կիրառել <<փոքր և միջին ձեռնարկատիրությունը>> որպես հոմանիշ:

Բիզնեսի (ձեռնարկատիրության) գաղափարը հիմնված է սպառողների համար լրացուցիչ արժեքների ստեղծմանը որոնց համար նրանք պատրաստ են և պետք է վճարեն: 1-ին գծապատկերում ներկայացված է բիզնեսի (ձեռնարկատիրության) հիմնական տեսակները:

Մինչև փոքր և միջին ձեռնարկատիրության վիճակի և զարգացման դիտարկումը և վերլուծությունն անհրաժեշտ է որոշել ձեռնարկատիրության փոքր, միջին և խոշոր կատեգորիաների պատկանելությունը:




18 ... Ղ.Ա. Փոք... ձեռնարկ... գացման հի... Հ-ում ֆին... ի պայմա... գիտութ. թե... աստիճանի ... Ը.00.02/ Ե...

### Գծապատկեր 1: Բիզնեսի (ձեռնարկատիրության) տեսակները[19]

Մինչև այժմ դեռևս չկա փոքր և միջին ձեռնարկատիրության որոշման չափանիշների ստանդարտներ: Տարբեր երկրներում և միջազգային կազմակերպություններում դրանք խիստ տարբերվում են: Չափանիշներ, որոնք հնարավորություն են տալիս աստիճանակարգել շուկայական տնտեսության սուբյեկտները՝ համապատասխան մասշտաբների և գործունեության կարող է լինել ինչպես քանակական, այնպես էլ որակական:

Հ. Վելինն ուսումնասիրելով ձեռնարկատիրության զարգացման գործընթացը առանձնացնում է այնպիսի որակական չափանիշներ որոնք բնութագրում են՝ ֆիրմայի չափերը, արտադրանքի ստեղծման նպատակը և շարժընթացի մեթոդը, մենեջմենտի տեսակը, անձնակազմի կառավարման մեթոդը, գործունեության ֆինանսավորման ձևը (աղյուսակ 1.1.1):

Աղյուսակ 1.1.1

**Ֆիրմայի չափերի որոշման որակական չափանիշները ըստ Հ. Վելիի[20]**

| Համեմատման չափանիշները | Փոքր բիզնես | Փոքր-միջին բիզնես | Միջին-խոշոր բիզնես | Խոշոր բիզնես |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **Ստեղծման նպատակը** | Ներըմբռնմամբ, հանպատրաստից որոշվում է շուկան | Ներըմբռնմամբ ճշգրտվում է շուկան և ընդունված ռազմավարությունը | Ստեղծագործաբար ճշգրտվում է շուկան և ռազմավարությունը | Պարբերաբար և ռազմավարական տիրապետություն շուկայում |

[19] Синтез понятий “бизнес” и “предпринимательство” [Электронныи ресурс].-Режим доступа://http://do.gendocs.ru/docs/index-102093.html.

[20] Velu H.A.F. The Development Process of the Personally Managed Enterprise/H.A.F. Velu// European Foundation for Management Development’s, 10th Seminar on Small Business, Nottingham Business School.-Nottingham, 1980.-p.1-21

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Մենեջմենտի տեսակը** | Անձնական, ավտորիտար, ուղիղ | Անձնական, կոնսուլտացիաներ առանցքային գործընկերների, մասնագետների հետ | Անձնական կառավարում, մասնագետների ոչ մեծ խմբի օգտագործում, արտաքին փոձագետների ներգրավում | Խմբային կառավարում, մասնագետների մեծ խմբի ընդգրկում, ֆունկցիոնալ կազմակերպական կառուցվածք, խորհրդատվական կառուցվածք |
| **Արտադրանքի շարժը** | Չկա պլանավորում և մարքեթինգային հետազոտություններ | Կարճաժամկետ պլանավորում առանց մարքեթինգային հետազոտությունների իրականացման | Կարճաժամկետ և պարբերական երկարաժամկետ պլանավորման իրականացում, ոչ պարբերական մարկեթինգային հետազոտություն-ներ | Երկարաժամկետ պլանների մշակում, հաճախակի մարքեթինգային ուսումնասիրություններ |
| **Անձնակազմի կառավարման մեթոդը** | Անձնական հարաբերություն-ներ <<ղեկավար-աշխատող>> <<մեծ ընտանիք>> սկզբունքով, մոտիվացիայի և ներգրավածության բարձր աստիճան, արհմիության ազդեցության բացակայություն, աշխատանքային կոլեկտիվի խորհրդի բացակայություն | Անձնական հարաբերություններ <<գործատու-աշխատողների կոլեկտիվ>>, որոշակի աստիճանի արհմիության ոչ մեծ ազդեցություն, աշխատանքային կոլեկտիվի խորհրդի բացակայություն | Համագործակցության հարաբերություն-ներ, կազմակերպական միջավայր, մոտիվացիայի անշան աստիճան, արհմիութենական շարժման ազդեցության ուժեղացում, աշխատանքային կոլեկտիվի խորհրդի բացակայություն | Հարաբերություն-ների խիստ հերարխիկ մոդել, կոլեկտիվների համագործակցություն, ներգրավվածության ամբողջական բացակայություն (բացի թոփմենեջերներից), մոտիվացիայի բարձրացման բարդություններ, ուժեղ արհմիություն և աշխատանքային կոլեկտիվ |

աղյուսակ 1.1.1-ի շարունակությունը

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| **Ֆինանսավորման աղբյուրը** | Ընտանիք, բանկ | Ընտանիք, բանկ | Ընտանիք, բանկ, բաժնետոմսեր | Բանկ, բաժնետոմսեր |

Եվրոպական հանձնաժողովը առանձնացնում է միկրո, փոքր և միջին ձեռնարկություններ այնպիսի չափանիշների հիման վրա,

ինչպիսիք են աշխատողների թիվը, տարեկան շրջանառությունը, հաշվեկշռի գումարը, անկախությունը: Եվրոպական հանձնաժողովի կողմից փոքր և միջին ձեռնարկությունների տարբերակման չափանիշները ներկայացված է 1.1.2 աղյուսակում:

Աղյուսակ 1.1.2

**Եվրոպական հանձնաժողովի կողմից առաջարկված փոքր և միջին ձեռնարկատիրության տարբերակման չափանիշները**[21]

| Չափանիշները | Գերփոքր (միկրո) ձեռնարկություններ | Փոքր ձեռնարկություններ | Միջին ձեռնարկություններ |
|---|---|---|---|
| **Աշխատողների թիվը** | մինչև 9 | մինչև 49 | մինչև 249 |
| **Տարեկան շրջանառությունը** | մինչև 2 մլն եվրո | մինչև 10 մլն եվրո | մինչև 50 մլն եվրո |
| **Հաշվեկշռի գումարը** | | | մինչև 43 մլն եվրո |
| **Անկախություն** | Կապիտալի կամ քվեարկող բաժնետոմսերի մինչև 25 %-ը պատկանում է մեկ կամ ավելի ընկերության որոնք չեն հանդիսանում փոքր կամ միջին ձեռնարկություններ | | |

Տնտեսական համագործակցության և զարգացման միջազգային կազմակերպությունը (ՏՀԶՄԿ) սահմանում է ձեռնարկություններն աշխատողների թիվը մինչև 19-ը <<գերփոքր>>, մինչև 99 մարդ որպես <<փոքր>>, 100-ից մինչև 499 աշխատողների դեպքում` <<միջին>>, 500 աշխատողից ավելի դեպքում <<խոշոր>>[22]:

Նշվածից բացի, տարբեր երկրներում փոքր և միջին ձեռնարկություններին վերաբերող չափանիշները տարբերվում են: Այսպես, կապիտալի չափը և իրացման ծավալը հանդիսանում է բնորոշող ցուցանիշներ Մեծ Բրիտանիայում, Իտալիայում, Ճապոնիայում, սեփականության տեսակը` Հունգարիայում, շուկայում ոչ

[21] Европа. Специальный выпуск. 2004. –N8.-с. 11
[22] Гурьянов П.А. Критерии определения размеров малого и средного бизнеса/П.А.Гурьянов //Экономика, предпринимательство и право. 2011.-N10 (10). с.3-12

մոնոպոլ վիճակը՝ ԱՄՆ-ում, անկախ կամ կախյալ վիճակը խոշոր արտադրական կառուցվածքներում՝ Ճապոնիայում[23]:

<<Ռուսաստանի Դաշնության փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման մասին օրենքի>>[24] համաձայն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներ են հանդիսանում սպառողական կոոպերատիվները, առևտրային կազմակերպությունները (բացառությամբ պետական և համայնքային միատար ձեռնարկությունների), անհատ ձեռնարկատերերը, գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունները: Համապատասխան պայմանները ներկայացված է 1.1.3 աղյուսակում:

Աղյուսակ 1.1.3

**Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն փոքր և միջին ձեռնարկատիրության որոշման չափանիշները[25]**

| Չափանիշները | Ձեռնարկության տեսակը | | |
|---|---|---|---|
| | **Միկրո** | **Փոքր** | **Միջին** |
| **Աշխատողների միջին թիվը, մարդ** | մինչև 15 | 16-100 | 101-250 |
| **Նախորդ տարում իրացումից հասույթը կամ ակտիվների հաշվեկշռային արժեքը** | մինչև 60 մլն ռուբլի | մինչև 400 մլն ռուբլի | մինչև 1000 մլն ռուբլի |
| **Անկախություն** | Մեկ կամ մի քանի իրավաբանական անձանց մասնակցության չափը, որոնք չեն հանդիսանում փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտ պետք է չգերազանցի 25 %-ը | | |

Մի շարք գիտնականներ նշում են նշված չափանիշների անբավարարությունը: Առաջինը, հաշվի չի առնվում ճյուղային առանձնահատկությունը, երկրորդ հարց է ծագում սահմանային չափերի սահմանման օբյեկտիվության ուղղությամբ: Այսպես, աշխատողների թվի չափերի սահմանումը վիճելի է դառնում 21-րդ դարի տեխնոլոգիաների համատեքստում, որի զարգացածության

[23] Малый бизнес В Росси. Аналитический сборник.-Москва: КОНСШЩЭКО, 1998.-130 с.
[24] О развитии малого и средного предпринимательства в Российской Федерации [Текст]: Федер. закон от 24 июля 2007г. N209-ФЗ//Собр. законодательства Рос. Федерации.-2007.- N31.- с. 4006
[25] О развитии малого и средного предпринимательства в Российской Федерации [Текст]: Федер. закон от 24 июля 2007г. N209-ФЗ//Собр. законодательства Рос. Федерации.-2007.- N31.- с. 4006

մակարդակը ենթադրում է բնակչության աշխատունակ մասի ցածր զբաղվածություն[26,27]:

Հետազոտության ընթացքում մեր կողմից պարզվել է, որ ժամանակակից ագրոբիզնեսի ձեռնարկությունների չափերի սահմանման համար այնպիսի չափանիշների ընդունումը, ինչպիսիք են աշխատողների թվի ընդունումը համարվում է անբավարար: Մասնավորապես գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերությունում, կիրառվող տեխնոլոգիաներից, արտադրության տեսակներից կախված, աշխատողների թիվը կարող է էականորեն տատանվել: Հետևաբար ագրարային ոլորտի ձեռնարկությունների համար աշխատողների թվի չափանիշի կիրառումը կարող է հանգեցնել կազմակերպության ոչ հավաստի և սխալ բնութագրման:

Փոքր և միջին բիզնեսին վերաբերվող տնտեսագիտական գրականությունում նշված է, որ փոքր բիզնեսի տակ հասկացվում է այն ձեռնարկությունները, որոնց կառավարումը կատարվում է մեկ անձի՝ սեփականատերի կողմից: Այդ դեպքում, որպես կանոն, ինքը ձեռնարկատերը մասնակցում է արտադրական գործընթացին, իսկ կազմակերպական գործառույթները և արտադրանքի իրացման հարցերը հաճախ ղեկավարվում է նրա ընտանիքի անդամների կողմից: Միջին ձեռնարկություններում, չնայած նրան, որ սեփականատերը զբաղված է արտադրական գործընթացում, նրա գործառույթները դրանով չի սահմանափակվում, այլ տարածվում է կազմակերպական, իրացման, մատակարարման և այլ հարցերի լուծման ուղղությամբ[28]: Միջին բիզնեսի ձեռնարկություններն իրենցից ներկայացնում են փոքրերից խոշորին անցումային ձև, դրանք հանդիսանում են արդեն բավարար մասնագիտացված և շատ նման խոշոր ձեռնարկություններին:

Տ.Վ. Եպիֆանովայի և Տ.Ա. Սկվորցովայի կարծիքով <<փոքր ձեռնարկությունները, դրանք ձեռնարկություններ են որոնք իրենց ոլորտում չեն գերիշխում, իսկ սեփականատերն անկախ

---

[26] Гурьянов П.А. Критерии определения размеров малого и средного бизнеса/П.А.Гуряьнов //Экономика, предпринимательство и право. 2011.-N10 (10). с.3-12

[27] Литау Е.Я. Среднии бизнес: проблемы определения и предпосылки возникновения.-Режим доступа://http://elibrary.finec.ru/materials_files/38 0034741.pdf

[28] Блинов А. Малыи бизнес в Росси: вчера, сегодня, завтра/ учеб.-метод. пособие/ А. Блинов, Н. Голенко. –Краснодар, 2009. -460с.

տնօրինող է` այդ ճյուղի այլ ֆիրմաների հետ համեմատած փոքր թվով ենթակաների ղեկավար>>: Գերփոքր ձեռնարկությունները ներառում են մեկ, ոչ հաճախ երկու սեփականատեր, ինչպես նաև ընտանեկան բիզնեսի ոլորտ, որպես կանոն ունեն փոքր կապիտալ, տիրապետում են համեստ տեխնիկական և գործարար հմտությունների: Միջին ձեռնարկությունները գտնվում են փոքր և խոշոր ընկերությունների սահմաններում, սովորաբար կառավարվում են սեփականատեր-բաժնետերերի հսկողությամբ` մենեջերի կողմից[29]:

Տնտեսագիտական գրականությունում առանձնացնում են փոքր և միջին ձեռնարկատիրության մի շարք առավելություններ`

- մատչելիությունը ցանկացած քաղաքացու համար` մեկնարկային կապիտալի ոչ մեծ ծավալի պատճառով,
- գործի կազմակերպման համար սկզբնական կապիտալի և շրջանառու միջոցների համեմատաբար ոչ մեծ չափերը,
- բիզնեսի կազմակերպման պարզեցված համակարգ,
- ճկունությունը, շարժունակությունը, շուկայական միջավայրի փոփոխության արագ արձագանքումը,
- կառավարման արդյունավետությունը և վերադիր ծախսերի նվազեցումը և այլն:

Ագրարային ոլորտում շուկայական հարաբերությունների ձևավորման և հետագա զարգացման փուլերում փոքր և միջին գործարարությունը Հայաստանի համար ևս առանձնահատուկ դեր և նշանակություն է ստացել` իր նպաստը բերելով երկրի կայուն սոցիալ-տնտեսական և գյուղական վայրերի զարգացմանը: Հատկապես վերջին մի քանի տարիների ընթացքում ՓՄՁ կառավարման գործընթացում արձանագրվել են դրական արդյունքներ[30]:

Տ.Վ. Եպիֆանովան և Տ.Ա. Սկվորցովան փոքր և միջին ձեռնարկատիրության հիմնական առանձնահատկություններից առանձնացնում են`

---

[29] Основы предпринимательской деятельности в Российской Федерации: монография / Т.В. Епифанова, Т.А. Скворцова.-Ростов-на-Дону: Изд-во Южного федерального университета, 2011. -280 с.

[30] Աբրահամյան Վ.Ս. ՀՀ ագրարային ոլորտի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրները (Արմավիրի մարզի օրինակով): Տնտեսագիտութ. թեկնածուի գիտակ. աստիճանի համրասեղմագիր` Ը.00.02/ Երևան, 2013.- էջ 3

- սեփականատիրական հարաբերությունների և կառավարման անբաժանելիությունը, ղեկավարները հանդիսանում են կապիտալի հիմնական մասի հիմնադիրներ կամ կապիտալի հիմնական մասի տնօրինող,
- կառավարման օբյեկտի անբաժանելիությունը, տնտեսական սուբյեկտը կառավարում է մեկ ձեռնարկություն,
- ձեռնարկության աշխատողների թիվը հնարավորություն է տալիս ֆիրմայի ղեկավարի և աշխատողների միջև ստեղծել ուղղակի էմոցիոնալ-հոգեբանական կապ:

ՈՒսումնասիրությունները ցույց են տալիս, որ նոր տեսակի սեփականության ձևի անհրաժեշտությունը, ինչպիսին է փոքր և միջին ձեռնարկատիրությունը, պայմանավորված է շուկայական հարաբերությունների զարգացմամբ, երկրների տնտեսությունում բարեփոխումների իրականացմամբ, որը իր հերթին հանդիսանում է տնտեսապես նպատակահարմար: Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ոլորտի փոքր և միջին ձեռնարկատիրության սոցիալ-տնտեսական դերը ինչպես առանձին գոտիների, այնպես էլ պետության համար արտահայտվում է հետևյալ ուղղություններով`

- մրցակցային միջավայրի ստեղծում,
- տարածաշրջանների, գոտիների ներդրումային և գիտատեխնիկական ակտիվության բարձրացում,
- գյուղական տարածքներում նոր աշխատատեղերի ստեղծում, համապատասխան բնակչության սոցիալական պաշտպանվածության բարձրացում,
- շուկայում բարձր որակի ապրանքների մատակարարման և նոր ապրանքների ու ծառայությունների ներդրման միջոցով` սպառողական պահանջարկի առավել լիարժեք ապահովում,
- իրացման նոր շուկաների կամ շուկայի նոր հատվածի ստեղծում,
- տեղական (լոկալ) բնական ռեսուրսների յուրացում,
- ռեգիոնալ և տեղական բյուջեներ հարկային մուտքերի ավելացում,

- գյուղական բնակավայրերում ֆինանսա-վարկային ենթակառուցվածքների, կոոպերատիվների ձևավորում և զարգացում,
- ֆինանսական ռեսուրսների վերաբաշխում,
- գյուղական տարածքների սոցիալ-տնտեսական զարգացում,
- խոշոր բիզնեսի զարգացման նպաստում:

Փոքր և միջին ձեռնարկությունները կարող են գոյություն ունենալ ինչպես մի քանի ամիս, այնպես էլ առավել երկար ժամանակահատված, դրանք կարող են դառնալ խոշոր արտադրական կառույցներ, ընդլայնել իրենց արտադրության մասշտաբները կամ բարելավել արտադրանքի որակական հատկանիշները՝ մնալով փոքր բիզնեսի ներկայացուցիչ:

Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել այն իրավիճակը, որ փոքր և միջին բիզնեսի ձեռնարկություններն օբյեկտիվորեն տնտեսապես առավել անկայուն են շուկայական տնտեսությունում, խոշոր արտադրական կառույցների նկատմամբ: Դա կապված է նրա հետ, որ փոքր ձեռնարկություններն առավել ենթակա են ներքին և արտաքին ձեռնարկատիրական միջավայրին:

Փոքր և միջին բիզնեսի անկայունության մասին նշում են տարբեր հետազոտողներ <<... Օբյեկտիվորեն փոքր ֆիրման առավել անկայուն է տնտեսական կոնյունկտուրայի տատանումներին, սեփական կուտակումները շատ փոքր են, դիվերսիֆիկացման (բազմազանեցման) մակարդակը շատ ցածր է, նույնիսկ միասնական ապրանքի կամ ծառայության (կամ միասնական տեսակային խմբում) որով ֆիրման հանդես է գալիս շուկայում, այն չի կարող նվաճել ինչ որ նշանակալի բաժին>>[31]:

Շուկայական հարաբերությունների պայմաններում փոքր և միջին ձեռնարկությունների կայուն զարգացումը բնութագրվում է մշտական փոփոխվող մրցակցային միջավայրում հարմարվելու ունակությամբ:

Արևմտյան երկրների փորձը ցույց է տալիս, որ նորարարական ձեռնարկատիրության հիմքը հանդիսանում է փոքր բիզնեսի ձեռնարկությունները: Սակայն զարգացող երկրներում, ինչպես

---
[31] Разумов И. Мелкие фирмы в США: Экономика и управление:/ И. Разумов.-Москва: Наука, 1989. с. 87

նաև մեր հանրապետությունում, նորարարկան առումով ակտիվ ձեռնարկություններն իրեց զարգացածությամբ հետ են մնում արևմտյան երկրների նմանօրինակ ձեռնարկություններից, որտեղ վերջիններս վաղուց հանդիսանում են ներդրումների հիմնական օբյեկտներ:

Նորարարական փոքր բիզնեսի զարգացմանը խոչընդոտող պատճառների մեջ առանձնանում են սեփական ֆինանսական միջոցների անբավարարությունը, ռիսկի բարձր մակարդակը, ոչ կայուն տնտեսական վիճակը, պետական ֆինանասական աջակցության անբավարարությունը, նորմատիվ-տնտեսական բազայի անկատարությունը, տեխնոլոգիաների առևտրայնացման ոլորտի ենթակառուցվածքների թերզարգացածությունը և այլն:

Գյուղատնտեսական մթերքների վերամշակման ոլորտի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը պայմանավորված է որոշակի տնտեսական պայմաններով և գործոններով, որը բնորոշ է ագրարային սեկտորին՝ գյուղատնտեսական արտադրության բնակլիմայական կախվածությունը, հիմնական պարենամթերքների նկատմաբ ինքնաբավության ապահովման երկրի կողմնորոշումը, գյուղական բնակավայրերում բարդ ժողովրդագրական իրավիճակը՝ գյուղական բնակչության թվաքանակի կրճատումը, գոյություն ունեցող և պոտենցիալ աշխատանքային ռեսուրսների հիմնախնդիրը, գյուղատնտեսական արտադրության սահմանափակվածությունը:

Գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության ոլորտի փոքր և միջին ձեռնարկատիրության արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ է ռազմավարական միջոցառումների համալիր: Փոքր և միջի ձեռնարկատիրության արդյունավետ գործունեության ապահովման համար ռազմավարական ուղղությունների կանխորոշումը նպատակահարմար է դիտարկել հեռանկարային զարգացման պրիզմայի ձևաչափի ընդգրկման տեսանկյունից (գյուղատնտեսական կոոպերատիվների համակարգ, տնտեսավարման փոքր ձևերի մասնակցություն ինտեգրացիոն միավորումներին, նորարարկան մշակումների յուրացումը) և դրանց պետական ինստիտուցիոնալ աջակցություն (նորմատիվ-տնտեսական բազայի կատարելագործում, պետական ֆինանսական աջակցություն,

արտադրական, շուկայական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացում և այլն):

Գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության, մասնավորապես կաթի վերամշակման ոլորտի փոքր և միջին ձեռնարկատիրության հետագա կայուն զարգացումը կախված է ընդլայնված վերարտադրության ապահովման, մրցունակ արտադրության ստեղծման համար միաժամանակյա պայմանների համալիրի ձևավորումից: Վերամշակող արդյունաբերության, այդ թվում` կաթի վերամշակող փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտերի առկայությունը, դրանց տեղաբաշխումը, կիրառվող տեխնոլոգիաների կատարելության մակարդակը, ապրանքների տեսականին բնորոշում են ներկայիս զարգացածության մակարդակը, որի համակողմանի ուսումնասիրումը դրանց արդյունավետության բարձրացման կանխորոշման նախապայմաններից է:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը հանդիսանում է պետական քաղաքականության հեռանկարային ուղղություններից մեկը, ինչպես ամբողջությամբ տնտեսության, այնպես էլ գյուղատնտեսական մթերքների վերամշակման ոլորտի համար: Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը ապահովում է երկրի սոցիալ-տնտեսական համակարգի զարգացումը, ստեղծում է մեծ թվով աշխատատեղեր, բարձրացնում է գյուղական տարածքների բնակչության սոցիալական պաշտպանվածությունը, պայմաններ է ստեղծում գյուղատնտեսության համապատասխան ճյուղի զարգացման համար, ստեղծում է մրցունակ միջավայր, ապահովում է սպառողներին նոր արտադրատեսակներով և ծառայություններով, նպաստում է խոշոր բիզնեսի զարգացմանը:

## 1.2. Հայաստանի Հանրապետությունում փոքր ու միջին ձեռնարկատիրության չափանիշները և իրավական հիմքերը

Վերջին տարիներին մեծ աշխատանքներ են իրականացվել ձեռնարկատիրական գործունեության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծման ուղղությամբ: Կարելի է ասել, որ

հանրապետությունում հիմնականում ստեղծվել է ՓՄՁ գործունեության կարգավորման օրենսդրա-իրավական դաշտը[32]:

Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների չափորոշիչները սահմանվում է <<Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին>> ՀՀ օրենքով[33]:

Նշված օրենքի նպատակն է սահմանել փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ նաև` ՓՄՁ) սուբյեկտների չափորոշիչները, պետական աջակցության հիմնական ուղղությունները և այդ ոլորտում պետական քաղաքականության իրականացման սկզբունքները:

<<Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին>> ՀՀ օրենքը չի տարածվում վարկային, ապահովագրական և ներդրումային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների, գրավատների, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, խաղատների և շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող սուբյեկտների, ինչպես նաև դուստր և կախյալ տնտեսական ընկերությունների վրա[34]:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտները դասակարգվում են հիմք ունենալով հետևյալ չափանիշները` աշխատողների միջին ցուցակային թիվը, նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների դասակարգման չափանիշները ներկայացված են 1.2.1 աղյուսակում:

---

[32] Р.А. Макарян-К вопросу о государственном содействии малому и среднему предпринимательству в Армении//. ИЗВЕСТИЯ Государственного аграрного университета Армении, N4, 2007, с. 169

[33] <<Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին>> ՀՀ օրենք: 28 դեկտեմբերի, 2000թ., ՀՕ 121

[34] Նույն տեղում, հոդված 1

Աղյուսակ 1.2.1

**ՀՀ-ում փոքր և միջին սուբյեկտների դասակարգման չափանիշները**[35]

| Տնտեսավարող սուբյեկտները | Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը | Նախորդ տարվա գործունեությունից ստացվող հասույթը | Նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը |
|---|---|---|---|
| Գերփոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր | մինչև 10 մարդ | չի գերազանցում 100 մլն դրամը | չի գերազանցում 100 մլն դրամը |
| Փոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր | մինչև 50 մարդ | չի գերազանցում 500 մլն դրամը | չի գերազանցում 500 մլն դրամը |
| Միջին՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր | մինչև 250 մարդ | չի գերազանցում 1500 մլն դրամը | չի գերազանցում 1000 մլն դրամը |

Ներկայացված չափանիշներից ակնհայտ է, որ ՀՀ օրենսդրությամբ փոքր և միջին ձեռնարկատիրության տնտեսավարող սուբյեկտները ստորաբաժանվում են երեք խմբի՝ գերփոքր, փոքր և միջին: Տվյալ բաժանման համար հիմք է ընդունվում աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մյուս չափանիշը նախորդ տարվա գործունեությունից ստացվող հասույթն, նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքն է: Ընդ որում գերփոքր և փոքր տնտեսավարող սուբյեկտների համար նախորդ տարվա գործունեությունից ստացվող հասույթի և նախորդ տարեվերջի դրությամբ հաշվեկշռային արժեքի չափանիշի

35 <<Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին>> ՀՀ օրենք: 28 դեկտեմբերի, 2000թ., ՀՕ 121 (հոդված 2)

սահմանները համընկնում են, իսկ միջին տնտեսավարող սուբյեկտների համար սահմանները տարբեր են, այն համապատասխանաբար սահմանվել է մինչև 1500 և 1000 մլն դրամ:

ՀՀ օրենսդրությամբ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների տարբերակման այլ չափանիշներ չեն սահմանվել, մասնավորապես չի ընդգրկվում չափանիշներ ոլորտային, մասնագիտացման ուղղություն, երկրի տնտեսության համար գերակայություն և այլն:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված է նաև փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ուղղությունները[36], որոնք հիմնականում հետևյալն են`

- իրավական բարենպաստ դաշտի ձևավորումը,
- ֆինանսական և ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը,
- աջակցող ենթակառուցվածքների ստեղծմանը ու զարգացմանը նպաստելը,
- տեղեկատվական և խորհրդատվական օգնությունը,
- արտաքին տնտեսական գործունեության խթանումը,
- նորարարական գործունեության և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությունը,
- բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը,
- կադրերի պատրաստումը և վերապատրաստումը,
- վիճակագրական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման պարզեցված համակարգերի ստեղծումը,
- պետական գնումների իրականացման գործընթացում աջակցությունը:

Վերը նշվածից ակնհայտ է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանվել է փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության լայն շրջանակ սկսած իրավական դաշտի ձևավորումից, ֆինանսական ներդրումային աջակցությունից, ենթակառուցվածքների ստեղծումից մինչև պետական գնումների գործընթացում աջակցությունը:

---

36 <<Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին>> ՀՀ օրենք: 28 դեկտեմբերի, 2000թ., ՀՕ 121 (հոդված 3)

Պետական աջակցությունը համակարգված իրականացնելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված է փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության պետական ծրագիր[37]: Ծրագիրը մշակում և հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նշվում է պետական բյուջեում առանձին տողով:

Ծրագիրը մշակվում է օրենսդրությամբ սահմանված հիմնական ուղղություններին համապատասխան` ելնելով տվյալ ժամանակահատվածում զարգացման գերակայություններից, ներառյալ` փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում նոր աշխատատեղերի ստեղծումը: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: Ծրագրի կատարման հաշվետվությունը ներկայացվում է տվյալ տարվա պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության հետ:

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը կանոնակարգող մյուս կարևոր փաստաթղթերից է <<Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթներն է>>[38]:

Փաստաթուղթը բաղկացած է հինգ բաժիններից, մասնավորապես ՓՄՁ ոլորտը Հայաստանում, ՓՄՁ հիմնախնդիրները Հայաստանում, ՓՄՁ զարգացման քաղաքականության և ռազմավարության նպատակները, ՓՄՁ զարգացման քաղաքականության և ռազմավարության իրականացման հիմնական ուղղությունները և ՓՄՁ քաղաքականության իրականացման կառուցվածքային ապահովումը:

Հիշատակված փաստաթղթով ՓՄՁ զարգացման քաղաքականության նպատակները տարանջատվել է տնտեսական, սոցիալական և քաղաքական նպատակների: Ընդ որում տնտեսական նպատակներ են դիտարկվել հետևյալը`

- արտադրության ծավալների զգալի աճը,
- ստվերային տնտեսության կրճատումը,

---

[37] Նույն տեղում (հոդված 4)

[38] <<Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթների մասին>> 2000թ. օգոստոսի 3-ի ՀՀ կառավարության նիստի N32 արձանագրություն

- ձեռնարկությունների մրցակցության բարձրացումը,
- հայրենական ապրանքների որակի աճը,
- ներմուծման կրճատումը, արտահանման ծավալների աճը,
- ներքին նյութատեխնիկական ռեսուրսների առավելագույն օգտագործումը,
- մարզերի տնտեսական զարգացումը,
- արդյունաբերական հզորությունների վերագործարկումը և վերակառուցումը,
- ֆինանսական միջոցների հոսքը արտադրության ոլորտ,
- ապրանքատեսակների դիվերսիֆիկացիան:

Սոցիալական նպատակներ են դիտարկվել՝

- նոր աշխատատեղերի ստեղծումը,
- բնակչության եկամուտների աճը և վճարունակության բարձրացումը,
- հասարակության մեջ սոցիալական արդարության ամրապնդումը,
- բնակչության արտահոսքի նվազումը և ներհոսքի խթանումը,
- հասարակությունում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավումը,
- երկրում ներքին միգրացիոն գործընթացների կարգավորումը:

Հիմնադրույթներով քաղաքական նպատակներ են դիտարկվել՝

- սահմանամերձ շրջանների ամրապնդումը,
- միջին խավի ձևավորումն ու ամրապնդումը,
- պետության միջազգային վարկի բարձրացումը:

Հիմնադրույթների <<Հայաստանում ՓՄՁ զարգացման քաղաքականության և ռազմավարության իրականացման հիմնական ուղղությունները>> բաժնում նշվում է, որ <<Կենսունակ ՓՄՁ հատվածի զարգացման համար նախապայման է բարենպաստ մակրոտնտեսական միջավայրի առկայությունը, վերահսկվող սղաճը, առողջ մրցակցային դաշտի առկայությունը և մի շարք այլ պայմաններ, որոնք բոլորն էլ այս կամ այն չափով պետական համակարգված տնտեսական քաղաքականության արդյունք են>>[39]: Հիմնադրույթներում ՓՄՁ զարգացման քաղաքականության

---

[39] <<Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթների մասին>> 2000թ. օգոստոսի 3-ի ՀՀ կառավարության նիստի N32 արձանագրություն

հիմնական ուղղությունները դիտարկվել է՝ իրավական, ֆինանսական, արտադրության զարգացման, տարածաշրջանային զարգացման, տեղեկատվական և խորհրդատվական ապահովման, ձեռնարկության սոցիալական վարկի բարձրացման, բիզնես ուսուցման և կադրերի վերապատրաստման համատեքստում: Մասնավորապես <<Արտադրության զարգացման>> ուղղությամբ նախանշվում է հետևյալը. <<Արտադրության ոլորտը և մասնավորապես արդյունաբերությունը, որպես երկրի տնտեսության զարգացման հիմնական ուղղություններից մեկը, իր արտացոլումը պետք է գտնի ՓՄՁ քաղաքականության մեջ և իրականացվի առանձին ծրագրերի և միջոցառումների ճանապարհով:

ՓՄՁ քաղաքականության իրականացման հիմնական ուղղություններից մեկը հանդիսացող արտադրական ոլորտի ընդլայնումն ու զարգացումը կնպաստի ՓՄՁ քաղաքականության հիմնական նպատակների իրագործմանը, այն է՝ արտադրության ծավալների աճ, առևտրային հաշվեկշռի դեֆիցիտի կրճատում, տեղական հումքի արդյունավետ օգտագործում, արտահանման ծավալների մեծացում, պարապուրդի մատնված արտադրական հզորությունների վերագործարկում, արտադրական հզորությունների և արտադրվող ապրանքների դիվերսիֆիկացիա և այլն:

Արդյունաբերական քաղաքականության տարբեր ուղղություններով արված առաջարկությունները հնարավորություն են տալիս բացահայտելու խոշոր և փոքր ու միջին ձեռնարկությունների միջև համագործակցության հետագա զարգացման, նրանց միջև փոխադարձ կապերի ընդլայնման հնարավորությունները և տնտեսական զարգացման գերակայությունները:

Արտադրական ոլորտի արդյունավետ գործող ՓՄՁ-երի քանակի և գործառույթների շրջանակի ընդլայնման համար անհրաժեշտ է պետական աջակցության քաղաքականության իրականացման բոլոր հնարավոր մեխանիզմներով: Մասնավորապես՝ պետական գերակա ուղղություններում արտադրական ՓՄՁ-երին տրվող վարկերի երաշխավորումն այդ մեխանիզմներից է:

ՀՀ ՓՄՁ քաղաքականությունն ու ռազմավարությունն իրականացնող կառույցները պետք է պարբերաբար արտադրության ոլորտի ՓՄՁ-երին ապահովեն նոր տեխնոլոգիաների, նորարարական նորամուծությունների, համաշխարհային շուկայում հայտնված նոր արտադրատեսակների վերաբերյալ տեղեկատվությամբ:

Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման անհրաժեշտ նախապայմաններից է հանդիսանում ձեռնարկատիրական ռիսկերի նվազեցումը: Ռիսկերի զսպման և նվազեցման համար անհրաժեշտ է բացահայտել հանրապետությունում առկա ռիսկերի հիմնական տեսակները, ուսումնասիրելով և վերլուծելով դրանց մակարդակը և ազդեցության աստիճանը փոքր և միջին ձեռնարկատիրության վրա[40]:

Մարզերում հիմնադրվող վերամշակող արտադրությունների համար անհրաժեշտ է ստեղծել առավել բարենպաստ ռեժիմ, որը հնարավորություն կտա բարձրացնել տնտեսապես թույլ զարգացած մարզերը և առավել արդյունավետ օգտագործել տեղական հանքահումքային ռեսուրսները: Արտադրական ՓՄՁ-երի ընդլայնումը մարզերում կլուծի ևս մի կարևոր հիմնահարց, այն է՝ գյուղմթերքների վերամշակման արտադրության զարգացում և երկրի պարենային ապահովության հիմնախնդրի մեղմացում: Արդեն այսօր նկատելի է սննդի վերամշակման փոքր եւ միջին արտադրությունների զարգացման հեռանկարները և դրա ազդեցությունը գյուղատնտեսությունում առկա հիմնախնդիրների լուծման և մեղմացման գործընթացին (գյուղատնտեսական մթերքների գնումների ապահովում, դրանց արդյունավետ վերարտադրություն, ճյուղի ամրապնդում եւ այլն):

Արտադրական ոլորտի զարգացման համար կարևորվում է նաև պարապուրդի

[40] Ռ.Ա. Մակարյան, Ա.Մ. Բաղդասարյան-Փոքր և միջին ձեռնարկատիրության ռիսկայնության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում//: Ագրոգիտություն 3-4, 2012թ. էջ 148

մատնված և (կամ) անարդյունավետ աշխատող խոշոր ձեռնարկությունների վերակազմավորումը (ռեստրուկտուրիզացիան)>>[41]:

ՓՄՁ ոլորտում ներկայիս խնդիրներին համահունչ համակարգված քաղաքականություն իրականացնելու համար ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N44 արձանագրային որոշմամբ ընդունվել է <<Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018թթ. ռազմավարությունը>>[42]: Վերջինիս, ուսումնասիրվող թեմային առնչվող մասով կանդրադառնանք առանձին:

2001թ. ի վեր հանրապետությունում մշակվում, ընդունվում և իրականացվում են **ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրեր**, որոնք նպատակաուղղված են իրականացնելու «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով ամրագրված ՓՄՁ ոլորտի պետական աջակցության հիմնական ուղղությունները:

Մասնավորապես <<Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին>> 2015թ. ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 5-ի N 217-Ն որոշմամբ:

Ծրագիրը ներառում է հետևյալ կառուցվածքային բաղադրիչները` նախաբան, ծրագրի մշակման հիմքերը, ծրագրի նպատակները, ծրագրի իրականացման սկզբունքները, ծրագրային միջոցառումները (ուղղությունները), վերջինս ներառում է հետևյալ բաղադրիչները` ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում, գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում), գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, ֆինանսական և ներդրումային աջակցություն, տեղական տնտեսական զարգացում, ոլորտային բիզնեսներին աջակցություն, կանանց

---

[41] <<Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթների մասին>> 2000թ. օգոստոսի 3-ի ՀՀ կառավարության նիստի N32 արձանագրություն

[42] ՀՀ կառավարության 2015թ. հոկտեմբերի 1-ի <<Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018թթ. ռազմավարությանը հավանություն տալու մասին>> N44 արձանագրային որոշում

ձեռներեցության աջակցություն, տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում, միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում: Ծրագրի բաղադրիչներից է ֆինանսական ապահովմանն վերաբերող մասը: Փաստաթղթի կարևոր բաղկացուցիչ մասերից է ծրագրի միջոցառումների իրականացման ժամանակացույցը:

Նպատակահարմար ենք գտել անդրադառնալ ծրագրի դրույթների հակիրճ վերլուծությանը:

ՓՄՁ-ի սուբյեկտներին ուղղված աջակցության ծրագրերը հիմնված են ՀՀ կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականության հիմնարար սկզբունքների վրա և նպաստում են երկրի, հատկապես նրա հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը:

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2015 թվականի ծրագրի **մշակման և իրականացման հիմքը** «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքն է:

Ծրագրի նպատակներն են՝ պետական ուղղակի աջակցության մեխանիզմների (գործիքների) միջոցով երկրում ՓՄՁ-ի զարգացման խթանումը, ՓՄՁ-ի զարգացման միջոցով երկրի, հատկապես նրա հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը նպաստելը, ՓՄՁ-ի զարգացման միջոցով երկրի տնտեսության բազմազանեցմանը նպաստելը և զբաղվածության ու ինքնազբաղվածության մակարդակի բարձրացման ապահովումը, ՓՄՁ-ի սուբյեկտներին պետական աջակցությանը նպատակաուղղված շրջանակների բազմազանեցումը, ինչպես նաև ՓՄՁ-ի սուբյեկտներին ցուցաբերվելիք պետական աջակցության նպատակայնության ու հասցեականության ապահովումը:

Ծրագրի նպատակների իրագործման ապահովման համար նախատեսված են`

- գործարար միջավայրի բարելավմանը զուգընթաց գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտների ձեռներեցությամբ զբաղվելու, ինչպես նաև նրանց ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնում` նախապատվությունը տալով ՀՀ մարզերին` հաշվի առնելով ՀՀ տարածքային զարգացման առանձնահատկությունները.
- պետական աջակցության առկա մեխանիզմների (գործիքների) (ֆինանսական, տեղեկատվական, խորհրդատվական, ուսուցողական և այլն) կիրառման շարունա-կականության և արդիականացման ապահովում.
- պետական աջակցության նոր մեխանիզմների (գործիքների) ներդրում, մասնավորապես, տեղական տնտեսական զարգացում ու ոլորտային բիզնեսներին աջակցություն.
- գործունեության միջազգայնացում, մասնավորապես, հեռանկարային և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցություն` գործող միջազգային կառույցներին և ցանցերին ինտեգրում.
- ռեսուրսախնայողական և մաքուր արտադրության սկզբունքների կիրառման խրախուսում.
- ծրագրի իրականացման շրջանակներում ավելի շատ ՓՄՁ-ի սուբյեկտների ներգրավում և նրանց ցուցաբերվող պետական աջակցության շրջանակների ընդլայնում.
- աջակցող ենթակառուցվածքների հզորացման միջոցառումների իրականացում:

Ծրագրի **իրականացման սկզբունքներն են`**

- իրականացվում է ծրագրով նախատեսված ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցող կառույցների միջոցով.
- նախապատվությունը տրվում է արտադրության և ծառայությունների ոլորտում գործող, նորարարություններ ներդնող, ժամանակակից ու մաքուր տեխնոլոգիաներ կիրառող, հեռանկարային և արտահանման ներուժ

ունեցող` գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցությանը.

- նշանակալի մասն ուղղվում է Երևան քաղաքից դուրս` Հայաստանի Հանրապետության մարզերում, հատկապես հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերում գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ցուցաբերմանը.
- միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ փոխհամաձայնությունների շրջանակներում մշակվում և իրականացվում են ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրեր` ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ծրագրային միջոցառումները (ուղղությունները) են`

**Աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում:** Սույն ծրագրային միջոցառման (ուղղության) շրջանակներում իրականացվում են աշխատանքներ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների` «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի աշխատողների մասնագիտական հմտությունների զարգացման և որակավորման բարձրացման, ինչպես նաև աջակցության ծրագրերում գործընկեր կազմակերպությունների ներգրավման ուղղությամբ:

**Գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում):** Իրականացվում են սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության ծրագրեր, որոնք ընդգրկում են հետևյալ բաղադրիչները` մասնակիցների ուսուցում, վերապատրաստում, մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում, մանրակրկիտ ընտրության փուլ անցած գաղափարների կյանքի կոչման նպատակով մշակվում է գործարար ծրագրեր: Այդ ամենի արդյունքում սկսնակ գործարարները ձեռք կբերեն իրենց բիզնեսի, անձնակազմի և ֆինանսական միջոցների կառավարման (պլանավորման) ու

շուկայավարման գիտելիքներ և համապատասխան գործարար հմտություններ:

**Գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն**: Այն իրականացվում է հետևյալ ուղղություններով՝ ՓՄՁ-ի սուբյեկտների առավել լայն շրջանակների համար գործարար տեղեկատվության և խորհրդատվության հասանելիու-թյան և մատչելիության ապահովման շրջանակներում ՀՀ բոլոր մարզերում եռամսյակային պարբերականությամբ խմբային և անհատական հանդիպումներ կազմակերպում ՓՄՁ-ի սուբյեկտների ներկայացուցիչների (գործարարների) հետ:

**Ֆինանսական և ներդրումային աջակցություն:** ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության զարգացման համար կարևոր խնդիր է ֆինանսական (վարկային) ռեսուրսների հասանելիությունը: Այդ նպատակով ծրագրի շրջանակներում 2015 թվականին շարունակվում է ֆինանսական և ներդրումային աջակցության մեխանիզմների (գործիքների) կիրառումը և դրանց ընդլայնումը: Դրա հետ մեկտեղ ծրագրի շրջանակներում հաստատվում է համագործակցություն մի շարք նոր ֆինանսական կազմակերպությունների հետ:

Ծրագրային այս միջոցառումը (ուղղությունը) ներառում է հետևյալ ֆինանսական մեխանիզմները (գործիքները)՝

- ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրում).
- սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրում).
- գործարար նախաձեռնություններին աջակցություն.
- ՓՄՁ-ի սուբյեկտների ուղղակի վարկավորում և սեփական կապիտալի ֆինանսավորում:

**Տեղական տնտեսական զարգացում** միջոցառման (ուղղության) նպատակն է՝ ՀՀ համայնքների համաչափ զարգացման խնդիրների լուծման նպատակով մասնակցային պլանավորման և արդյունքների մասնակցային գնահատման մեթոդների վրա հիմնված տարածաշրջանային և համայնքային տնտեսական զարգացման ծրագրերի իրականացումը, ինչպես նաև տեղական հումքի, աշխատուժի, ավանդույթների և գիտելիքի վրա հիմնված մրցունակ

արտադրության խթանումը, տեղական ապրանքանիշերի ձևավորումը և հետագա առաջմղումը՝ նորարարական մոտեցումների կիրառմամբ: Դրա հետ մեկտեղ տեղական տնտեսական զարգացումը միտված է բացահայտելու ՀՀ համայնքների տնտեսական ներուժը և դրա հիման վրա ձեռնարկելու ՀՀ տնտեսության զարգացման նախաձեռնություններ, որոնք կբարձրացնեն ՀՀ համայնքների մրցունակությունը և ՀՀ տնտեսության ճյուղերի արդյունավետությունը:

**Ոլորտային բիզնեսներին աջակցության** նպատակն է տեղական հումքի, աշխատուժի, ավանդույթների և գիտելիքի վրա հիմնված տնտեսության՝ հատկապես արտահանման ներուժ ունեցող մրցունակ ոլորտների զարգացումը և ներմուծմանը փոխարինող տեղական արտադրությունների ձևավորման խթանումը՝ օրինակելի գործարար մոդելների ներդրման միջոցով:

Ոլորտային բիզնեսներին աջակցության շրջանակներում ստեղծվում և գործարկվում են նոր օրինակելի գործարար մոդելներ, ինչպես նաև օժանդակություն է ցուցաբերվում արդեն իսկ ստեղծված ոլորտային բիզնեսներին: Մասնավորապես, շարունակվում է աջակցություն ցուցաբերվել չրագործությամբ, ջերմոցային ու սառնարանային տնտեսություններով ու պանրի արտադրությամբ զբաղվող բիզնեսներին, ինչպես նաև կմեկնարկեն այլ մրցունակ ենթաճյուղերի աջակցության աշխատանքները:

**Կանանց ձեռներեցության աջակցություն** համատեքստում Ասիական զարգացման բանկի տեխնիկական աջակցության շրջանակներում իրականացվող «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագրի նպատակն է բարելավել կանանց ձեռնարկատիրական կարողությունները և բարձրացնել ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը կին գործարարների համար:

**Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում**: Աջակցության տվյալ ուղղության շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից կօգտագործվեն Հայաստանում ձեռնարկությունների եվրոպական ցանցի (այսուհետ՝ ՁԵՑ) գործարար համագործակցության կենտրոնի հնարավորությունները,

ինչպես նաև կուժեղացվեն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մասնագետների կարողությունները՝ ՓՄՁ-ի սուբյեկտներին՝ համապատասխան հարցերին վերաբերող գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ցուցաբերման ուղղությամբ:

ՁԵՑ-ի գործունեության նպատակն է աջակցել անդամ երկրներում գործող ՓՄՁ սուբյեկտներին՝ վերջիններիս նորարարական ներուժը զարգացնելու և Եվրամիության շրջանակներում գործարարության խթանման համար իրականացվող գործընթացներին մասնակից դառնալու նպատակով:

**Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում:** Ծրագրային միջոցառումների (ուղղությունների) իրականացման արդյունավետության բարձրացման ու ընդլայնման և այդ համատեքստում լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով՝ ինչպես ընթացքի մեջ գտնվող ծրագրերի շրջանակներում, այնպես էլ՝ նոր ծրագրերի մշակման ու իրականացման, նաև միջազգային լավագույն փորձի փոխանցման նպատակով աշխատանքներ են իրականացվում Հայաստանում ՓՄՁ-ի զարգացմանն ուղղված համապատասխան ծրագրեր իրականացնող միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ համագործակցության ընդլայնման, ինչպես նաև նոր ծրագրային առաջարկների մշակման ու իրականացման ուղղությամբ:

**Ծրագրի ֆինանսական ապահովում:** ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության տարեկան ծրագրերի ֆինանսավորումը կատարվում է ՀՀ պետական բյուջեից՝ առանձին տողով: Այն կարող է իրականացվել (համալրվել) նաև օրենքով չարգելված այլ ֆինանսական միջոցների հաշվին: Ծրագրի իրականացման համար նախատեսված էր ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից հատկացնել 152.3 մլն դրամ:

Ծրագրով նախատեսված ծրագրային միջոցառումների (ուղղությունների) ֆինանսական ապահովումն իրականացվում է այլ ֆինանսական միջոցների հաշվին, մասնավորապես՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի եկամուտների, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միավորված դրամագլխի միջոցների (1,787,082.7 հազ. դրամ), Ասիական զարգացման բանկի հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող

ֆինանսական միջոցների (900,000.0 հազ. դրամ), «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության միջոցների (10,288,100.0 հազ. դրամ) և այլն[43]:

Ծրագրի ժամանակացույցը ներառում է 9 միջոցառում պատասխանատու կատարողներով և ժամկետներով:

Այսպիսով ներկայացվեց ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում կիրառվող չափանիշները և իրավա-օրենսդրական հիմնական փաստաթղթերը, որը իրավական հիմք է ծառայելու գյուղատնտեսական մթերքների վերամշակման ոլորտում ՓՄՁ հիմնախնդիրների գնահատման և դրանց լուծման ուղիների առաջադրման համար:

## 1.3. ՀՀ գյուղատնտեսական հումքի վերամշակման ոլորտի փոքր ու միջին ձեռնարկատիրության առանձնահատկությունները

Հայաստանի ագրովերամշակող արդյունաբերությունը դեռևս խորհրդային շրջանից սկսած համարվում է երկրի տնտեսության կարևորագույն և բարձր արդյունավետությամբ աշխատող ճյուղերից մեկը, որը կարևորվում է նաև գյուղական բնակչության զբաղվածության ու եկամուտների ապահովման առումով և նպաստում է պարենային, տնտեսական անվտանգության և ագրոպարենային շուկայի ձևավորմանը, ինչպես նաև ապահովում է ազգաբնակչությանն անվտանգ, որակյալ մթերքների երաշխավորված ու կայուն մատակարարումը:

Տնտեսական բարեփոխումների սկզբին հաջորդող՝ ագրարային բարեփոխումների առաջին փուլում Հայաստանը հայտնվել էր տնտեսական շրջափակման մեջ, և ագրովերամշակող արդյունաբերության կազմակերպությունները հիմնականում դադարեցրել էին իրենց գործունեությունը:

Սկսած 1998 թվականից, մասնավոր հատվածի լրացուցիչ ներդրումների և միջազգային կազմակերպությունների

43 ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 5-ի <<Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին>> 2015թ. ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին>> N 217-Ն որոշում

աջակցությամբ, զգալիորեն բարելավվել է գյուղատնտեսական մթերք վերամշակող արդյունաբերության վիճակը:

Ներկայումս հանրապետության գյուղատնտեսական մթերք վերամշակող արդյունաբերության ոլորտում գործող կազմակերպություններն աստիճանաբար հարմարվում են շուկայական տնտեսության պայմաններին: Նշված ձեռնարկություն-ներն իրենց առջև խնդիր են դրել բարձրացնել աշխատանքի արդյունավետությունն ու թողարկվող արտադրանքի մրցունակությունը և դիվերսիֆիկացնել արտադրությունը: Որոշ զարգացող ընկերություններ հաջողությամբ մրցում են ինչպես ներքին և ԱՊՀ անդամ երկրների, այնպես էլ միջազգային պարենային շուկաներում և ներդրումներ են կատարում արտադրության հետագա զարգացման համար:

Վերամշակման համակարգի գործունեության ակտիվացումը և արտահանման ծավալների աստիճանական ավելացումն որոշակիորեն նպաստել է գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնախնդրի մեղմմանը և գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում է շուրջ 2000 սննդամթերքի արտադրության ձեռնարկություն:

ՀՀ արդյունաբերության, այդ թվում գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության արտադրանքի ծավալները ներկայացված է 1.3.1 աղյուսակում:

Ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության արտադրանքի արժեքը, ընթացիկ գներով, ունեցել է աճի միտում, իսկ նրա տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերության մեջ, բացառությամբ 2012 թվականի, նույնպես ունեցել է աճի միտում, այն 2014թ. տվյալներով կազմել է 38.4 %, 2010թ. 33.7 %-ի դիմաց: Գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերությունը մշակող արդյունաբերության մեջ դիտարկվող ժամանակահատվածում ունեցել է աճի միտում և տատանվել է 51.1-ից 58.6 %-ի սահմաններում: Գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության մեջ մեծ տեսակարար

կշիռ է կազմում սննդամթերքի արտադրությունը, որի կարևորագույն բաղադրիչն է կազմում կաթի վերամշակող արդյունաբերությունը:

Աղյուսակ 1.3.1

**ՀՀ-ում արդյունաբերության, այդ թվում մշակող և վերամշակող արդյունաբերության 2010-2014թթ. արտադրության ծավալների փոփոխությունը ընթացիկ գներով**[44]

| **Ցուցանիշները** | **Չափի միավորը** | **2010թ.** | **2011թ.** | **2012թ.** | **2013թ.** | **2014թ.** |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| **Ամբողջ արդյունաբերություն** | մլրդ դրամ | 824.3 | 922.1 | 1120.5 | 1240.6 | 1288.2 |
| այդ թվում` | | | | | | |
| մշակող արդյունաբերության | մլրդ դրամ | 544.6 | 640.1 | 698.0 | 775.6 | 844.6 |
| որից` | | | | | | |
| սննդամթերքի արտադրություն | մլրդ դրամ | 188.4 | 238.7 | 249.9 | 274.5 | 306.1 |
| խմիչքների արտադրություն | մլրդ դրամ | 69.8 | 84.0 | 100.8 | 125.7 | 123.3 |
| ծխախոտային արտադրատեսակների արտադրություն | մլրդ դրամ | 19.9 | 16.2 | 25.4 | 38.3 | 65.4 |
| **Գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերություն** | մլրդ դրամ | 278.1 | 338.9 | 376.1 | 438.5 | 494.8 |
| Գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերության մեջ | % | 33.7 | 36.8 | 33.6 | 35.3 | 38.4 |
| Գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռը մշակող արդյունաբերության մեջ | % | 51.1 | 52.9 | 53.9 | 56.5 | 58.6 |

44 ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2010; 2011; 2012; 2013 և 2014թթ. հունվար-դեկտեմբերին: Տեղեկատվական ամսական զեկույց: ՀՀ ԱՎԾ, Երևան 2011; 2012; 2013; 2014 և 2015թթ. էջ 10-18

Ամբողջ արդյունաբերության, մշակող արդյունաբերության և գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության արտադրանքի արժեքի փոփոխությունը ընթացիկ գներով ներկայացված է նաև 2-րդ գծապատկերում:




**Գծապատկեր 2: Ամբողջ արդյունաբերության, մշակող արդյունաբերության և գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերու-թյան արտադրանքի արժեքի փոփոխությունը ընթացիկ գներով**

Գծապատկերում ներկայացված տվյալներից երևում է, որ դիտարկված ժամանակահատվածում ամբողջ արդյունաբերական արտադրանքն արժեքային արտահայտությամբ, գնահատված ընթացիկ գներով, ավելացել է 56.3 %-ով, մշակող արդյունաբերությանը 55.1 %-ով, իսկ գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունա-բերությանը՝ 77.9 %-ով, որը վկայում է վերջինիս առաջանցիկ աճի մասին:

Գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության և գյուղա-տնտեսության ոլորտի ՓՄՁ-ների

տեղի գնահատման նպատակով դիտարկել ենք վերջին տարիներին այդ սուբյեկտների թվաքանակի փոփոխությունը ըստ դիտարկվող ոլորտների և գերփոքր, փոքր ու միջին սուբյեկտների: Վերջինիս տվյալները ամփոփված է 1.3.1 աղյուսակում:

Աղյուսակ 1.3.2

**ՀՀ-ում ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը ըստ տնտեսության ոլորտներ 2010; 2012 և 2014թթ.**[45, 46]

| Ցուցանիշները | 2010թ. | | | | 2012թ. | | | | 2014թ. | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **ՓՄՁ** | **Գ*** | **Փ**** | **Մ***** | **ՓՄՁ** | **Գ** | **Փ** | **Մ** | **ՓՄՁ** | **Գ** | **Փ** | **Մ** |
| **ՓՄՁ սուբյեկտների քանակը** | 59267 | 54819 | 3603 | 845 | 73925 | 69096 | 3928 | 901 | 74365 | 68117 | 5109 | 1139 |
| այդ թվում` | | | | | | | | | | | | |
| գյուղատնտեսության, անտառային տնտեսություն և ձկնորսություն | 435 | 357 | 55 | 23 | 551 | 467 | 60 | 24 | 475 | 377 | 72 | 26 |
| **Մշակող արդյունաբերություն** | 5033 | 4384 | 521 | 128 | 6061 | 5390 | 527 | 144 | 6491 | 5629 | 678 | 184 |
| որից` | | | | | | | | | | | | |
| ոչ պարենային | 3066 | 2659 | 325 | 82 | 3701 | 327 | 336 | 91 | 3936 | 3397 | 427 | 112 |
| պարենային | 2013 | 1767 | 199 | 47 | 2417 | 2168 | 195 | 54 | 2605 | 2272 | 260 | 73 |
| գյուղատնտեսության, անտառային տնտե-սություն և ձկնորսության ճյուղի ՓՄՁ-ների տեսակարար կշիռը ընդհանուր ՓՄՁ թվաքանակում, % | 0.73 | 0.65 | 1.53 | 2.72 | 0.75 | 0.68 | 1.53 | 2.66 | 0.65 | 0.55 | 1.41 | 2.28 |
| մշակող արդյունաբերության ոլորտի ՓՄՁ-ների տեսակարար կշիռը ընդհանուր ՓՄՁ թվաքանակում, % | 8.49 | 8.00 | 14.46 | 15.15 | 8.20 | 7.80 | 13.42 | 15.98 | 8.73 | 8.26 | 13.27 | 16.15 |
| ոչ պարենային ոլորտի ՓՄՁ-ների տեսա-կարար կշիռը ընդհանուր ՓՄՁ թվաքանակում | 5.17 | 4.85 | 9.02 | 9.70 | 5.01 | 0.47 | 8.55 | 10.10 | 5.29 | 4.99 | 8.36 | 9.83 |
| պարենային ոլորտի ՓՄՁ-ների տեսակա-րար կշիռը ընդհանուր ՓՄՁ թվաքանակում | 3.40 | 3.22 | 5.52 | 5.56 | 3.27 | 3.14 | 4.96 | 5.99 | 3.50 | 3.33 | 5.09 | 6.41 |
| պարենային ոլորտի ՓՄՁ-ների տեսակարար կշիռը մշակող արդյունաբերության ՓՄՁ թվաքանակում | 40.00 | 40.31 | 38.20 | 36.72 | 39.88 | 40.22 | 37.00 | 37.50 | 40.13 | 40.36 | 38.35 | 39.67 |

[45] Հաշվետվություն Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ. էջ 5-7

[46] ՀՀ կառավարության 2015թ. հոկտեմբերի 1-ի «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018թթ. ռազմավարությանը հավանություն տալու մասին» N44 արձանագրային որոշում

*գերփոքր, **փոքր ***միջին ձեռնարկատիրության սուբյեկտներ

Ներկայացված տվյալներից երևում է, որ դիտարկված ժամանակահատվածում ՓՄՁ սուբյեկտների թվաքանակն ավելացել է 25.5 %-ով և 2014թ. տվյալներով կազմել է 74365 միավոր: Հատկապես մեծ աճ է գրանցվել փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների թվաքանակում, դրանց աճը եղել է 41.8 % և 2014թ. կազմել 5109 միավոր: Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտի ՓՄՁ-ների թվաքանակի աճը կազմել է 11.5 %, այստեղ նույնպես հարաբերականորեն ավելի մեծ աճ է գրանցվել փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների թվաքանակում, դրանց աճը կազմել է 30.9 % և 2014թ. գրանցվել 72 միավոր: Մշակող արդյունաբերության ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը վերջին 5 տարիների ավելացել է 29.4 %-ով և կազմել 6491 միավոր, ընդ որում հարաբերականորեն առավել մեծ աճ է ապահովվել միջին սուբյեկտների թվաքանակում, որը կազմել է 43.7 %: Ինչ վերաբերում է գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության ՓՄՁ սուբյեկտներին ապա դրանց թվաքանակի աճը 2010-2014թթ. կազմել է 29.4 %, ընդ որում այստեղ նույնպես հարաբերականորեն առավել մեծ աճ է ապահովվել միջին սուբյեկտների մոտ` 55.3 % և կազմել 73 միավոր: Գյուղատնտեսական մթերքների վերամշակող ոլորտի ՓՄՁ-ների տեսակարար կշիռը ընդհանուր ՓՄՁ-ների մեջ դիտարկված ժամանակահատվածում տատանվել է 3.4-3.5 %-ի սահմաններում, իսկ մշակող արդյունաբերության ՓՄՁ սուբյեկտների մեջ գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության մասնաբաժինը տատանվել է 40.0-40.13 %-ի սահմաններում: Դիտարկվող ժամանակահատվածում հատկապես ավելացել է գյուղատնտեսական մթերքներ վերամշակող միջին սուբյեկտների տեսակարար կշիռը:

Հանրապետության ՓՄՁ-ների մեջ գյուղմթերքների վերամշակող ոլորտի տեղի գնահատման համար դիտարկել ենք նաև այլ ցուցանիշներ: Մասնավորապես ներկայացվել է գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության, մշակող արդյունաբերության մեջ պարենային և ոչ պարենային ոլորտի ՓՄՁ-ների աշխատողների թիվը, շրջանառությունը, մուծված հարկերի գումարը 2014 թ. համար: Տվյալները ամփոփված է 1.3.3 աղյուսակում:

Աղյուսակ 1.3.3

**Ըստ տնտեսության ոլորտների ՀՀ-ում ՓՄՁ սուբյեկտների աշխատողների թիվը, շրջանառությունը և մուծված հարկերի գումարը 2014թ. տվյալներով**[47]

| **Ցուցանիշները** | Աշխատողների թիվը, մարդ | | | | Շրջանառությունը, մլն դրամ | | | | Մուծված հարկերը, մլն դրամ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ՓՄՁ | Գ | Փ | Մ | ՓՄՁ | Գ | Փ | Մ | ՓՄՁ | Գ | Փ | Մ |
| Գյուղատնտեսության, անտառային տնտեսություն և ձկնորսություն | 7512 | 1090 | 1657 | 4765 | 20443 | 1208 | 5261 | 13975 | 2743 | 382 | 596 | 1765 |
| Մշակող արդյունաբերություն | 50712 | 15654 | 15478 | 19580 | 200354 | 43248 | 69340 | 87766 | 27418 | 5537 | 8807 | 13074 |
| որից` | | | | | | | | | | | | |
| ոչ պարենային | 29984 | 9038 | 9452 | 11494 | 128948 | 26842 | 44428 | 57678 | 18027 | 3655 | 6107 | 8265 |
| պարենային | 21076 | 6714 | 6210 | 8152 | 72328 | 16882 | 25285 | 30161 | 9496 | 1930 | 2757 | 4809 |
| **Ընդամենը ՓՄՁ-ներ** | 370269 | 137268 | 113100 | 119901 | 1565934 | 417251 | 524548 | 624135 | 237710 | 57961 | 87239 | 92510 |
| գյուղատնտեսության, անտառային տնտեսություն և ձկնորսության ճյուղի ՓՄՁ-ների տեսակարար կշիռը ընդհանուր ՓՄՁ-ների նկատմամբ, % | 2.03 | 0.79 | 1.47 | 3.97 | 1.31 | 0.29 | 1.00 | 2.24 | 1.15 | 0.66 | 0.68 | 1.91 |
| մշակող արդյունաբերության ոլորտի ՓՄՁ-ների տեսակարար կշիռը ընդհանուր ՓՄՁ-ների նկատմամբ, % | 13.70 | 11.40 | 13.69 | 16.33 | 12.79 | 10.36 | 13.22 | 14.06 | 11.53 | 9.55 | 10.10 | 14.13 |
| ոչ պարենային ոլորտի ՓՄՁ-ների տեսակարար կշիռը ընդհանուր ՓՄՁ-ների նկատմամբ, % | 8.10 | 6.58 | 8.36 | 9.59 | 8.23 | 6.43 | 8.47 | 9.24 | 7.58 | 6.31 | 7.00 | 8.93 |
| պարենային ոլորտի ՓՄՁ-ների տեսակարար կշիռը ընդհանուր ՓՄՁ-ների նկատմամբ, % | 5.69 | 4.89 | 5.49 | 6.80 | 4.62 | 4.05 | 4.82 | 4.83 | 3.99 | 3.33 | 3.16 | 5.20 |
| պարենային ոլորտի ՓՄՁ-ների տեսակարար կշիռը մշակող արդյունաբերության ՓՄՁ-ների նկատմամբ, % | 41.56 | 42.89 | 40.12 | 41.63 | 36.10 | 39.04 | 36.47 | 34.37 | 34.63 | 34.86 | 31.30 | 36.78 |

[47] Հիմք է ընդունվել http://www.mineconomy.am տվյալները

*գերփոքր, **փոքր ***միջին ձեռնարկատիրության սուբյեկտներ

Աղյուսակում ներկայացված տվյալներից երևում է, որ պարենային՝ գյուղատնտեսական մթերքների վերամշակող ոլորտի ՓՄՁ-ների աշխատողների թիվը կազմել է 21076 մարդ, որ մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն գերփոքր ձեռնարկատիրության սուբյեկտները (37.1 %)։ Աշխատողների թիվը կազմում է հանրապետու-թյան ՓՄՁ-ների աշխատողների թվի 5.69 %-ը, իսկ մշակող արդյունա-բերության ՓՄՁ սուբյեկտների 41.46 %-ը։ Այսինքն մշակող արդյունաբերության մեջ աշխատողների շթիվը ունի մեծ տեսակարար կշիռ։ Պարենային ոլորտի ՓՄՁ-ների շրջանառությունը կազմել է 72328 մլն դրամ։ Շրջանառության մեջ համեմատաբար մեծ մասնաբաժին (41.70 %) ունեն միջին սուբյեկտները։ Պարենային ոլորտի ՓՄՁ-ների շրջանառության ծավալը կազմում է հանրապետության ՓՄՁ-ների ընդհանուր շրջանառության 4.62 %-ը, իսկ մշակող արդյունաբերության շրջանառության 36.10 %-ը, ընդ որում առավել մեծ մասնաբաժին (39.04 %) ունեն գերփոքր սուբյեկտները։ Ինչ վերաբերվում է մուծված հարկերին, ապա գյուղատնտեսական մթերքներ վերամշակող՝ պարենային ոլորտ ՓՄՁ-ների կողմից մուծված հարկերը կազմել են 9496 մլն դրամ, որը կազմում հանրապետության ընդհանուր ՓՄՁ-ների կողմից մուծված հարկերի 3.99, իսկ մշակող արդյունաբերության 34.63 %-ը։

2014 թվականի համար ներկայացված տվյալներից ակնհայտ է գյուղատնտեսական մթերքների վերամշակող ոլորտի ՓՄՁ-ների դերը հանրապետության ՓՄՁ-ների մեջ, մասնավորապես՝ զբաղվածության ապահովման, շրջանառության և հարկերի վճարման գործընթացում։

Ներկայումս գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության ոլորտի ՓՄՁ-ների ըստ ենթաճյուղերի հաշվառում չի իրականացվում, հետևաբար դրանց թվաքանակի և գործունեությունը բնորոշող տվյալները հրապարակված չեն։ Գյուղատնտեսական մթերքների վերամշակող ոլորտի, ըստ ենթաճյուղերի, թվաքանակի և չափերի վերաբերյալ պատկերացումներ ունենալու նպատակով, կատարված ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվում են ստորև, որի համար օգտագործվել է ՀՀ գյուղատնտեսության

նախարարության տվյալները, այնպես էլ սեփական դիտարկումների արդյունքները (աղյուսակ 1.3.4):

Աղյուսակ 1.3.4

**ՀՀ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ըստ ենթաճյուղերի կազմակերպությունների բնութագիրը**[48]

| Ենթաճյուղը | Կազմակերպու-թյունների թիվ | Առանձին ենթաճյուղերը բնութագրող 2015 թվականի տվյալներ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| **Պտուղբանջարեղենի վերամշակում** | **35** | 35 ձեռնարկություններից 8-ը համեմատաբար խոշոր է («Արտաշատի պահածոների գործարան», «Էջմիածնի պահածոների գործարան» ԲԲԸ-ներ, «Արարատ սննդի կոմբինատ», «Բորոդինո» հայկական պահածոների գործարան ՍՊԸ-ներ, «Եվրոթերմ», «ՄԱՊ», «Երևանի գարեջուր», «Թամարա ֆրութ» ՓԲԸ-ներ): Ընդհանուր արտադրական հզորությունները կազմում են տարեկան շուրջ 250 հազար տոննա պտղի և բանջարեղենի վերամշակում: Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 1350 մարդ: |
| **Խաղողի վերամշակում** | **50** | 50 ձեռնարկությունից 12-ը համեմատաբար խոշոր («Երևանի կոնյակի գործարան», «Արտաշատ վինկոն» ՓԲԸ-ներ, «Երևանի Արարատ կոնյակի, գինու, օղու կոմբինատ» ԲԲԸ, «Պռոշյանի կոնյակի գործարան», «Արարատի գինու գործարան», «Ավշարի գինու գործարան», «Շահումյան վին», «Գինու կոնյակի տուն «Շահնազարյան», «Ա.Կ.Զ.» «Սամկոն», «Արմենիա վայն գործարան», «Հայասի Գրուպ» ՍՊԸ-ներ): Ընդհանուր արտադրական հզորությունները կազմում են տարեկան շուրջ 265 հազար տոննա խաղողի վերամշակում: Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 2200 մարդ: |
| **Չորացրած մթերքի և համեմունքների արտադրություն** | **350** | Շուրջ 350 ֆիզիկական և իրավաբանական անձիք, որոնցից 6-ը՝ միջին («Չիր», «Ավելիաց», «Գյուղի տատիկ» ՍՊԸ-ներ, «Արմեն Մանուկյան», «Համիկ Միրզոյան» ԱՁ-ներ, «Վայք Գրուպ» ՓԲԸ), իսկ մյուսները՝ գերփոքր: Ընդհանուր արտադրական հզորությունները կազմում են տարեկան շուրջ 15.0 հազար տոննա պտղի և բանջարեղենի վերամշակում: Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 880 մարդ: |

[48] Հիմք է ընդունվել սեփական դիտարկումները և http://www.minagro.am տվյալները

աղյուսակ 1.3.4-ի շարունակությունը

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| **Կաթի վերամշակում** | **70** | Շուրջ 70 ձեռնարկություն, որոնցից 12-ը՝ համեմատաբար խոշոր («Աշտարակ կաթ» ՓԲԸ, «Բոնիլատ», «Դուստր Մարիաննա», «Մուլտի ագրո» գիտա-արտադրական կենտրոն», «Արզնի կաթ», «Թամար և Անի», «Բիոկաթ», «Չանախ», «Դուստր Մելանիա», «Իգիթ» ՍՊԸ-ներ, «Արաքս-2» ԱԿ և այլ): Ընդհանուր արտադրական հզորությունները կազմում են տարեկան շուրջ 490 հազար տոննա կաթի վերամշակում: Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 1720 մարդ: |
| **Մսի վերամշակում** | **68** | 68 ձեռնարկություն, որոնցից 15-ը՝ համեմատաբար խոշոր («Նատալի ֆարմ», «Բեկոն պրոդուկտ», «Բարի Սամարացի», «Նատֆուդ», «Ա. Բիլյան», «Աթենք», «ԱՌ Դելիկատես», «Մուշ» ՍՊԸ-ներ, «Արարատ» ԱԿ): Ընդհանուր արտադրական հզորությունները կազմում են տարեկան շուրջ 50 հազար տոննա մսի վերամշակում: Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 2177 մարդ: |
| **Ալրաղացային արտադրություն** | **60** | Շուրջ 60 ձեռնարկություն, որոնցից 12-ը՝ խոշոր («Ալեքս Գրիգ», «Մանանա Գրեյն», «Մանչո Գրուպ», «Թալգրիգ», «Գրանդ Քենդի» ՀՁ, «Ատ Գրեյն» ՍՊԸ-ներ, «ՎՏ Թրեյդ» ՓԲԸ և այլ) և միջին, մյուսները՝ փոքր: Ընդհանուր արտադրական հզորությունները կազմում են տարեկան շուրջ 400 հազար տոննա ալյուրի արտադրություն: Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 1500 մարդ: |
| **Հացաթխման արտադրություն** | **500** | Ավելի քան 500 ձեռնարկություն, որոնցից 25-ը՝ միջին («4-րդ հացի գործարան», «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ներ, «Անաիտ», «Դավիթ 84», «Խարիսխ», «Հացագործ Անդրանիկ» ՍՊԸ-ներ և այլն), իսկ մյուսները՝ փոքր: Ընդհանուր արտադրական հզորությունները կազմում են տարեկան շուրջ 500 հազար տոննա հացի արտադրություն: Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 4328 մարդ: |
| **Հրուշակեղենի և մակարոնեղենի արտադրություն** | **135** | Շուրջ 135 ձեռնարկություն, որոնցից 12-ը՝ միջին («Գրանդ Քենդի» հայկանադական ՀՁ, «Ա. Ավետյանի ԱՍԱ», «Մանչո Գրուպ», «Դարոյինք», «ԷյԷյԷֆՓիՍի» ՀԱ ՀՁ, «Շանթ պլյուս», «Արմավիր» ՍՊԸ-ներ և այլն), մյուսները՝ փոքր և գերփոքր: Ընդհանուր արտադրական հզորությունները կազմում են տարեկան շուրջ 40 հազար տոննա հրուշակեղենի և մակարոնեղենի արտադրություն: Արդյունաբերա- |

| | | |
|---|---|---|
| | | արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 4200 մարդ: |

աղյուսակ 1.3.4-ի շարունակությունը

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| **Հանքային ու խմելու ջրերի և ոչ ալկոհոլային ըմպելիքների արտադրություն** | **50** | Շուրջ 50 ձեռնարկություն, որոնցից 12-ը՝ միջին («Ջերմուկ գրուպ», «ՌՌՌ» հանքային ջրերի գործարան», «Ջերմուկ մայր գործարան», «Կոկա-կոլա հելլենիկ բոթլինգ քամփնի Արմենիա» ՓԲԸ-ներ, «Ջերմուկ ինթերնեյշնլ պեպսի կոլա բոթլեր» ՍՊԸ և այլ), մյուսները՝ փոքր և գերփոքր: Ընդհանուր արտադրական հզորությունները կազմում են տարեկան շուրջ 300000 հազար լիտր հանքային ու խմելու ջրերի և ոչ ալկոհոլային ըմպելիքների շշալցում: Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 1700 մարդ: |
| **Գարեջրի արտադրություն** | **7** | 7 ձեռնարկություն, որոնցից 3-ը՝ համեմատաբար խոշոր («Երևանի գարեջուր» ՓԲԸ, «Գյումրի գարեջուր», «Կոտայք» գարեջրի գործարան» ՍՊԸ-ներ): Ընդհանուր արտադրական հզորությունները կազմում են տարեկան շուրջ 150000 հազար լիտր գարեջրի արտադրություն: Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 930 մարդ: |
| **Սուրճի և թեյի մշակում և փաթեթավորում** | **30** | Շուրջ 30 ձեռնարկություն, որոնցից 5-ը՝ միջին («Ռոյալ Արմենիա» ՀՁ, «Ռաֆֆայել Քոնթինի Թրեյդինգ Քամփնի» ՀՁ, «Ալեքս Գրիգ», «Բիո ունիվերսալ», «ՀԱՄ թեյ» ՍՊԸ-ներ), մյուսները՝ փոքր: Ընդհանուր արտադրական հզորությունները կազմում են տարեկան շուրջ 25 հազար տոննա սուրճի և թեյի մշակում և փաթեթավորում: Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 359 մարդ: |
| **Բուսական յուղի (ձեթի) արտադրություն** | **3** | 3 ձեռնարկություն, որոնցից 1-ը՝ միջին («Շող բուսական յուղի կոմբինատ» ՍՊԸ), մյուսները՝ փոքր: Ընդհանուր արտադրական հզորությունները կազմում են տարեկան շուրջ 5 հազար տոննա բուսական յուղի արտադրություն: Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 70 մարդ: |
| **Շաքարի արտադրություն** | **2** | 2 ձեռնարկություն, որոնցից 1-ը՝ խոշոր («Լուսաստղ-Շուգր» ՍՊԸ), մյուսը՝ միջին: Ընդհանուր արտադրական հզորությունները կազմում են տարեկան շուրջ 250 հազար տոննա շաքարի արտադրություն: Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 220 մարդ: |

| | | |
|---|---|---|
| **Աղի արդյունահանում (կոմբինատ)** | **2** | 2 խոշոր ձեռնարկություն: Արտադրական հզորությունը կազմում է տարեկան շուրջ 100 հազար տոննա աղի արտադրություն: Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 314 մարդ |
| **Ընդամենը** | **1362** | ՓՄՁ սուբյեկտների թիվը 1298 |

Գյուղատնտեսական մթերքների վերամշակման ոլորտի դիտարկված կազմակերպությունների բացարձակ գերակշռող մասը հանդիսանում է ՓՄՁ սուբյեկտներ, այն կազմել է դիտարկված կազմակերպությունների 95.3 %-ը: Նշված տվյալները վկայում են գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերությունում ՓՄՁ-ների դերի մասին: Դիտարկված կազմակերպությունների մեջ կաթ վերամշակող կազմակերպությունների տեսակարար կշիռը փոքր է` 5.1 %, սակայն այն կարևոր նշանակություն ունի հանրապետության կաթնային անասնապահության զարգացման, ինչպես նաև բնակչությանն կաթնամթերքի տարբեր տեսակներով մատակարարման և արդյունքում պարենային անվտանգության ապահովման գործընթացում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առանձին վերամշակող ՓՄՁ-ների համար արտադրության առանձին տեսակների ծավալային ցուցանիշները հասանելի չեն (չեն հրապարակվում) և հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն դիտարկումների գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության կազմակերպությունների բացարձակ գերակշռող մասը ՓՄՁ սուբյեկտներն են, հետևաբար դրանց արտադրության առանձին տեսակների ծավալներ փոփոխության մասին պատկերացում ունենալու համար դիտարկել ենք ամբողջ վերամշակող արդյունաբերության տվյալները և դրանց փոփոխությունը: Դիտարկվել է վերամշակող արդյունաբերության արտադրատեսակների հնարավորինս լայն շրջանակ և ընդգրկել ենք վերջին 5 տարիների տվյալները: Արդյունքները ներկայացված են 1.3.5 աղյուսակում:

Ներկայացված տվյալները վկայում են, որ վերամշակող արդյունաբերությունում գրանցվել են զգալի դրական տեղաշարժեր: Մասնավորապես մսի վերամշակման ծավալները 2014 թվականին գերազանցել են 2010 թվականի ծավալները 50.9 %-ով, մսամթերքի արտադրության ծավալները ավելացել են 44.6 %-ով, կաթի և կաթնամթերքինը` 38.3 %-ով, պահածոներինը` 46.0 %-ով, բնական հյութերինը` 80.5 %-ով, կոնյակը և օղին 15.0 %-ով:

Դիտարկվող ժամանակահատվածում որոշակիորեն կրճատվել է օղու և օղու լիկյորային արտադրանքը, որի ծավալները զիջում են

2010 թվականի ցուցանիշը 20.1 %-ով: Մեծ աճ է գրանցվել գարեջրի, ոչ ալկոհոլային խմիչքների, հանքային ջրի և շաքարավազի արտադրության ուղղությամբ:

Աղյուսակ 1.3.5

**ՀՀ գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրատեսակների 2010-2014 թթ. արտադրության ծավալները**[49]

| Արտադրատեսակները | Չափի միավորը | Արտադրություն | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. | 2014թ. |
| Միս՝ ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը) | տոննա | 54497.3 | 60987.1 | 65895.7 | 72334.6 | 82257.1 |
| Մսամթերք, ներառյալ երշիկեղեն | տոննա | 3953.5 | 4488.8 | 4757.0 | 4943.8 | 5718.3 |
| Պանիր | տոննա | 17050.0 | 17525.0 | 17658.0 | 17375.4 | 18317.3 |
| Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի)՝ ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը) | տոննա | 279400.0 | 315800.0 | 319800.0 | 362700.0 | 386500.0 |
| Պաղպաղակ | հազ.լիտր | 3312.9 | 3480.8 | 3628.6 | 4265.1 | 6345.0 |
| Հրուշակեղեն | տոննա | 11589.4 | 13013.2 | 14319.8 | 16543.6 | 18092.6 |
| Մակարոնեղեն | տոննա | 2614.8 | 3247.9 | 3563.0 | 4093.1 | 4467.6 |
| Բուսական յուղ | տոննա | 1034.3 | 696.5 | 2656.1 | 4650.3 | 3967.7 |
| Կենդանական յուղ | տոննա | 950.4 | 812.8 | 645.5 | 518.0 | 1092.5 |
| Պահածոներ - ընդամենը | տոննա | 8025.0 | 11772.6 | 9134.2 | 9989.6 | 11714.7 |
| Այդ թվում՝ մսի | տոննա | 462.0 | 285.3 | 723.7 | 891.6 | 144.9 |
| ձկան | տոննա | 50.7 | 0.9 | 54.3 | 90.0 | 347.8 |
| բանջարեղենի | տոննա | 4558.7 | 4248.2 | 2951.2 | 2814.2 | 4856.3 |
| տոմատի | տոննա | 1823.2 | 4944.8 | 2738.9 | 2837.3 | 3409.6 |
| մրգի | տոննա | 1130.4 | 2293.4 | 2666.1 | 3356.0 | 2584.1 |
| Բնական հյութեր - ընդամենը | հազ.լիտր | 11689.5 | 14615.2 | 16741.6 | 19544.2 | 21106.2 |
| Կոնյակ, օղի | հազ.լիտր | 24535.8 | 24568.0 | 28586.6 | 30222.6 | 28231.6 |
| այդ թվում՝ օղի և օղու լիկյորի արտադրանք | հազ.լիտր | 11911.7 | 9187.5 | 10098.2 | 9936.8 | 9506.1 |
| կոնյակ | հազ.լիտր | 12624.1 | 15380.5 | 18514.1 | 20383.3 | 18725.5 |
| Գինի և շամպայն գինի | հազ.լիտր | 6430.2 | 6814.6 | 6192.5 | 7216.7 | 6765.3 |
| այդ թվում՝ գինի | հազ.լիտր | 5812.0 | 6191.5 | 5718.0 | 6680.3 | 6130.9 |

49 Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2010 հունվար-դեկտեմբերին, 2011թ. հունվար-դեկտեմբերին, 2012թ. հունվար-դեկտեմբերին, 2013թ. հունվար-դեկտեմբերին, 2014թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ: Երևան 2011, 2012, 2013 և 2014թթ., էջ 6-7

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Շամպայն գինի | հազ.լիտր | 618.2 | 623.1 | 478.8 | 536.4 | 634.4 |
| Գարեջուր | հազ.լիտր | 15352.7 | 14744.3 | 13668.2 | 19847.8 | 23716.5 |
| Ոչ ալկոհոլային խմիչքներ | հազ.լիտր | 38232.1 | 45756.0 | 45320.8 | 63400.0 | 79972.6 |
| Հանքային ջուր | հազ.լիտր | 30000.0 | 29232.8 | 32977.3 | 43215.3 | 58618.3 |
| Ծաքարավազ | տոննա | 32508.4 | 72159.4 | 69267.0 | 69625.0 | 89189.0 |

Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն է տվել բացահայտել գյուղատնտեսական մթերքների վերանշակող արդյունաբերության, մասնավորապես այդ ոլորտի ՓՄՁ-ների որոշ առանձնահատկությունները, որոնք հիմնականում հետևյալն են`

- գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության համախառն արտադրանքը ունեցել է աճի միտում, այն ընթացիկ գներով դիտարկվող ժամանակահատվածում` 2010-2014թթ. աճը կազմել է 77.9 %,
- գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության համախառն արտադրանքի տեսակարար կշիռն ընդհանուր արդյունաբերության համախառն արտադրանքի արժեքում ունեցել է աճի միտում, այն դիտարկված 5 տարիների ընթացքում տատանվել է 33.7-38.4 %-ի սահմաններում,
- մշակող արդյունաբերության մեջ նույնպես գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունավետության բաժնեմասն ունեցել է աճի միտում, այն տատանվել է 51.1-58.6 %-ի սահմաններում,
- գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ոլորտի ՓՄՁ-ների թիվը ունեցել է աճի միտում, այն 2014թ. կազմել է 2605 միավոր, իսկ 2010թ.` 2013 միավոր, աճը կազմել է 29.4 %: 2014թ. ՓՄՁ-ների մեջ գերակշռել են գերփոքր տնտեսավարող սուբյեկտները: Գերփոքր, փոքր և միջին տնտեսավարող սուբյեկների տեսակարար կշիռը, համապատասխանաբար կազմել է` 87.2; 10.0 և 2.8 %,
- ինչպես ամբողջ արդյունաբերության, այնպես էլ մշակող արդյունաբերության մեջ գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության ՓՄՁ-ների թիվը ունեցել է որոշակի աճի միտում, մասնավորապես` ընդհանուր արդյունաբերության և մշակող արդյունաբերության ՓՄՁ-ների մեջ դիտարկվող ժամանակահատվածում, համապատասխանաբար տատանվել է` 3.4-3.5 և 40.0-40.13 %-ի սահմաքններում,

- գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության սուբյեկտների աշխատողների թիվը վերջին հրապարակված տվյալներով՝ 2014թ. կազմել է 21076, դրանց մեջ գերփոքր, փոքր և միջին տնտեսավարող սուբյեկտներում աշխատողների թիվի հարաբերակցությունները կազմել են համապատասխանաբար՝ 31.8; 29.5 և 38.7 %, այսինքն գերակշռող են միջին սուբյեկտների աշխատողների թիվը: Գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության ՓՄՁ-ների աշխատողների թիվը ընդհանուր արդյունաբերության և մշակող արդյունաբերության աշխատողների մեջ համապատասխանաբար կազմել են՝ 5.69 և 41.56 %,
- գյուղատնտեսական մթերքների վերամշակող ոլորտի ՓՄՁ-ների շրջանառության ծավալը կազմել է 72328 մլն դրամ, շրջանառությունն ըստ գերփոքր, փոքր և միջին սուբյեկտների համապատասխանաբար բաշխվել է հետևյալ հարաբերակցությամբ՝ 23.34; 34.96 և 41.70 %: Այսինքն, շրջանառությունը գերակշռել է միջին ՓՄՁ սուբյեկտների մոտ: Գյուղատնտեսական մթերքների վերամշակող ՓՄՁ-ների մասնաբաժինը ընդհանուր արդյունաբերության և մշակող արդյունաբերության շրջանառության մեջ կազմել է համապատասխանաբար՝ 4.62 և 36.1 %,
- գյուղատնտեսական մթերքների վերամշակող ոլորտի ՓՄՁ-ների կողմից մուծված հարկերի գումարը 2014թ. կազմել է 9796 մլն դրամ (շրջանառության 12.9 %-ը), մուծված հարկերը ըստ գերփոքր, փոքր և միջին սուբյեկտների համապատասխանաբար բաշխվել են հետևյալ հարաբերակցությամբ՝ 20.3; 29.1 և 50.6 %: Այսինքն, շրջանառությունը գերակշռել է միջին ՓՄՁ սուբյեկտների մոտ: Գյուղատնտեսական մթերքների վերամշակող ՓՄՁ-ների մասնաբաժինը ընդհանուր արդյունաբերության և մշակող արդյունաբերության կողմից մուծված հարկերի մեջ կազմել է համապատասխանաբար՝ 5.2 և 36.78 %: Շրջանառության 4.62 %-ի դիմաց մուծված հարկերը դրան գերազանցել են շուրջ 0.6 տոկոսային կետով,
- հանրապետության գյուղատնտեսության մթերքների վերամշակող ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի մեջ գերակշռող մաս ունի

հացաթխման տնտեսավարող սուբյեկտները՝ շուրջ 37.0 %, այնուհետև չոր մթերքների և համեմունքների արտադրությունը՝ շուրջ 26.0 %, հրուշակեղենի և մակարոնեղենի արտադրությունը՝ 10.0 %: Կաթի վերամշակման սուբյեկտներին ավելի քան 5.0 %,

- գյուղատնտեսական մթերքների վերամշակող ոլորտի ՓՄՁ-ներում 2010-2014թթ. արտադրության ծավալների ավելացման առումով գրանցվել են զգալի դրական տեղաշարժեր: Մասնավորապես ավելացել է մսի վերամշակման, մսամթերքի արտադրության, կաթի և կաթնամթերքի, պահածոների, բնական հյութերի, կոնյակի արտադրության ծավալները: Դիտարկվող ժամանակահատվածում որոշակիորեն կրճատվել է օղու և օղու լիկյորային արտադրանքի ծավալները: Մեծ աճ է գրանցվել գարեջրի, ոչ ալկոհոլային խմիչքների, հանքային ջրի արտադրության ուղղությամբ:

Այսպիսով, մի շարք ցուցանիշների դիտարկումների և վերլուծության արդյունքում փորձ է արվել գնահատել գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության ոլորտի ՓՄՁ-ների առանձնահատկությունները, որը հիմք կարող է հանդիսանալ կաթի վերամշակման ոլորտի ՓՄՁ-ների գործունեության և ձևավորված հարաբերությունների ուսումնասիրման, ինչպես նաև այդ բնագավառում ծառացած հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման առաջարկությունների ներկայացման համար:

## ԳԼՈՒԽ 2: ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁՆ ՈՒ ՀՀ ԿԱԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

### 2.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման միջազգային փորձը

Փոքր և միջին ձեռնարկատիրությունն արտասահմանյան երկրներում ավելի արագ է զարգանում քան հետխորհրդային՝ շուկայական հարաբերությունների անցումային երկրներում: Արտասահմանյան երկրներում տնտեսական հարաբերություններում ՓՄՁ-ներին մեծ նշանակություն են տրվում: Ներկայումս այդ երկրներում ՓՄՁ-ները իրենցից ներկայացնում են միջին դաս, որը ծառայում է որպես տնտեսության կայուն զարգացման հիմք:

Ներկայիս դրությամբ առավել զարգացած արտասահմանյան երկրներում ՓՄՁ-ները կազմում են ամբողջ ձեռնարկությունների 70-90 %-ը, օրինակ ԱՄՆ-ում ՓՄՁ ոլորտում աշխատում են երկրի աշխատունակ բնակչության 53 %-ը, Ճապոնիայում՝ 71.7%-ը, իսկ Եվրոպական միության երկրներում փոքր ձեռնարկություններում ընդգրկված են աշխատող բնակչության շուրջ կեսը: Եվրոպական միությանն անդամ երկրներում միջին ձեռնարկությունները կազմում են ընդհանուր ձեռնարկությունների թվի ընդամենը 1 %-ը, սակայն, այդ դեպքում ապահովում են ձեռնարկությունների ընդհանուր շրջանառության 20.0 %-ը և բնակչության ընդհանուր զբաղվածության 17.0 %-ը[50]:

[50] http://www.moluch.ru/archive/39/4640/

Փոքր և միջին ձեռնարկատիրությունն իր կազմակերպման, մեկնարկի և զարգացման փուլերում անընդհատ հանդիպում է խոչընդոտների, որոնց ինքնուրույն հաղթահարելը բավական բարդ է: Այդ նպատակին են ծառայում ՓՄՁ աջակցման ծրագրերը: Ուստի այն երկիրը կունենա հաջողություն գործարարության բնագավառում, որտեղ նպաստավոր միջավայր է ստեղծված ՓՄՁ աջակցման տարբեր ծրագրերի իրականացման համար[51]:

Նպատակահարմար ենք համարել դիտարկել ՓՄՁ զարգացման և աջակցության փորձը ըստ տարբեր երկրների:

**Եվրոպական երկրներում** ՓՄՁ զարգացման երկար տարիների փորձը ցույց է տվել, որ տնտեսական հարաբերություններում այդ սուբյեկտները խաղում են հսկայական դեր, որը հանգեցնում է մրցակցության խթանման, նպաստում են խոշոր ընկերություններին ներդնելու նոր տեխնոլոգիաներ, բարձրացնել արտադրության արդյունավետությունը, քանի որ Եվրոպական միության տնտեսության արդյունավետությունը ուղղակիորեն կախված է ՓՄՁ-ների հաջող գործունեությունից: Հետևաբար, Եվրամիության շրջանակներում ՓՄՁ-ներին աջակցության քաղաքականության գլխավոր նպատակը կայանում է պետության և բիզնեսի շահերի հավասարակշռության հաստատումը` ապահովելով օպտիմալ պայմաններ ձեռնարկատիրության գործունեության, ինչպես նաև ՓՄՁ սուբյեկտների մրցունակության բարձրացման համար:

ՓՄՁ կարգավորման և աջակցության յուրատեսակ համակարգը Եվրոպական երկրներում ձևավորվել է նախորդ դարի 70-ական թվականներին և շարունակվում է գործել տարբեր ծրագրերի և ՓՄՁ աջակցության հիմնադրամների միջոցով: Ներկայումս ՓՄՁ զարգացման Եվրամիության հիմնական քաղաքականությունը դա ֆինանսական աջակցությունն է, նորմատիվային բազայի պարզեցումը, աջակցության բնագավառում վարչարարական ընթացակարգերը, միավորումներին մասնակցությունը, Եվրամիության գործունեության շրջանակներում ընդունված որո-

---

[51] Ձեռնարկատիրության գործունեության կազմակերպում: Ուսումնական ձեռնարկ/ՀՊՏՀ, Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոն: Ընդհ. դեկ. և խմբ.` Մ. Մելքումյան.-Եր.; զԱՆԳԱԿ< 2014. էջ 95-96

շումներում ՓՄՁ-ների շահերի ներկայացումը, ՓՄՁ-ների աջակցությունը հետազոտությունների, ինովացիաների և կադրերի պատրաստման բնագավառում, ՓՄՁ-ների գործունեության արդյունավետությունը նվազեցնող <<միասնական շուկայի>> գործունեության խախտումների և մրցակցության վերականգնումը, ՓՄՁ-ների մրցունակության բարձրացումը, այդ թվում` նրա մուտք արտաքին շուկա, ՓՄՁ-ների միջև համագործակցության գործընթացի կարգավորում և այլն:

Եվրոմիության երկրներում ձևավորված է բավականին փորձարկված ՓՄՁ աջակցության ենթակառուցվածքներ, որպես օրինակ Եվրոմիության բոլոր երկրներում գոյություն ունի ՓՄՁ զարգացման կարգավորման և աջակցության լավ զարգացած ինչպես պետական, այնպես էլ մասնավոր կազմակերպություններ: Այս դեպքում, Եվրոմիության յուրաքանչյուր երկրի ՓՄՁ աջակցության քաղաքականությունը մշակվում է էկոնոմիկայի, արդյունաբերության, առևտրի և այլ կառավարչական կառույցների կողմից: Պետական հաստատություններից, մասնավորապես առևտրա-արդյունաբերական պալատը, զբաղվում է ՓՄՁ-ների ուսուցմամբ և որակավորման բարձրացմամբ, տեխնոլոգիական խորհրդատվությամբ, նպաստում է միջազգային առևտրի խթանմանը և համագործակցությանը, ՓՄՁ ներկայացուցիչներին տրամադրում է որակի հավաստագրեր, գործարար տեղեկատվություն: Մասնավոր կառույցները, մասնավորապես առևտրային բանկերը, վենչուրային ընկերությունները տրամադրում են ՓՄՁ-ներին վարկային աջակցություն, իսկ մասնավոր հետազոտական և խորհրդատվական ընկերությունները խորհրդատվություն են մատուցում մենեջմենտի, մարքեթինգի, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և այլ հարցերով[52]:

Վերջին մի քանի տարիներին Եվրոպայում լայն տարածում է գտել ՓՄՁ աջակցության ինտերակտիվ գործիքները, որոնցից են տեղեկատվական հարթակները, տեսակոնֆերանսները և այլն: Որպես օրինակ կարող է հանդիսանալ **Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության մայրցամաքային ցանցը** (Ձեռնարկությունների

---

[52] http://www.moluch.ru/archive/39/4640/

եվրոպական ցանցը)՝ ՓՄՁ աջակցության տեղեկատվական ռեսուրսների անվճար հարթակը, որը միավորում է ավելի քան 600 գործակալություն և կազմակերպություն, որոնք կատարում են ՓՄՁ-ների և Եվրոմիության միջև միջնորդների դեր: ՓՄՁ ցանկացած ներկայացուցիչ կարող է համեմատաբար արագ և հեշտությամբ իմանալ իր ընկերության (կոմպանիայի) զարգացման հնարավորությունների, նոր մեթոդների և տեխնոլոգիաների, աշխատակիցների որակավորման բարձրացման, Եվրոմիության այլ երկրներում աշխատանքի ռիսկայնության, կոնկրետ Եվրոպական հիմնադրամի ուղիղ կոնտակտ և անհրաժեշտ տեղեկատվության ստացում, որը կարող է համաֆինանսավորել տվյալ ձեռնարկության ծրագիրը[53]:

Եվրոպական երկրներից առանձին հետաքրքրություն է ներկայացնում **Գերմանիայում** ՓՄՁ աջակցության փորձը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը հանդիսանում է Գերմանիայի տնտեսության առավել զարգացած հատվածը, որին բաժին է ընկնում երկրի ՀՆԱ-ի 57 %-ը, վերջինիս մեծապես նպաստել է իշխանության բոլոր մակարդակներում ակտիվ ֆինանսական աջակցությունը: Ինչպես տնտեսության շատ հատվածներում, այնպես էլ ՓՄՁ-ին ակտիվորեն աջակցություն է ցուցաբերվում իշխանության բոլոր մակարդակներում և երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հողային դաշնության կողմից: Այստեղ առանցքային նշանակություն են ունեցել Վարկային երաշխիքների բանկի ստեղծումը, սկզբնական շրջանում դրանք մասնագիտացված էին հետպատերազմյան Եվրոպայի վերականգնմանն ուղղված ֆինանսական հոսքերի կառավարման ուղղությամբ և ակտիվորեն, հավասարապես վարկային կորպորացիաների հետ նպաստել են ՓՄՁ-ների զարգացմանը:

Ներկայումս ՓՄՁ հատվածի, ինչպես ստեղծման փուլում, այնպես էլ նրա զարգացման փուլերում աջակցության գործընթացում կարևոր նշանակություն ունի KFW (Kreditanstalt fur Wiederaufbau)՝ Գերմանիայի պետական բանկը, որի բաժնետիրական կապիտալի 80 %-ը պատկանում է կառավարությանը, իսկ մնացածը

[53] Նույն տեղում

հողային դաշնությանը: ՓՄՁ աջակցության գործընթացում KFW-ն հիմնական շեշտը դնում է էժան վարկերի և երաշխիքների տրամադրման վրա[54]:

Գերմանիայի ՓՄՁ աջակցության համակարգի յուրահատկությունը կայանում է աջակցության գործընթացում բազմակողմանիության և տարբեր կազմակերպությունների ընդգրկվածության շրջանակի մեջ: Միայն տարբեր ներդրումային նախագծերի ֆինանսավորման և խթանման պետական երաշխիքները տրամադրվում են մի քանի տեսակներով, որոնք հնարավորություն են տալիս, ընդունել այնպիսի որոշում, որը բավարարում է շահառուի պահանջները՝ ֆինանսավորման գումարի չափը, ձեռնար-կության մասշտաբը, գոտին (հողատարածքը), նախագծի իրականացման վայրը:

ՓՄՁ-ների ստեղծման և զարգացման պետական երաշխիքների տրամադրման հիմնական ուղղությունը՝ դա ներդրումային նախագծերի ֆինանսավորումն և շրջանառու միջոցների ավելացման համար վարկավորումն է: Պետական երաշխիքների և արտոնյալ վարկերի մեծամասնությունը (միջին տոկոսադրույքը՝ 5-8 %, վարկավորման ժամկետը՝ 5-15 տարի) տրվում է start-up ծրագրի շրջանակներում կամ ՓՄՁ-ների ֆինանսավորումը դրվում է կառավարության հսկողության տակ գտնվող **Վերականգնման վարկային խորհրդի** վրա:

ՓՄՁ-ներին աջակցության գերմանական փորձին բնորոշ է հատուկ երաշխիքային բանկերի գոյությունը, որոնք տեղաբաշխված են տարբեր տարածքներում: Այդ բանկերը կոչված են իրենց վրա վերցնելու չվերադարձվող վարկի մինչև 80 %-ի ռիսկը, որի մեծ մասը (մինչև 60 %-ը) փոխհատուցվում է բանկի կողմից, իսկ մնացածը պետության, որը կարող է համարվել պետական երաշխիքային պրոդուկտ: Տվյալ ուղղությամբ երաշխիքային բանկերի գործունեությունը լրացվում է երաշխիքային հանրույթի՝ ՓՄՁ փոխօգնության սուբյեկտների ինստիտուտի կողմից[55]:

---

[54] http://www.acgrf.ru/opit/

[55] http://www.acgrf.ru/opit/

Հետաքրքրություն է ներկայացնում ՓՄՁ զարգացման և աջակցության **ԱՄՆ-ի** փորձը:

Ներկայումս ԱՄՆ-ում գրանցված է 20 միլիոնից ավել ՓՄՁ սուբյեկտ, որը ապահովում է երկրի աշխատունակ բնակչության կեսից ավելիի զբաղվածությունը: Ամերիկյան գիտնականների հաշվարկով յուրաքանչյուր երրորդ ամերիկյան ընտանիք զբաղված է բիզնեսում, ԱՄՆ փոքր ֆիրմաների մինչև 20 %-ը գործունեությունը սկսել են 1000-5000 ԱՄՆ դոլարով և դրանց կեսը 2-3 տարիներից՝ կարճ ժամանակահատվածում բարձրացրել են իրենց տարեկան եկամուտը մինչև 1 մլն ԱՄՆ դոլար[56]:

Ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի և անցումային տնտեսության երկրների (Ռուսաստան, Հայաստան և այլն) ԱՄՆ-ի ՓՄՁ սուբյեկտները առավել մեծ են: Համաձայն ամերիկյան օրենսդրության ՓՄՁ կատեգորիային դասվում են տնտեսության այն տնտեսավարող սուբյեկտները որոնց աշխատողների թիվը չի գերազանցում 500 մարդը, սակայն կախված նրանից թե, որ ճյուղում են նրանք աշխատում կարող են ՓՄՁ շարքը դասվել 1000-1500 աշխատակիցներ ունեցող և տարեկան 15.0 մլն ԱՄՆ դոլար շրջանառությունը չգերազանցող կազմակերպությունները[57]:

ԱՄՆ-ը աշխարհի զարգացած տնտեսություն ունեցող երկրների մեջ փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության գործընթացում առավել հին գործիքներ կիրառող երկիր է: Ձևավորվելով դեռևս Մեծ Դեպրեսիայի ժամանակահատվածում ամերիկյան դաշնային ծրագրերը մինչև այժմ ոչ թե կորցրել է արդիականությունը, այլ ներկայիս ժամանակահատվածում հանդիսանում են այլ երկրների համար նմանատիպ հայեցակարգերի մշակման և ներդրման հիմք:

Չնայած նրան, որ ՓՄՁ աջակցության ԱՄՆ-ի մի շարք ծրագրեր ժամանակագրվում են նախորդ դարի 30-ական թվականներով, սակայն ՓՄՁ պետական աջակցության, ֆինանսա-տնտեսական աջակցության ժամանկակից համակարգը ձևավորվել է 1953 թվականին կառավարության մակարդակով ստեղծված **Փոքր բիզնեսի գործերով ադմինիստրացիայի անկախ դաշնային գործակալության** կողմից

56 http://www.moluch.ru/archive/39/4640/
57 Նույն տեղում

(Smail Business Administration (SBA)), որոնց մասնաճյուղերը այսօր գոյություն ունեն ԱՄՆ բոլոր խոշոր տնտեսական կենտրոններում, իսկ գործակալության քաղաքականությունը տարածված է բոլոր նահանգներում: SBA-ի գլխավոր նպատակը ՓՄՁ սուբյեկտների համակողմանի աջակցությունն է, որպես երկրի տնտեսության առանցքային հատված: Գործակալության գործունեության հիմքը կազմում են հետևյալ երեք ուղղությունները՝

- վարկային երաշխիքների տրամադրում,
- բիզնեսի ներկայացուցիչների ուսուցում,
- բիզնեսին աջակցություն տարերային աղետների ժամանակ:

Առանցքային խնդիրների լուծման հետ մեկտեղ, SBA-ի գործունեության հիմնական ուղղություններից է՝

- փոքր բիզնեսի սուբյեկտներին վարկերի ստացման աջակցությունը,
- տեղեկատվական-խորհրդատվական և տեխնիկական աջակցության իրականացումը,
- սեփական բյուջետային հիմնադրամի բիզնեսի ուղակի սուբսիդավորում և վարկավորում:

SBA-ի վիճակագրության համաձայն՝

- յուրաքանչյուր տարի ՓՄՁ 60 հազ. ներկայացուցիչների միջին հաշվով տրվում է 30 մլրդ ԱՄՆ դոլարի վարկային երաշխիքներ,
- ծրագիրը իրականացնում է անվճար ուսուցում, որը ընգրկում է գործարարների ավել ի քան մեկ միլիոն լսարան,
- տրամադրում է 85 տոկոսային երաշխիքներ մինչև 150 հազ. ԱՄՆ դոլարի վարկերի համար և 75 տոկոսային երաշխիքներ 150 հազ. ԱՄՆ դոլարից ավել վարկերի դեպքում,
- պետական երաշխիքով ապահովված վարկերի միջին տոկոսադրույքը կազմում է մայր գումարի (prime) + 6%:

SBA-ից բացի ՓՄՁ սուբյեկտների գործունեության համար հատուկ նշանակություն ունեն մասնագիտացված **Փաստաբանական բաժինները**, որոնք կոչված են ներկայացնելու բիզնեսի շահերը Կոնգրեսում և դատարանում, ինչպես նաև ՓՄՁ աջակցության

համակարգում շատ զարգացած և բազմաթիվ կառույցներում առանձին նահանգների մակարդակով[58]:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ՓՄՁ գործունեության և աջակցության **Ճապոնիայի** փորձը:

Ներկայիս Ճապոնիան հանդիսանում է բարձր տեխնոլոգիական բիզնեսի զարգացման, նորարարություններին ուղղված զարգացած տնտեսության համաշխարհային առաջատար: Ինչպես այլ համաշխարհային տերություններ, այնպես էլ հետպատերազմյան Ճապոնիան շեշտը դրեց փոքր և միջին ձեռնարկատիրության ակտիվ պետական աջակցության, դրա համար ստեղծելով զարգացման գործուն իրավական և ֆինանսական հիմք:

Բիզնեսին աջակցության ոլորտի հիմնական ուղղությունը հանդիսանում է արտոնյալ հարկման հատուկ ռեժիմը, որը կախված է գործունեության բնույթից, հակամենաշնորհային կարգավորումից, շահերի պաշտպանությունից և ֆինանսավորման հատուկ մեխանիզմները, այդ թվում արտոնյալ վարկերը և պետական երաշխիքային պրոդուկտները:

ՓՄՁ գործունեության կարգավորման կենտրոնական օրգանը հանդիսանում է **Փոքր ձեռնարկությունների վարչությունը**, որը վերահսկվում է արտաքին առևտրի և արդյունաբերության նախարարության կողմից: Հենց այդ ենթակառուցվածքի վրա էլ դրված է ՓՄՁ սուբյեկտների պաշտպանությունը, սեփականատերերի վերահսկողության սահմանափակումը, ինչպես նաև ոչ շուկայական հարաբերությունների համար պատասխանատվության որոշումը:

Վարկերի և փոխառությունների ապահովման ոլորտներում աջակցությունը իրականացվում է **Փոքր և միջին բիզնեսի ապահովագրության ու վարկերի երաշխավորման կորպորացիայի** կողմից: Նման ՓՄՁ-ների աջակցության և զարգացման համակարգ իր խնդիրներով և ֆունկցիաներով գոյություն ունի նաև մի շարք զարգացած երկրներում, որոնք ձևավորվում և գործում են հիմնվելով ՓՄՁ աջակցության և զարգացման հիմնադրամների վրա: Դրան ավելանում է իշխանության և ՓՄՁ սուբյեկտների միավորման

[58]http://www.acgrf.ru/opit/

բոլոր մակարդակներում, զարգացման բոլոր փուլերում բիզնեսի ներկայացուցիչների սուբսիդավորման համակարգը:

Ճապոնիայի կառավարությունն առանցքային ուշադրություն է դարձնում գիտատար և բարձր տեխնոլոգիաներով հագեցած ձեռնարկություններին: Հենց դրանց համար էլ հաշվարկված է արտոնյալ փոխառությունների մեծ մասը, երաշխավորությունների և այլ պետական երաշխիքների միջոցով վարկերի տրամադրումը: Աջակցության պարտադիր տարրը հանդիսանում է խորհրդատվական, տեղեկատվական և տեխնիկական օգնությունը:

Ճապոնիայի տնտեսական զարգացման համատեքստում, մասնավորապես ՓՄՁ ոլորտում միտումները, սուբսիդավորումը, արտոնյալ վարկավորումը և վարկերի ապահովման պետական մեխանիզմները նախատեսվում են հետևյալ նպատակներով՝

- գիտատար ՓՄՁ սուբյեկտների հիմնական միջոցների մոդեռնիզացում և վերազինում,
- ինովացիոն նախագծերի, նոր տեխնոլոգիաների և արտադրանքի ստեղծում,
- երկրի մնացած գոտիներում նոր ՓՄՁ-ների հիմնում,
- սննդի, թեթև արդյունաբերության զարգացում[59]:

Կարելի է նշել, որ Ճապոնիայում ձևավորվել է ՓՄՁ տարբեր ոլորտների զարգացման լավագույն պայմաններ, քանի որ երկրի կառավարությունը իրականացնում է խիստ վերահսկողություն այդ սուբյեկտների կազմակերպման և զարգացման ուղղությամբ, տնտեսական առումով հակամենաշնորհային օրենսդրության կատարման վերահսկման, ՓՄՁ-ների համար տարբեր արտոնությունների սահմանման, թողարկվող արտադրանքի գների կարգավորման, ինչպես նաև իրականացնում է ֆինանսական և խորհրդատվական աջակցություն՝ դրանց զարգացման բոլոր մակարդակներում:

Նպատակահարմար ենք համարել դիտարկել նաև ՓՄՁ գործունեության և զարգացման **Չինական** փորձը:

Չինաստանում ՓՄՁ մասնաբաժինը երկրի ՀՆԱ-ում կազմում է 55 %, այդ զգալիորեն փոքր է քան եվրոպական երկրներում,

[59] http://www.acgrf.ru/opit/

այնուամենայնիվ, Չինաստանի կառավարությունը կարողացել է դրան հասնել 30 տարում: ՓՄՁ համարվում է տնտեսական աճի և շուկայի վերակենդանացման կարևորագույն գործոն և ՓՄՁ-ներին մեծ դեր է հատկացվում երկրի տնտեսության զարգացման գործում:

Չինաստանի կառավարությունը տարբեր մեթոդներով ձգտում է նպաստել ՓՄՁ-ների տնտեսական աճին, կատարելագործելով օրենսդրական ակտերը, ուղղված տնտեսության կարգավորմանը, նախատեսելով ձեռնարկությունների միատեսակ հնարավորություններ հարկավորման, վարկավորման, ներդրումների, արտադրության կատարելագործման, երկրի տնտեսությունում գիտատար տեխնոլոգիաների ներդրաման ուղղությամբ: Չինաստանում ակտիվ գործունեություն են իրականացնում **ՓՄՁ գործունեության աջակցության և զարգացման պետական հիմնադրամները**, որոնց հիմնական ուղղվածությունը կայանում է բիզնեսի զարգացման վարկերի ստացման համար երաշխիքային պարտավորությունների ապահովումը: Ամենաճանաչվածը հանդիսանում է **Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման պետական հիմնադրամը,** որի ստեղծումը ֆինանսավորվել է երկրի բյուջետային միջոցներից: Այդ հիմնադրամը խոշոր բիզնեսի համեմատությամբ նպաստում է ՓՄՁ սուբեկտների շահերի պաշտպանությանը տնտեսական բոլոր ուղղություններով և ապահովում է որոշակի հարկային արտոնություններ և լրացուցիչ ֆինանսավորում[60]:

Չինաստանի ՓՄՁ-ներին կարելի է անվանել երկրի գիտական շարժիչներ, որոնց շնորհիվ, տնտեսության այդ սուբյեկտները երկրում թողարկում են առավել մեծ թվով ինովացիոն արտադրանքներ և ապահովում են տեխնիկական հայտնագործություններ,որոնց մեծ մասը արտահանվում է:

Փոքր ձեռնարկատիրության աջակցություն ցուցաբերում են նաև **Բիզնեսի կոորդինացման և կոոպերացման չինական կենտրոնը**, որի հիմնական խնդիրը կայանում է ՓՄՁ աջակցության գործընթացում չինական և արտասահմանյան

[60] http://www.moluch.ru/archive/39/4640/

կազմակերպությունների համագործակցության համար հատուկ պայմանների ստեղծումը:

Չինաստանի տնտեսության զարգացմանը նպաստող մեկ այլ կարևոր օրգանը, դա **Պետական տեղեկատվական ծառայությունն** է (CSMEO), որը ստեղծվել է 2001 թվականին: Այդ ծառայությունը զբաղվում է իր ինտերնետային կայքի միջոցով երկրի բնակչությանը ՓՄՁ-ներին վերաբերվող հարցերով տեղեկատվական, խորհրդատվական ծառայությունների մատուցմամբ: CSMEO ցանցը ընդգրկում է Չինաստանի բոլոր գոտիները, որը հնարավորություն է տալիս միաժամանակյա տեղեկատվություն տրամադրել բնակչությանը աշխատանքի շուկայի, գործող օրենսդրության փոփոխության, գիտության և տեխնոլոգիական հայտնագործությունների բնագավառում վերջին նվաճումների և ՓՄՁ սուբյեկտների վիճակի մասին[61]:

Իրականացվող քաղաքականության արդյունքում ՓՄՁ ոլորտը Չինաստանի էկոնոմիկայում ստեղծում է նոր աշխատատեղեր, ակտիվորեն մասնակցում է բոլոր ինովացիոն տեխնոլոգիաներին: Չինական կառավարությունը իր հերթին մեծ ուշադրություն է դարձնում երկրում ՓՄՁ զարգացմանը՝ դրանց գործունեության և հարկավորման իրավաօրենսդրական դաշտի կատարելագործման, աջակցության հիմնադրամների ստեղծման, այդ սեկտորում ինվեստիցիաների ներգրավման, տնտեսության այդ սուբյեկտների վարկավորման ծրագրերի ընդլայնման միջոցով:

Միջազգային փորձի և զարգացածության առումով հետաքրքրություն է ներկայացնում ՓՄՁ գործունեության և զարգացման **Սինգապուրի** փորձը:

Ներկայումս Սինգապուրը հանդիսանում է աշխարհի ամենազարգացած երկրներից մեկը: Սինգապուրը հանդիսանում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու լավագույն վայր: Այն ՓՄՁ զարգացման աստիճանով զբաղեցնում է 5-րդ տեղը: Ներկայումս երկրում գործում են 140 հազ. ՓՄՁ սուբյեկտ, որը

---

[61] http://www.moluch.ru/archive/39/4640/

կազմում է երկրի բոլոր ձեռնարկությունների 90 %-ը և ապահովում է զբաղված բնակչության նշանակալի մասի համար աշխատատեղեր[62]:

Տնտեսագետները առանձնացնում են Սինգապուրի տնտեսության և ձեռնարկատիրության ծաղկման հիմնական պատճառները, որոնցից են[63]՝.

- Սինգապուրում ՓՄՁ հիմքը հանդիսանում է տարբեր ծառայությունների մատուցումը՝ առևտրի, տրանսպորտային, կոմունիկացիաների, ֆինանսական, զբոսաշրջային և այլն, որոնք ապահովում են երկրի բնակչության մեծամասնության համար աշխատատեղեր,
- երկրի օրենսդրական դաշտով ստեղծված է բարենպաստ պայմաններ բիզնեսի սկսման, անմիջական գործունեության իրականացման: Առանձնակի արտոնյալ պայմաններ է ստեղծված սկսնակ ՓՄՁ-ների համար,
- տնտեսական բարենպաստ իրավիճակը և երկրում գրավիչ ինվեստիցիոն կլիման: Այսպես, ՓՄՁ-ների համար գործում է արտոնյալ հարկային օրենսդրություն, որը ուղղված է արտասահմանյան կապիտալի և ինվեստիցիաների ներգրավմանը, ապահովվում է տնտեսությունում դրամական միջոցների ներդրման երաշխիքները և այլն:

Սինգապուրի կառավարությունը շահագրգռված է ՓՄՁ-ներին աջակցության համար, նպատակ ունենալով նաև դրանց մրցունակության բարձրացումն արտաքին շուկայում:

ՓՄՁ-ի աջակցությամբ զբաղվում է հատուկ ստեղծված գործակալությունը <<Spring>>, որն ապահովում է ՓՄՁ-ներին աջակցության ծրագրերի մշակումը և իրականացումը, ՓՄՁ սուբյեկտների ձեռնարկատիրական ընդունակությունների զարգացումը, խորհրդատվական ծառայությունների մատուցումը, բիզնեսի կառավարման կադրերի պատրաստումը: Դրանից բացի Սինգապուրում ներդրվում է հսկայական քանակությամբ ծրագրեր

[62] http://www.moluch.ru/archive/39/4640/

[63] Экономика в Сингапуре: значение и роль малого предпринимательства [Электронный ресурс], [2011] – Режим доступа: http://www.kreditbusiness.ru/foreignbusiness/72-jekonomika-v-singapure-znachenie-i-rol-malogo.html

արտոնյալ վարկավորմամբ, որը ընդգրկում է՝ հատուկ փոխառություն, վարկային ռիսկի ապահովագրություն, սուբսիդիաների տրամադրում, ՓՄՁ կադրերի ուսուցում և որակավորման բարձրացում:

Սինգապուրում ՓՄՁ-ները հանդիսանում են տնտեսության հիմքը, ի հաշիվ երկրում ստեղծված բարենպաստ տնտեսական իրավիճակի և գրավիչ ներդրումային ֆոնի, ինչպես նաև ՓՄՁ աջակցության մտածված պետական քաղաքականության:

ՓՄՁ գործունեության և փորձի առումով հետաքրքրություն է ներկայացնում նաև **Հարավային Կորեան:**

Հարավային Կորեան լրիվ իրավունքով կարելի է համարել փոքր և միջին ձեռնարկատիրության հատվածի արդյունավետ զարգացման օրինակ, որտեղ նշանակալի դերը պատկանում է պետական քաղաքականությանը, ոլորտի աջակցության ծրագրերին: Երկրում ՓՄՁ-ների թիվը հաշվվում է ավելի քան 3 մլն ձեռնարկություն:

ՓՄՁ ոլորտում պետական քաղաքականության առանցքային դերը պատկանում է **Փոքր և միջին բիզնեսի վարչակազմին** (Small and Medium Business Administratian (SMBA)), որը իրականացնում է ՓՄՁ պետական աջակցության և զարգացման համակարգումը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով բարդ և ինովացիոն նախագծերի մեկնարկին և զարգացմանը[64]:

Փոքր և միջին բիզնեսի վարչակազմը (SMBA) իրականցնում է մի շարք աջակցության ծրագրեր, մասնավորապես՝

- ուղղակի գործողության բնույթի կրթական և ֆինանսական նախագծեր,
- տարբեր կրթական և գիտական կազմակերպությունների բիզնես-ինկուբատորների պետական աջակցությունը,
- ՓՄՁ սուբյեկտներին հողակտորների հատկացում,
- խորհրդատվական, կրթական, մարկեթինգային և այլ բնույթի ծառայությունների ցուցաբերում,
- ՓՄՁ սուբյեկտների ուղակի և անուղակի ֆինանսավորում:

ՓՄՁ սուբյեկտներին երաշխիքային պրոդուկտների ներկայացման առաջատար կազմակերպություններից են՝

[64] http://www.acgrf.ru/opit/

- Կորեական վարկային երաշխիքային հիմնադրամը (Korea Credit Guarantee Fubd (KODIT)):
- Կորեական ֆինանսական տեխնոլոգիական կորպորացիան (Korea Technology Finance Corporation(KOTEC)):

KODIT-ը մասնագիտացված պետական հաստատություն է, որը հիմնադրվել է 1976 թվականին հատուկ օրենքով՝ նպատակ ունենալով ընդլայնելու վարկային երաշխիքների համակարգը և երկրի տնտեսական սեկտորում հավասարակշռության հաստատումը: KODIT-ի երաշխիքային պրոդուկտը կողմնորոշված է դեպի ՓՄՁ սուբյեկտները, որոնք չունեն առաջադիմական գործարար-նախագծերի իրականացման նյութական ապահովվածություն: ՓՄՁ-ների վարկային պարտավորությունների պետական երաշխիքային ապահովման քաղաքականության հետ մեկտեղ KODIT-ը իր վարկային տեղեկատվական ռեսուրսների կառավարման ոլորտում ի հաշիվ իր լիազորությունների իրականացնում է խթանող ազդեցություն վարկային օպերացիաների ոլորտում: Չնայած KODIT-ի պետական կարգավիճակի հիմնադրամի ֆինանսավորման աղբյուր է ծառայում ոչ միայն բյուջետային հատկացումները, այլ բացարձակապես բոլոր բանկերը պարտավոր են ներդրումներ իրականացնել հիմնադրամին: Կապիտալի որոշակի բաժնեմաս կազմում է կորեական ձեռնարկությունների անդամավճարները:

KOTEC-ը հանդիսանում է ՓՄՁ երաշխիքային աջակցության ոլորտի հատուկ կարգավիճակի և գործունեության բնագավառի կազմակերպություն, որը ստեղծվել է 1989 թվականին: KOTEC-ը հանդիսանում է ֆինանսական ոչ առևտրային հաստատություն, որի գործունեության գլխավոր ուղղությունը՝ ՓՄՁ ոլորտում վենչուրային և տեխնոլոգիական ուժեղ բիզնեսի վարկային երաշխիքների տրամադրումն է: KOTEC-ը իրականացնում է մի քանի ծրագրեր ուղղված վենչուրային բիզնեսի և բարձր տեխնոլոգիական ձեռնարկությունների զարգացմանը՝ նախատեսված բիզնեսի տարբեր պահանջների բավարարմանը: Իրեն գոյության ընթացքում KOTEC-ը տրամադրել է 167 մլրդ ԱՄՆ դոլարի երաշխիքներ, ակտիվորեն զարգացրել է աջակցության այլ ուղղություններ՝ բիզնես-

խորհրդատվություն, գործարկման աջակցության համակարգ, տեխնոլոգիաների գնահատում և այլն[65]:

ՓՄՁ գործունեության և աջակցության զարգացած երկրների փորձի ուսումնասիրությունից կարելի է անել հետևյալ հետևությունները`

- բոլոր զարգացած երկրներում ՓՄՁ ոլորտը զգալի տեղ ունի երկրների համախառն ներքին արդյունքի ձևավորման և բնակչության զբաղվածության ապահովման գործում,
- ՓՄՁ սուբյեկտներին ինչպես մեկնարկի, այնպես էլ գործունեությյան փուլերում ցուցաբերվում է պետական և այլ համակողմանի աջակցություն,
- ուսումնասիրված բոլոր երկրներում գոյություն ունի ՓՄՁ ձևավորման և գործունեության բարենպաստօրենսդրական դաշտ,
- զարգացած երկրներում գործում են ՓՄՁ աջակցության և դրա համակարգման տարբեր (պետական և ոչ պետական կարգավիճակում գործող) մասնագիտացված կազմակերպություններ,
- ՓՄՁ սուբյեկտներին ձևավորման և գործունեության փուլերում աջակցությունը իրկանացվում է բազմաթիվ գործիքներով` վարկային երաշխիքների տրամադրում, արտոնյալ վարկերի տրամադրում, փոխառությունների տրամադրում, առաջադիմական ծրագրերի սուբսիդավորում, հարկային արտոնությունների կիրառում, խորհրդատվության ծառայությունների մատուցում, կադրերի ուսուցում, տեղեկատվության մատչելիության ապահովում, հետազոտությունների իրականացում, արդիական տեխնոլոգիաների ներդրման աջակցություն, մարկեթինգի, մենեջմենտի բնագավառում աջակցություն, մրցունակության խթանում, իրացման գործընթացին աջակցություն և այլն:

Հայաստանի Հանրապետության ՓՄՁ ոլորտում իրականացվում են զարգացած երկրներում կիրառվող պետական աջակցության միջոցառումներ, սակայն դրանց ընդգրկվածությունը, աջակցության հարաբերական չափերը, կիրառվող մեխանիզմները և իրականացնող հաստատությունների կատարելության մակարդակը

[65] http://www.acgrf.ru/opit/

մեծապես զիջում է միջազգային պրակտիկայում կիրառվող միջոցներին:

### 2.2. ՀՀ կաթի վերամշակման ոլորտի հումքի արտադրության ենթաճյուղում ստեղծված վիճակի ու միտումների բնութագիրը

Հանրապետությունում կաթի վերամշակման ոլորտի հումքը հիմնականում ապահովվում է կաթնային՝ խոշոր եղջերավոր և մանր եղջերավոր անասնապահությունից: Վերամշակող արդյունաբերության համար որոշակի հումքի բազա է հանդիսանում նաև ինչպես ներմուծված, այնպես էլ տեղական արտադրության չոր կաթը:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունն իրենից ներկայացնում է զարգացած ենթաճյուղեր ունեցող մի ոլորտ, որտեղ անասնաբուծության վարման ավանդական տեխնոլոգիաներին զուգահեռ կիրառվում են ժամանակակից տեխնոլոգիաներ, ինչը հնարավորություն է ընձեռում տեղի բնակլիմայական պայմաններին առավելագույնս համապատասխանեցնել գյուղատնտեսական կենդանիների այս կամ այն տեսակը:

Տավարաբուծությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության անասնաբուծության ոլորտի առաջատար ճյուղը: Հանրապետությունում ստացված կաթի 95 %-ը ստացվում է տավարաբուծությունից: Բուծվող տավարի 93 %-ը տեղի բնակլիմայական պայմաններին լավ հարմարված, կաթնամսային ուղղություն ունեցող կովկասյան գորշ ցեղն է: Հնրապետությունում բուծվում են նաև հոլշտին, շվից, սիմենթալ և սևաբղետ ցեղի կենդանիներ: Հանրապետությունում տավարաբուծությամբ զբաղվում են շուրջ 170 հազար գյուղացիական տնտեսություններ և գյուղատնտեսական առևտրային կազմակերպություններ[66]:

Տավարի ամենաստվար գլխաքանակը կենտրոնացված է Գեղարքունիքի և Շիրակի, ապա՝ Արագածոտնի, Սյունիքի և Լոռու մարզերում:

66 http://www.minagro.am/

Հանրապետությունում բուծվող տավարի տոհմային և մթերատու հատկանիշները տարիներ շարունակ կատարելագործվել են շվից ցեղի տոհմային կենդանիների օգտագործմամբ:

Ներկայումս հանրապետության տավարաբուծության ոլորտում նկատվում են ինտենսիվացման և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման միտումներ:

Հանրապետությունում գործում են մեկ տասնյակից ավելի տավարաբուծական տոհմային տնտեսություններ, որոնցից առաջատարներն են <<Ագրոհոլդինգ Արմենիա>> ԲԲԸ-ի, <<Վամաքս>> ՍՊԸ-ի, <<Արզնի տոհմային ԹՏԽ>> ԲԲԸ-ի և <<Մուլտի ագրո>> ՍՊԸ-ի տավարաբուծական տնտեսությունները: ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք համայնքում գործող <<Վամաքս>> ՍՊԸ-ն և ՀՀ Լոռու մարզի Սպիտակի վարչական տարածքում գտնվող <<Ագրոհոլդինգ Արմենիա>> ԲԲԸ-ն, որոնց տավարաբուծական տնտեսությունները եզակի են ոչ միայն մեր հանրապետությունում, այլ և տարածաշրջանում[67]:

Ոչխարաբուծությունը Հայաստանի Հանրապետության անասնաբուծության ավանդական ճյուղերից է: Հազարամյակների ընթացքում ժողովրդական սելեկցիայի արդյունքում այստեղ հաջողությամբ բուծվում են տեղի բնակլիմայական պայմաններին գերազանց հարմարված մի քանի էնդեմիկ ցեղեր, որոնցից են մազեխ, բոզախ, ղարաբաղի և բալբաս ցեղերը: Բացի այդ, հայ սելեկցիոներների կողմից ընտրասերման արդյունքում մեր հանրապետությունում ստեղծվել է նաև ոչխարի հայկական կիսակոպտաբուրդ ցեղը:

Հանրապետությունում 20-րդ դարի 60-70 ական թվականներին բուծվում էր ավելի քան 2 մլն ոչխար, որից հետո ոչխարի գլխաքանակը կտրուկ նվազեց: Սակայն վերջին տարիներին հանրապետությունում նկատվում է ոչխարների և այծերի գլխաքանակի աճ:

Ոչխարաբուծությունն առավել զարգացած է հանրապետության նախալեռնային և լեռնային գոտիներում, որտեղ կան ընդարձակ արոտավայրեր: Ոչխարների ամենաստվար գլխաքանակը բուծվում է

[67]http://www.minagro.am/

ՀՀ Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում, ապա՝ ՀՀ Արագածոտնի և Շիրակի մարզերում:

Հանրապետությունում վերջին տարիներին խոշոր և մանր եղջերավոր անասունների և դրանց մայրական կազմի գլխաքանակի մասին պատկերացում է տալիս 2.2.1 աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 2.2.1

**ՀՀ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակի փոփոխությունը 2010-2015 թվականներին հունվարի 1-ի դրությամբ**[68]

(հազ. գլուխ)

| **Կենդանիների տեսակը** | **2011թ.** | **2012թ.** | **2013թ.** | **2014թ.** | **2015թ.** |
|---|---|---|---|---|---|
| Խոշոր եղջերավոր անասուններ | 571.4 | 599.2 | 661.0 | 677.6 | 688.6 |
| որից՝ կովեր | 272.6 | 283.3 | 303.3 | 309.6 | 313.9 |
| Ոչխարներ | 503.6 | 561.6 | 645.7 | 687.1 | 745.8 |
| որից՝ մաքիներ | 341.7 | 389.9 | 454.3 | 482.1 | 501.0 |
| Այծեր | 28.9 | 28.6 | 29.0 | 30.5 | 31.9 |
| որից՝ մայր այծեր | 22.0 | 22.4 | 21.4 | 22.0 | 23.0 |

Ներկայացված տվյալներից երևում է որ կովերի գլխաքանակը դիտարկվող ժամանակահատվածում ավելացել է 15.2 %-ով և կազմել 313.9 հազ. գլուխ: Նույն ժամանակահատվածում մաքիների գլխաքանակն ավելացել է ավելի մեծ տեմպերով, աճը կազմել է 46.6 %, հասնելով 501.0 հազ. գլխի: Որոշակի աճ է գրանցվել նաև մայր այծերի գլխաքանակում, այն դիտարկված ժամանակահատվածում կազմել է 4.5 %:

Կաթնամթերքի արտադրության տեղական հումքի ներուժի գնահատման համար կաթնային անասնագլխաքանակի փոփոխությունը դիտարկվել է նաև մարզային կտրվածքով: Կովերի գլխաքանակի փոփոխությունը ներկայացված է 2.2.2 աղյուսակում:

[68]Պարենային ապահովություն և աղքատություն: 2014թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ, Երևան 2015թ. էջ 54-57: Պարենային ապահովություն և աղքատություն: 2015թ. հունվար-հունիս: ՀՀ ԱՎԾ, Երևան 2015թ. էջ 49-52

Աղյուսակի տվյալները վկայում են, որ դիտարկվող 2011-2015 թվականներին կովերի գլխաքանակը հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում հիմնականում ունեցել է աճի միտում, հարաբերականորեն կովերի գլխաքանակի առավել մեծ աճ գրանցվել է ՀՀ Վայոց ձորի մարզում (29.1 %), այնուհետև ՀՀ Արմավիրի մարզում (24.8 %) և ՀՀ Արագածոտնի մարզում (21.7 %), հանրապետության 15.2 % աճի դիմաց:

Կովերի գլխաքանակը առավել մեծ տեսակարար կշիռ ունի ՀՀ Գեղարքունիքի մարզում, այն 2015 թվականին հանրապետության ամբողջ գլխաքնակում ունի 18.7 %, այնուհետև մեծ տեսակարար կշիռ ունի ՀՀ Շիրակի մարզը, որի մասնաբաժինը կազմում է 16.1 %, հաջորդը առավել մեծ տեսակարար կշիռ ունեն ՀՀ Արագածոտնի և Լոռու մարզերը, որոնց մասնաբաժինը համապատասխանաբար կազմել է 13.2 և 12.6 %:

Աղյուսակ 2.2.2

**ՀՀ-ում կովերի գլխաքանակի փոփոխությունը ըստՀՀ մարզերի 2010-2015թթ. տվյալներով հունվարի 1-ի դրությամբ**[69]

| **ՀՀ մարզերը և Երևան քաղքաքը** | **2011թ.** | | **2012թ.** | | **2013թ.** | | **2014թ.** | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հազ. գլուխ | տես. կշիռը, % | հազ. գլուխ | տես. կշիռը, % | հազ. գլուխ | տես. կշիռը, % | հազ. գլուխ | տես. կշիռը, % | հա գլ ո |
| Արագածոտն | 34.1 | 12.5 | 36.9 | 13.0 | 40.3 | 13.3 | 40.4 | 13.0 | 41. |
| Արարատ | 15.7 | 5.8 | 16.5 | 5.8 | 17.3 | 5.7 | 17.7 | 5.7 | 17. |
| Արմավիր | 16.5 | 6.1 | 18.2 | 6.4 | 20 | 6.6 | 20.1 | 6.5 | 20. |
| Գեղարքու-նիք | 51.9 | 19.0 | 52.0 | 18.4 | 54.3 | 17.9 | 56.7 | 18.3 | 58. |
| Լոռի | 33.7 | 12.4 | 36.2 | 12.8 | 39.1 | 12.9 | 39.2 | 12.7 | 39. |
| Կոտայք | 24.6 | 9.0 | 26.0 | 9.2 | 27.4 | 9.0 | 28.1 | 9.1 | 26. |
| Շիրակ | 45.5 | 16.7 | 45.9 | 16.2 | 50.2 | 16.6 | 50.6 | 16.3 | 50. |
| Սյունիք | 25.3 | 9.3 | 25.7 | 9.1 | 26.7 | 8.8 | 28.3 | 9.1 | 29. |
| Վայոց ձոր | 7.9 | 2.9 | 8.3 | 2.9 | 9.6 | 3.2 | 9.7 | 3.1 | 10. |
| Տավուշ | 16.3 | 6.0 | 16.4 | 5.8 | 17.2 | 5.7 | 17.5 | 5.7 | 17. |
| ք. Երևան | 1.1 | 0.4 | 1.2 | 0.4 | 1.2 | 0.4 | 1.3 | 0.4 | 1.3 |
| **Ընդամենը** | **272.6** | **100.0** | **283.3** | **100.0** | **303.3** | **100.0** | **309.6** | **100.0** | **313** |

[69] Պարենային ապահովություն և աղքատություն: 2014թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ, Երևան 2015թ. էջ 54-57: Պարենային ապահովություն և աղքատություն: 2015թ. հունվար-հունիս: ՀՀ ԱՎԾ, Երևան 2015թ. էջ 49-52

Շոշափելի ծավալի հումքի բազա է հանդիսանում մանր եղջերավոր անասնապահությունը, որը հիմնականում օգտագործվում է պանրի արտադրության համար: Հետևաբար նպատակահարմար ենք համարել ըստ մարզերի դիտարկել նաև մաքիների և մայր այծերի գլխաքանակի փոփոխությունը:

Մաքիների գլխաքանակի փոփոխությունը ըստ մարզերի ներկայացված է 2.2.3 աղյուսակում:

Աղյուսակ 2.2.3

**ՀՀ-ում մաքիների գլխաքանակի փոփոխությունը ըստ ՀՀ մարզերի 2010-2015թթ. տվյալներով հունվարի 1-ի դրությամբ**[70]

| **ՀՀ մարզերը և Երևան քաղաքը** | **2011թ.** | | **2012թ.** | | **2013թ.** | | **2014թ.** | | **2015թ.** | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հազ. գլուխ | տես. կշիռը, % | հազ. գլուխ | տես. կշիռը, % | հազ. գլուխ | տես. կշիռը, % | հազ. գլուխ | տես. կշիռը, % | հազ. գլուխ | տես. կշիռը, % |
| Արագածոտն | 52.1 | 17.4 | 59.5 | 15.3 | 64.4 | 14.2 | 68.8 | 14.3 | 69.9 | 14.0 |
| Արարատ | 47.8 | 14.7 | 50.3 | 12.9 | 57.2 | 12.6 | 65.7 | 13.6 | 65.3 | 13.0 |
| Արմավիր | 45.0 | 13.2 | 51.2 | 13.1 | 65.1 | 14.3 | 64.7 | 13.4 | 72.7 | 14.5 |
| Գեղարքունիք | 57.8 | 16.9 | 60.8 | 15.6 | 68.6 | 15.1 | 70.3 | 14.6 | 74.0 | 14.8 |
| Լոռի | 4.5 | 1.3 | 18.2 | 4.7 | 21.4 | 4.7 | 23.4 | 4.9 | 23.8 | 4.8 |
| Կոտայք | 23.1 | 6.8 | 27.8 | 7.1 | 32.8 | 7.2 | 31.0 | 6.4 | 31.1 | 6.2 |
| Շիրակ | 48.1 | 14.1 | 50.9 | 13.1 | 59.5 | 13.1 | 63.0 | 13.1 | 60.9 | 12.2 |
| Սյունիք | 45.8 | 13.4 | 51.8 | 13.3 | 62.8 | 13.8 | 70.3 | 14.6 | 76.8 | 15.3 |
| Վայոց ձոր | 9.2 | 2.7 | 9.8 | 2.5 | 12.3 | 2.7 | 12.4 | 2.6 | 13.6 | 2.7 |
| Տավուշ | 7.3 | 2.1 | 8.8 | 2.3 | 9.3 | 2.0 | 9.3 | 1.9 | 9.6 | 1.9 |
| ք. Երևան | 1.0 | 0.3 | 0.9 | 0.2 | 0.9 | 0.2 | 3.2 | 0.7 | 3.2 | 0.6 |
| **Ընդամենը** | **341.7** | **100.0** | **390.0** | **100.0** | **454.3** | **100.0** | **482** | **100.0** | **500.9** | **100.0** |

Աղյուսակի տվյալներից երևում է, որ դիտարկված ժամանակահատվածում մաքիների գլխաքանակը նույնպես ունեցել է աճի միտում, ընդհանուր վերցրած աճը կազմել է 46.6 %: Գլխաքանակը

[70] Պարենային ապահովությունը և աղքատությունը: 2014թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ, Երևան 2015թ. էջ 54-57: Պարենային ապահովությունը և աղքատությունը: 2015թ. հունվար-հունիս: ՀՀ ԱՎԾ, Երևան 2015թ. էջ 49-52

2015 թվականին կազմել է 500.9 հազ. գլուխ 2011 թվականի 341.7 հազ. գլխի դիմաց:

Մաքիների գլխանակը առավել մեծ տեսակարար կշիռ ունի ՀՀ Սյունիքի, Գեղարքունիքի, Արմավիրի և Արագածոտնի մարզերում, որտեղ գլխաքանակի մասնաբաժինը տատանվել է 14.0-15.3 %-ի սահմաններում:

2011-2015 թվականների համար դիտարկվել է նաև մայր այծերի գլխաքանակի փոփոխությունը: Վերջինիս տվյալները ներկայացված է 2.2.4 աղյուսակում:

Աղյուսակ 2.2.4

**ՀՀ-ում մայր այծերի գլխաքանակի փոփոխությունը ըստ ՀՀ մարզերի 2010-2015թթ. տվյալներով հունվարի 1-ի դրությամբ**[71]

| ՀՀ մարզերը և Երևան քաղաքը | 2011թ. | | 2012թ. | | 2013թ. | | 2014թ. | | 2015թ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հազ. գլուխ | տես. կշիռը, % | հազ. գլուխ | տես. կշիռը, % | հազ. գլուխ | տես. կշիռը, % | հազ. գլուխ | տես. կշիռը, % | հազ. գլուխ | տես. կշիռը, % |
| Արագածոտն | 2.6 | 11.8 | 2.4 | 10.8 | 2.6 | 12.1 | 2.8 | 12.7 | 2.6 | 11.4 |
| Արարատ | 2.5 | 11.4 | 2.3 | 10.3 | 2.3 | 10.7 | 2.6 | 11.8 | 2.5 | 10.9 |
| Արմավիր | 0.3 | 1.4 | 0.5 | 2.2 | 0.3 | 1.4 | 0.3 | 1.4 | 0.5 | 2.2 |
| Գեղարքունիք | 2.4 | 10.9 | 2.2 | 9.9 | 1.9 | 8.9 | 2.0 | 9.1 | 1.9 | 8.3 |
| Լոռի | 1.4 | 6.4 | 1.7 | 7.6 | 1.6 | 7.5 | 1.8 | 8.2 | 1.8 | 7.9 |
| Կոտայք | 2.9 | 13.2 | 2.7 | 12.1 | 2.6 | 12.1 | 2.7 | 12.3 | 2.7 | 11.8 |
| Շիրակ | 1.9 | 8.6 | 1.9 | 8.5 | 1.9 | 8.9 | 1.8 | 8.2 | 2.0 | 8.7 |
| Սյունիք | 2.0 | 9.1 | 2.5 | 11.2 | 2.4 | 11.2 | 2.3 | 10.5 | 2.4 | 10.5 |
| Վայոց ձոր | 5.1 | 23.2 | 4.9 | 22.0 | 4.6 | 21.5 | 4.7 | 21.4 | 5.4 | 23.6 |
| Տավուշ | 0.9 | 4.1 | 1.2 | 5.4 | 1.2 | 5.6 | 1 | 4.5 | 1.1 | 4.8 |
| **Ընդամենը** | **22.0** | 100.0 | **22.3** | **100.0** | **21.4** | **100.0** | **22.0** | **100.0** | **22.9** | **100.0** |

Ներկայացված տվյալներից երևում է, որ ընդհանուր վերցրած մայր այծերի գլխաքանակը դիտարկվող ժամանակահատվածում մեծ փոփոխություն չի կրել: Հանրապետությունում մայր այծերի գլխաքանակի գրեթե ¼ մասը կենտրոնացված է ՀՀ Վայոց ձորի

[71] Պարենային ապահովություն և աղքատություն: 2014թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ, Երևան 2015թ. էջ 54-57: Պարենային ապահովություն և աղքատություն: 2015թ. հունվար-հունիս: ՀՀ ԱՎԾ, Երևան 2015թ. էջ 49-52

մարզում: Համեմատաբար մեծ գլխաքանակ գոյություն ունի ՀՀ Կոտայքի, Արագածոտնի, Արարատի և Սյունիքի մարզերում:

ՈՒսումնասիրությունները ցույց է տալիս, որ կաթի հումքի ապահովման բնագավառում մանր եղջերավորների, հատկապես այծաբուծության ներուժը հանրապետությունում չի օգտագործվում:

Կաթնամթերքի արտադրության տեղական հումքի ծավալների մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ ենք համարել դիտարկել կաթի արտադրության ծավալն ըստ ՀՀ մարզերի:

2010-2014թթ. Կաթի արտադրության ծավալների փոփոխությունը ըստ ՀՀ մարզերի ներկայացված է 2.2.5 աղյուսակում:

Աղյուսակ 2.2.5

**ՀՀ-ում կաթի արտադրության ծավալի փոփոխությունը ըստ ՀՀ մարզերի 2010-2014թթ.**[72]

| **ՀՀ մարզերը և Երևան քաղաքը** | **2010թ.** | | **2011թ.** | | **2012թ.** | | **2013թ.** | | **2014թ.** | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հազ. տոն-նա | տես. կշիռը, % | հազ. տոն-նա | տես. կշիռը, % | հազ. տոն-նա | տես. կշիռը, % | հազ. տոն-նա | տես. կշիռը, % | հազ. տոն-նա | տես. կշիռը, % |
| Արագածոտն | 74.1 | 12.3 | 74.8 | 12.4 | 76.5 | 12.4 | 79.9 | 12.2 | 84.6 | 12.1 |
| Արարատ | 38.1 | 6.3 | 36.5 | 6.1 | 38.2 | 6.2 | 40.1 | 6.1 | 43.4 | 6.2 |
| Արմավիր | 36.1 | 6.0 | 36.1 | 6.0 | 37.4 | 6.0 | 40.5 | 6.2 | 43.9 | 6.3 |
| Գեղարքունիք | 112.4 | 18.7 | 114.5 | 19.0 | 116.3 | 18.8 | 120.7 | 18.4 | 128.6 | 18.4 |
| Լոռի | 77.1 | 12.8 | 76.2 | 12.7 | 77.7 | 12.6 | 81.3 | 12.4 | 86 | 12.3 |
| Կոտայք | 51.3 | 8.5 | 51.8 | 8.6 | 53.5 | 8.7 | 57.9 | 8.8 | 64.8 | 9.3 |
| Շիրակ | 99.0 | 16.5 | 98.8 | 16.4 | 101.5 | 16.4 | 107.6 | 16.4 | 110.5 | 15.8 |
| Սյունիք | 55.8 | 9.3 | 55.9 | 9.3 | 57.2 | 9.3 | 62.2 | 9.5 | 69.4 | 9.9 |
| Վայոց ձոր | 19.9 | 3.3 | 20 | 3.3 | 21.1 | 3.4 | 24.8 | 3.8 | 25.5 | 3.6 |
| Տավուշ | 34.8 | 5.8 | 34.9 | 5.8 | 36.6 | 5.9 | 39.5 | 6.0 | 41.0 | 5.9 |
| ք. Երևան | 2.3 | 0.4 | 2.0 | 0.3 | 2.2 | 0.4 | 2.5 | 0.4 | 2.7 | 0.4 |
| **Ընդամենը** | **600.9** | 100.0 | **601.5** | **100.0** | **618.2** | **100.0** | **657.0** | **100.0** | **700.4** | **100.0** |

Աղյուսակում ներկայացված տվյալները վկայում են, որ կաթի արտադրությունը հանրապետության բոլոր մարզերում ունեցել է աճի միտում: 2014թ. կաթի համախառն արտադրանքը կազմել է 700.4 հազ. տոննա, որը գերազանցում է 2010թ. ցուցանիշը 16.6 %-ով: Դիտարկված

[72] Պարենային ապահովություն և աղքատություն: 2015թ. հունվար-հունիս: ՀՀ ԱՎԾ, Երևան 2015թ. էջ 58-59

ժամանակահատվածում կաթի արտադրության ծավալների աճը հատկապես բարձր է եղել ՀՀ Վայոց ձորի (28.1 %), Կոտայքի (26.3 %), Սյունիքի (24.4 %) և Արմավիրի (21.6 %) մարզերում:

Կաթի արտադրության ծավալներով հանրապետությունում առաջատար է ՀՀ Գեղարքունիքի մարզը, որին բաժին է ընկնում կաթի համախառն արտադրանքի 18.4 %-ը: Այնուհետև, համեմատաբար մեծ մասնաբաժին ունեն ՀՀ Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերը, որոնց մասնաբաժինը համապատասխանաբար կազմել է` 15.8; 12.3 և 12.1 %:

Հանրապետությունում կաթնամթերքի արտադրության փոքր ու միջին ձեռնարկատիրության հումքի հիմնական բազա հանդիսանում է հանրապետության կաթնային անասնապահությունը, որի արտադրության ծավալները վերջին տարիներին ունեցել են կայուն աճի միտում:

Հանրապետությունում կաթի համախառն արտադրանքի փոփոխությունը 2005-2014թթ. ներկայացված է 3-րդ գծապատկերում:




**Գծապատկեր 3: ՀՀ կաթի համախառն արտադրանքի փոփոխությունն 2005-2014թթ.**[73]

[73] Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2000-2005թթ.: Վիճակագրական ժողովածու: ՀՀ ԱՎԾ: Երևան 2006թ. էջ 128: Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2006-2010թթ.: Վիճակագրական ժողովածու: ՀՀ ԱՎԾ: Երևան 2011թ. էջ 128: Պարենային ապահովություն և աղքատություն: 2015թ. հունվար-հունիս: ՀՀ ԱՎԾ, Երևան 2015թ. էջ 58-59

Գծապատկերում ներկայացված տվյալներից երևում է, որ հանրապետությունում կաթի համախառն արտադրանքը վերջին տասնամյակում էականորեն փոփոխվել է: Դիտարկված ժամանակահատվածի 2005-2008թթ. այն ունեցել է կայուն աճի միտում, իսկ 2009-2010թթ. այն ընդգծված ձևով նվազել է: 2011թ. գրեթե պահպանվել է կաթի արտադրության 2010թ. մակարդակը, իսկ 2012թ. նկատվել է կաթի արտադրության ծավալների աճ, որը լավագույն նախադրյալ է կաթնամթերքի արտադրության ծավալների և տեսականու ավելացման համար:

Կաթնամթերք արտադրող ՓՄՁ սուբյեկտների համար հումքի բազա է հանդիսանում նաև ներմուծվող չոր կաթը:

Հայաստանի Հանրապետության կաթնամթերք արտադրող «Դուստր Մարիաննա», «Գայանե և Անի», «Թամարա», «Դիետ», «Միլ կաթ» սահմանափակ պատասխանատվությամբ և «Աշտարակ կաթ» փակ բաժնետիրական ընկերություններում տեղակայված են նաև կաթի փոշու արտադրության տեխնոլոգիաներ, որոնց ընդհանուր հզորությունը 7 ժամում կազմում է շուրջ 1200 կգ (տարեկան հզորությունը շուրջ 330 տոննա):

Մրցունակ գներով արտադրանք թողարկելու հնարավորության դեպքում ընկերությունները կարող են արտադրել շուրջ 1700 տոննա կաթի փոշի, որը մասամբ կբավարարի ներքին շուկայի պահանջարկը և հնարավոր կլինի նաև որոշ չափով արտահանել: Հանրապետությունում կաթի փոշու շուկայի վերաբերյալ տվյալները ներկայացվում է 2.2.6 աղյուսակում:

Աղյուսակ 2.2.6

**Հայաստանի Հանրապետության կաթի փոշու շուկան բնութագրող տվյալները 2010-2014թթ.**[74]

| | Չափի միա-վորը | 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. | 2014թ. |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Կաթի և կաթնամթերքի | հազ. | 299.9 | 315.8 | 319.8 | 362.7 | 386.5 |

[74] Հիմք է ընդունվել ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ., 2011թ., 2012թ., 2013թ. և 2014թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ, Երևան 2011թ., 2012թ., 2013թ., 2014թ. և 2015թ. տեղեկատվական ամսական զեկույցի, ՀՀ մաքսային վիճակագրության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալները

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| արտադրությունը (վերա-հաշվարկված կաթի)՝ ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառման) | տոննա | | | | | |
| աղյուսակ 2.2.6 շարունակությունը | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Տեղական կաթի փոշու արտադրությունը | տոննա | 90 | 177.3 | 596.9 | 631.4 | 971.0 |
| Կաթի փոշու ներմուծումը | տոննա | 1810.6 | 1828.0 | 1479.6 | 1593.6 | 2435.5 |
| Կաթի փոշու արտահա-նումը | տոննա | 0.5 | 33.7 | 153.6 | 440.9 | 706 |
| Տեղական շուկայում կաթի փոշու օգտագործումը | տոննա | 1900.1 | 1971.6 | 1922.9 | 1784.1 | 2700.5 |
| Տեղական շուկայում կաթի փոշու օգտագործումը (վերահաշվարկված կաթի) | հազ. տոննա | 15.8 | 16.4 | 16.0 | 14.9 | 22.5 |
| Կաթի և կաթնամթերքի արտադրության մեջ օգտագործված կաթի փոշու մասնաբաժինը | % | 5.3 | 5.2 | 5.0 | 4.1 | 5.8 |

Աղյուսակի տվյալներից ակնհայտ է, որ դիտարկվող ժամանակահատվածում նկատելիորեն ավելացել է չոր կաթի տեղական արտադրության ծավալները, այն 2014թ. 10 անգամից ավել գերազանցել է 2010թ. ծավալները և կազմել 971 տոննա: Դիտարկվող ժամանակահատվածում, որոշակի տատանումներով, ավելացել է չոր կաթի ներմուծման ծավալները, այն 2014թ. կազմել է 2435.5 տոննա, 2010թ. 1810.6 տոննայի դիմաց: Ընդհանուր վերցրած ավելացել է կաթի փոշու օգտագործման ծավալները:

Այսպիսով, ներկայացվեց կաթի վերամշակման ոլորտի հումքի արտադրության բնագավառում ստեղծված վիճակն ու վերջին տարիների միտումները, որը որոշակիորեն ելակետ է հանդիսացել կաթի վերամշակման ոլորտի հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղղությամբ մոտեցումների ձևավորման համար:

## 2.3. ՀՀ կաթ վերամշակման փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտում ձևավորված հարաբերությունների և միտումների վերլուծությունը

Կաթնամթերքի շուկայում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը հանդիսանում է բնակչության սոցիալական վիճակի բարելավման, աշխատատեղերի ստեղծման և երկրի պարենային անվտանգության ապահովման կարևորագույն գործոն, հետևաբար՝ կաթնամթերքի շուկայում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված միջոցառումները պետք է կրեն շարունակական և համալիր բնույթ[75]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներկայումս հանրապետությունում գոյություն ունեն թվով 180 կաթնամթերք և պաղպաղակ արտադրող ընկերություն, որից 18-ը Երևանում, իսկ 162-ը ՀՀ մարզերում: Սակայն ըստ դիտարկումների գործունեություն են իրականացնում 65 ընկերություն, որից Երևան քաղաքում 8-ը, 57-ը՝ ՀՀ մարզերում: Ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի կաթնամթերք ու պաղպաղակ արտադրող ընկերությունների և դրանցից գործողների թվի մասին պատկերացում է տալիս 2.3.1 աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 2.3.1

**ՀՀ մարզերում և Երևան քաղաքում գոյություն ունեցող և գործող կաթնամթերք ու պաղպաղակ արտադրող ընկերությունների թիվը**

**(2014թ. տվյալներով)**

| ՀՀ մարզերը և Երևան քաղաքը | Կաթնամթերք և պաղպաղակ արտադրող ընկերությունները | |
|---|---|---|
| | Ընդամենը | այդ թվում՝ գործող |
| Արագածոտն | 21 | 15 |
| Արարատ | 7 | 3 |
| Արմավիր | 12 | 2 |
| Գեղարքունիք | 13 | 6 |
| Կոտայք | 11 | 5 |
| Լոռի | 24 | 7 |
| Շիրակ | 17 | 6 |
| Սյունիք | 36 | 7 |
| Վայոց ձոր | 9 | 3 |
| Տավուշ | 12 | 3 |
| ք. Երևան | 18 | 8 |

75 Ռ.Ա. Մակարյան-Կաթնամթերքի արտադրության և ՓՄՁ զարգացման վիճակը Հայաստանի Հանրապետությունում: Ագրոգիտություն 1-2, 2012, էջ 37

| Ընդամենը | 180 | 65 |
|---|---|---|

Աղյուսակում ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ ըստ կատարված դիտարկումների, կաթնամթերքի արտադրության գործող ընկերությունները հիմնականում կենտրոնացված են ՀՀ Արագածոտնի մարզում, Երևանում, ՀՀ Լոռու և Սյունիքի մարզերում: Ներկայացված տվյալներից երևում է, որը առկա արտադրական կարողությունները ամբողջական չեն օգտագործվում, որը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որին կանդրադառնանք առանձին:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակվող ցուցանիշների հիման վրա փորձել ենք դիտարկել կաթնամթերք արտադրող ընկերությունների վերջին տարիների զարգացման միտումները:

Կաթնամթերք արտադրող ձեռնարկությունների թիվը, արտադրանքի ծավալը ընթացիկ գներով, պատրաստի արտադրանքի իրացման ծավալները ընթացիկ գներով, արդյունաբերական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը և աշխատանքի արտադրողականության ցուցանիշները ներկայացված է 2.3.2 աղյուսակում:

Աղյուսակ 2.3.2

**ՀՀ կաթնամթերք արտադրող ընկերությունների տնտեսական գործունեության ամփոփցուցանիշները 2010-2014թթ.**[76]

| Ցուցանիշները | Չափի միավորը | 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. | 2014թ. |
|---|---|---|---|---|---|---|
| **Ձեռնարկություն-ների թիվը** | միավոր | 72 | 66 | 62 | 61 | 65 |
| **Արտադրանքի ծավալը ընթացիկ գներով** | մլն դրամ | 31942.6 | 41024.4 | 38862.7 | 42476.7 | 51236.4 |
| **Պատրաստի ար-տադրանքի իրա-ցումը ընթացիկ գներով** | մլն դրամ | 31638.3 | 39270.3 | 38257.1 | 41969.6 | 47385.0 |
| **Արդյունաբերա-** | մարդ | 1744 | 1690 | 1657 | 1611 | 1720 |

76 Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման 2010թ. հունվար-դեկտեմբերին, 2011թ. հունվար-դեկտեմբերին, 2012թ. հունվար-դեկտեմբերին, 2013թ. հունվար-դեկտեմբերին, 2014թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ, Երևան 2011թ., 2012թ., 2013թ., 2014թ. և 2015թ.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը** | | | | | | |
| **Աշխատանքի արտադրողականու-թյունը** | հազ.դրամ/մարդ | 18315.7 | 24274.8 | 23453.6 | 26366.7 | 29788.6 |

Աղյուսակի տվյալներից ակնհայտ է, որ կաթնամթերք արտադրող ընկերությունների թիվը դիտարկվող ժամանակահատվածում նվազել է 7 միավորով, այն 72-ից իջել է 65-ի: Նշված կաթնամթերք արտադրող ընկերություններից 8-ը պաղպաղակ արտադրող ընկերություններն են: Կաթնամթերք արտադրող ձեռնարկությունների կողմից արտադրված արտադրանքի ծավալն ընթացիկ գներով ունեցել է աճի միտում, այն որոշակիորեն նվազել է 2012թ., 2014թ. կազմել է 51.2 մլրդ դրամ 2010թ. 31.9 մլրդ դրամի դիմաց, նույն միտումը գոյություն է ունեցել նաև ապրանքային արտադրանքի համար: Արտադրական անձնակազմի թիվը որոշակիորեն տատանվել է, այն դիտարկվող ժամանակահատվածի սկզբի հետ համեմատած նվազել է և կազմել է 1720 մարդ: Մեկ կաթնամթերք արտադրող ընկերության աշխատողների թիվը 2014 թվականի տվյալներով կազմում է շուրջ 27 մարդ: Հետևաբար ակնհայտ է, որ կաթնամթերք վերամշակող ընկերությունների բացարձակ գերակշռող մասը համապատասխանում են ՓՄՁ չափանիշներին: Դիտարկվող ժամանակահատվածում, բացառությամբ 2012 թվականի, աշխատանքի արտադրողականությունը ունեցել է աճի միտում:

Ներկայացված միտումները գնահատվել էր ընթացիկ գներով, սակայն իրական վիճակը բնութագրելու համար առավել հիմնավորված է համարվում միտումների ներկայացումը հիմք ունենալով համադրելի գները: Հետևաբար առանձին աղյուսակով նպատակահարմար ենք գտել ներկայացնել արտադրանքի ծավալի, արտադրողականության ինդեքսի ցուցանիշները (աղյուսակ 2.3.3):

Աղյուսակ 2.3.3

**ՀՀ կաթնամթերք արտադրող ընկերությունների արտադրության և արտադրողականության ինդեքսը նախորդ տարվանկատմամբ 2011-2014թթ.**[77]

(%)

| Ցուցանիշները | 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. | 2014թ. |
|---|---|---|---|---|---|
| Արտադրանքի ծավալի ինդեքսը | 100.9 | 121.6 | 93.8 | 99.2 | 112.0 |
| Արտադրողականության ինդեքսը | 93.9 | 125.9 | 95.4 | 110.9 | 113.0 |

Ներկայացված տվյալներից երևում է, համադրելի գներով գնահատված, արտադրանքի ծավալի ինդեքսը 2012-2013թթ. ունեցել է նվազման միտում, սակայն ընթացիկ գներով գնահատման դեպքում դա ակնհայտ չէ, կապված գների աճի հետ:

Կաթնամթերք արտադրող ՓՄՁ սուբյեկտների գործունեության միտումները բնութագրելու համար նպատակահարմար ենք գտել դիտարկել կաթնամթերք արտադրող ընկերությունների կողմից արտադրված կաթնամթերքների ծավալի փոփոխությունն բնեղեն արտահայտությամբ: Կաթնամթերքի արտադրության ծավալների փոփոխությունն 2010-2014թթ. ներկայացված է 2.3.4 աղյուսակում:

Աղյուսակ 2.3.4

**ՀՀ-ում կաթնամթերքի արտադրության ծավալների փոփոխությունը 2010-2014թթ.**[78]

| Կաթնա-մթերքների անվանումը | Չափի միավորը | 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. | 2014թ. | 2014թ. 2010թ. նկատ-մամբ, % |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պանիր | տոննա | 17047.1 | 17614.2 | 17658.0 | 17375.4 | 18317.3 | 107.5 |
| Կաթ* | մլն | 299.9 | 315.8 | 319.8 | 362.7 | 386.5 | 128.9 |

---

[77] Հիմք է ընդունվել` Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման 2010թ. հունվար-դեկտեմբերին, 2011թ. հունվար-դեկտեմբերին, 2012թ. հունվար-դեկտեմբերին, 2013թ. հունվար-դեկտեմբերին, 2014թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ, Երևան 2011թ., 2012թ., 2013թ., 2014թ. և 2015թ. վիճակագրական տեղեկագրի տվյալները

[78] Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2010թ. հունվար-դեկտեմբերին, 2011թ. հունվար-դեկտեմբերին, 2012թ. հունվար-դեկտեմբերին, 2013թ. հունվար-դեկտեմբերին, 2014թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ, Երևան 2011թ., 2012թ., 2013թ., 2014թ. և 2015թ.

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | լիտր | | | | | | |
| Կեֆիր | տոննա | 230.4 | 275.4 | 247.0 | 221.5 | 304.8 | 132.3 |
| Կաթնաշոռ | տոննա | 736.1 | 949.8 | 849.4 | 1010.6 | 921.9 | 125.2 |
| Պանրիկներ | տոննա | 127.8 | 115.9 | 105.6 | 92.8 | 104.0 | 81.4 |
| Մածուն | տոննա | 3054.7 | 3518.8 | 3141.8 | 3549.4 | 4720.9 | 154.5 |
| Թթվասեր | տոննա | 3152.9 | 2864.1 | 3400.5 | 3452.6 | 3960.6 | 125.6 |
| Յոգուրտ | տոննա | 306.8 | 548.8 | 373.0 | 371.5 | 438.5 | 142.9 |
| Կաթնասեր | հազ. լիտր | 40.6 | 33.4 | 36.1 | 36.7 | 33.2 | 81.8 |
| Պաղպաղակ | հազ. լիտր | 3312.9 | 3480.8 | 3628.6 | 4165.1 | 6345.0 | 191.5 |

*Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրվածը (բացառությամբ ներքին սպառումը)

Աղյուսակի տվյալներից ակնհայտ է, որ դիտարկվող ժամանակահատվածում կաթնամթերքների հիմնական տեսակների համար արտադրության ծավալները էականորեն ավելացել են: Մասնավորապես 2014 թվականին պանրի արտադրության ծավալը կազմել է 18317.3 տոննա, որը գերազանցում է 2010 թվականի ցուցանիշը 7.5 %-ով: Կաթի արտադրության ծավալը դիտարկված ժամանակահատվածում ավելացել է 28.9 %-ով: Նկատելի աճ է գրանցվել կեֆիրի և կաթնաշոռի արտադրության ուղղությամբ, այն դիտարկված ժամանակահատվածում համապատասխանաբար ավելացել է 32.3 և 25.2 %-ով, իսկ թթվասերի արտադրությունն ավելացել է 25.6 %-ով: Մածունի արտադրության ծավալները 2014թ. կազմել է 4720.9 տոննա, որը դիտարկվող ժամանակահատվածի սկզբի` 2010թ. հետ համեմատած ունեցել է էական աճ, որը կազմել է 54.5 %: Գրեթե կրկնակի աճ է ունեցել պաղպաղակի արտադրությունը, այն 2014թ. կազմել է 6345.0 տոննա 2010թ. 3312.9 տոննայի դիմաց, աճը կազմել է 91.5 %:

Նշվածի հետ մեկտեղ որոշ կաթնամթերքների, մասնավորապես պանրիկների և կաթնասերի համար գրանցվել է արտադրության ծավալների 18-19 % կրճատում:

Հանրապետությունում կաթի վերամշակման փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտում ձևավորված հարաբերությունների և միտումների ուսումնասիրության համար օգտագործվել է նաև <<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր 2-ի Կաթի, տավարի եւ ոչխարի մսի վրա

հիմնված սննդի բիզնեսով զբաղվողների ուսումնասիրության>> արդյունքները[79]:

Հիշատակված ուսումնասիրության արդյունքներով բացահայտվել է, որ կաթի վերմշակումը հիմնականում ունի երկու ուղղվածություն՝ միայն պանրի արտադրություն և պանրի ու այլ կաթնամթերքների արտադրություն: Միայն պանրի արտադրության մեջ մասնագիտացված ընկերությունների թիվը կաթի վերմաշակմամբ զբաղվող ընկերությունների ընդհանուր թվի մեջ բավականին մեծ է (շուրջ 20 %), ինչը պայմանավորված է հատկապես այն հանգամանքով, որ վերջինիս արտադրությունը չի պահանջում մեծ ներդրումներ, բացի այդ պանրի արտադրությամբ զբաղվողները հնարավորություն ունեն նաև արտահանում կազմակերպելու, ինչը բավականին դժվար խնդիր է այլ կաթնամթերք արտադրողների համար՝ հաշվի առնելով կաթնամթերքի պահպանման ժամկետները:

Կաթի վերամշակմամբ զբաղվող ընկերությունները հիմնականում ունեն փոքր հզորություն (տարեկան մինչև 2000 տոննա): Կաթի վերամշակմամբ զբաղվող ընկերությունների զգալի մասը, այն է 46.2 %-ը մասնագիտացված է պանրի արտադրության մեջ, ինչը իր հերթին չի պահանջում արտադրական մեծ հզորություն:

Ըստ նշված ուսումնասիրության, մինչև 2001 տոննա արտադրական հզորություն ունեցող ընկերությունների տեսակարար կշիռը կազմում է 68.0 %, իսկ 2002 տոննայից բարձր հզորություն ունեցողներինը՝ 32.0 %: Մեծ մասնաբաժին ունեն մինչև 50 աշխատող ունեցող ընկերությունները: Վերջինիս տեսակարար կշիռը կազմում է՝ 74.0 %, 51-99 աշխատող ունեցող կաթնամթերք արտադրող ընկերությունների մասնաբաժինը՝ 9.0 % է, իսկ 100 աշխատակցից ավել ունեցող ընկերությունների տեսակարար կշիռը՝ 17.0 %:

Տվյալ հետազոտության համաձայն 2001 տոննայից փոքր արտադրական հզորություն ունեցող կազմակերպությունների 92.3 %-ը ունեն մինչև 50 աշխատող, իսկ 7.7 %-ը՝ 51-99 աշխատող: 2002

[79] Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր 2 Կաթի, տավարի եւ ոչխարի մսի վրա հիմնված սննդի բիզնեսով զբաղվողների ուսումնասիրություն: Խորհրդատու՝ Կ. Մարտիրոսյան

տոննայից բարձր արտադրական հզորություններ ունեցող կազմակերպությունների ընդհանուր թվի 50.0 %-ը ունեն մինչև 50 աշխատողներ, իսկ մնացած՝ 50 %-ը 100-ից ավել աշխատողներ:

Ըստ հիշատակված ուսումնասիրության դիտարկումների 2000 տոննաից ավել արտադրական հզորություն ունեցող կաթնամթերքի վերամշակմամբ զբաղվող կազմակերպությունների ավել ի քան 30 %-ը ունի տարեկան 1 մլրդ ՀՀ դրամից ավել հասույթ: Իսկ առավել փոքր արտադրական հզորություններ ունեցող կազմակերպությունների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում փոքր ձեռնարկությունները, որոնց տարեկան հասույթը չի գերազանցում 50 միլիոն դրամը՝ 63.6 %:

Այսպիսով տվյալ բաժնում կատարված ուսումնասիրությունների արդյունքները ելակետեն հանդիսացել կաթնամթերքի արտադրության բնագավառի հիմնախնդիրների բացահայտման և դրանց վրաազդող գործոնների գնահատման համար:

## 2.4. ՀՀ կաթի վերամշակման փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կաթնամթերք արտադրող փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում ստեղծվել է հետևյալ իրավիճակը: Մասնավորապես ցածր է ձեռնարկությունների արտադրական հզորությունների օգտագործման մակարդակը, ընկերություններն ունեն շրջանառու միջոցների և կապիտալ ներդրումներ իրականացնելու համար սեփական և փոխառու միջոցների պակաս, կարիք ունեն արդիական տեխնոլոգիաներով վերազինման, չեն ներդրվել սննդի անվտանգության համակարգերը, լաբորատոր կարողությունները արմատական վերազինման անհրաժեշտություն ունեն, լիարժեք արմատավորված չէ կաթնամթերքի հումք արտադրող և կաթ վերամշակող ընկերությունների միջև պայմանագրային հարաբերությունները, ցածր են կաթի որակական հատկանիշները,

ցածր են կաթի մթերման գները, որը չի խթանում կաթնային անասնապահության զարգացումը և այլն:

ՀՀ կաթի վերամշակման փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման հիմնախնդիրները բազմազան են և այդ ըստ կատարված ուսումնասիրությունների կարելի բաժանել հետևյալ խմբերի`

- կաթի արտադրության կազմակերպման,
- կաթի նախնական մշակման, պահպանման,
- կաթնամթերքի հումքի իրացման,
- կաթնամթերքի արտադրության գործընթացի հետ կապված,
- կաթնամթերքի արտադրությունում սննդամթերքի անվտանգության չափանիշներին և ստանդարտներին համապատասխանության ապահովման,
- կաթնամթերքի իրացման հետ կապված,
- կաթնամթերքի արտադրության հարաբերությունները կարգավորող իրավա-օրենսդրական դաշտի համալրման և կատարելագործման:

Այժմ փորձենք ըստ ներկայացված ուղղությունների դիտարկենք առանձին հիմնախնդիրները և դրանց առանձնահատկությունները:

**<u>Կաթի արտադրության կազմակերպման հիմնախնդիրներ</u>**: Ըստ գնահատման կաթի արտադրությամբ (2015թ. դրությամբ) զբաղվում են հանրապետության գյուղատնտեսությունում գործող շուրջ 200 հազ. գյուղացիական տնտեսություն: Կերարտադրության բազա են հանդիսանում 1051.3 հազ. հեկտար գյուղամերձ և հեռագնա արոտները, 121.7 հազ. հա խոտհարքները[80], 80.2 հազ. հա կերային մշակաբույսերը[81], հացահատիկային մշակաբույսերի շարքում ընդգրկված կերային նշանակություն ունեցող հատիկային կուլտուրաները: Այստեղ առանձնանում է կաթնային անասնապահության համար անհրաժեշտ բնական և դաշտային կերարտադրության կերերով ապահովման,

---

[80] ՀՀ կառավարության 2015թ. հոկտեմբերի 15-ի <<Հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2015թ. հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին>> N1189-Ն որոշում

[81] 2015թ. բերքի տակ կատարված գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի համատարած հաշվառման հանրագումարները: Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, 2015թ., էջ 8

կենդանիների պահվածքի և խնամքի պայմանների բարելավման, մսուրային և արոտային պահվածքի ճիշտ զուգակցման, կաթնային հոտի տոհմային և մթերատու հատկանիշների բարելավման, անասնաբուժական միջոցառումների իրականացման, կաթի պահանջվող որակի ապահովման, կթի և արտադրական գործընթացների կազմակերպման և այլ հիմնահարցերը: Կթի գործընթացը գյուղացիական տնտեսությունների գերակշռող մասի մոտ մեքենայացված չէ, երբեմն չի պահպանվում հիգիենիայի պահանջները:

Խնդիրների շարքում է կաթի արտադրության գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ սեփական և փոխառու (վարկային) միջոցների ապահովվածության ցածր մակարդակը: Բարձր են վարկերի տոկոսադրույքները, ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքները 2015թ. նոյեմբերի տվյալներով մինչև մեկ տարի ժամկետով տրամադրված ՀՀ դրամով վարկերի համար կազմել է 17.02 %, ԱՄՆ դոլարով տրված վարկերինը՝ 10.95 %, իսկ մեկ տարուց ավել տրված վարկերինը համապատասխանաբար՝ 18.05 և 11.49 %[82]: Վարկավորման պետական ծրագրերի արդյունքում գյուղատնտեսությունում վարկավորումը ըստ գնահատման իրականացվում է 1.5-2.0 տոկոսային կետով ցածր, սակայն այդ տոկոսադրույքը և վարկավորման պայմանները չեն համապատասխանում գյուղատնտեսության առանձնահատկություններին և հնարավորություններին:

Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից հանրապետությունում տրամադրված վարկերի և դրանում գյուղատնտեսության ու անասնապահության ճյուղի վարկավորման վերաբերյալ պատկերացում է տալիս 2.4.1 աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 2.4.1

**ՀՀ Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի ընդհանուր և գյուղատնտեսության ճյուղերում տրամադրված վարկերի ծավալը ՀՀ դրամով և արտարժույթով 2015թ. հոկտեմբերի դրությամբ**[83]

[82] https://www.cba.am/

[83] Հիմք է ընդունվել https://www.cba.am/ տվյալները

| Ցուցանիշները | Չափի միավորը | ՀՀ դրամով | Արտարժույթով | Ընդամենը վարկեր |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **Ընդամենը առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկեր** | մլն դրամ | 689196.3 | 1296848.0 | 1986044.3 |
| Գյուղատնտեսությունում, անտառային տնտեսությունում, ձկնորսությունում տրամադրված վարկեր | մլն դրամ | 41147.1 | 106812.2 | 147959.3 |
| որից՝ բուսաբուծությունում | մլն դրամ | 19788.6 | 58336.1 | 78124.7 |
| անասնաբուծությունում | մլն դրամ | 18343.4 | 31858.9 | 50202.3 |
| Գյուղատնտեսությունում, անտառային տնտեսությունում, ձկնորսությունում տրամադրված վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր մեջ | % | 6.0 | 8.2 | 7.4 |
| Անասնաբուծությունում տրամադրված վարկերի տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ | % | 2.7 | 2.5 | 2.5 |
| Անասնաբուծությունում տրամադրված վարկերի տեսակարար կշիռը գյուղատնտեսությունում տրամադրված վարկերի մեջ | % | 44.6 | 29.8 | 33.9 |
| **Ընդամենը վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկեր** | մլն դրամ | 202622.0 | 56921.1 | 259543.1 |

աղյուսակ 2.4.1-ի շարունակությունը

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| Գյուղատնտեսությունում, անտառային տնտեսությունում, ձկնորսությունում տրամադրված վարկեր | մլն դրամ | 36291.5 | 15517.4 | 51808.9 |
| որից՝ բուսաբուծությունում | մլն դրամ | 17511.2 | 5567.2 | 23078.4 |
| անասնաբուծությունում | մլն դրամ | 16866.4 | 9082.4 | 25948.8 |
| Գյուղատնտեսությունում, անտառային տնտեսությունում, ձկնորսությունում տրամադրված վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր մեջ | % | 17.9 | 27.3 | 20.0 |
| Անասնաբուծությունում տրամադրված վարկերի տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ | % | 8.3 | 16.0 | 10.0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Անասնաբուծությունում տրամադրված վարկերի տեսակարար կշիռը գյուղատնտեսությունում տրամադրված վարկերի մեջ | % | 46.5 | 58.5 | 50.1 |
| **Ընդամենը տրամադրված վարկեր** | մլն դրամ | 891818.3 | 1353769.1 | 2245587.4 |
| Ընդամենը գյուղատնտեսությունում, անտառային տնտեսությունում, ձկնորսությունում տրամադրված վարկեր | մլն դրամ | 77438.6 | 122329.6 | 199768.2 |
| որից՝ բուսաբուծությունում | մլն դրամ | 37299.8 | 63903.3 | 101203.1 |
| անասնաբուծությունում | մլն դրամ | 35209.8 | 40941.3 | 76151.1 |
| Գյուղատնտեսությունում, անտառային տնտեսությունում, ձկնորսությունում տրամադրված վարկերի տեսակարակշիռը ընդհանուր մեջ | % | 8.7 | 9.0 | 8.9 |
| Անասնաբուծությունում տրամադրված վարկերի տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ | % | 3.9 | 3.0 | 3.4 |
| Անասնաբուծությունում տրամադրված վարկերի տեսակարար կշիռը գյուղատնտեսությունում տրամադրված վարկերի մեջ | % | 45.5 | 33.5 | 38.1 |

Ներկայացված տվյալներից երևում է, որ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից գյուղատնտեսությունում, անտառային տնտեսությունում, ձկնորսությունում տրամադրված վարկերը 2015թ. նոյեմբերի դրությամբ կազմել է 199.8 մլրդ դրամ, որը կազմում է ընդհանուր տրամադրված վարկերի 8.9 %-ը, իսկ անասնաբուծությունում տրամադրված վարկերը կազմում է հազիվ 3.4 %, որը բավականին փոքր ցուցանիշ է երկրի համախառն ներքին արդյունքի ձևավորման մեջ անասնապահության ճյուղի մասնաբաժնի (շուրջ 8 %-ի) նկատմամբ: Ընդհանուր վերցրած գյուղատնտեսությունում տրամադրված վարկերի գերակշռող մասը՝ ավելի քան 61.0 %-ը տրամադրվում է արտարժույթով, իսկ անասնաբուծությունում տրամադրվածի վարկերի՝ 53.7 %-ը: Վերջինս չի նպաստում անասնապահության ճյուղի զարգացմանը: Հետևաբար խնդիրներից մեկը կաթնային անասնապահության ճյուղին մատչելի պայմաններով, հայկական դրամով վարկերի տրամադրումն է:

**<u>Կաթի նախնական մշակման, պահպանման հիմնախնդիրներ</u>**: Տվյալ դեպքում առանձնանում են կաթի նախնական սառեցման և

մասնագիտացված տեղակայանքներում պահպանման կազմակերպման խնդիրները: Այստեղ խնդիր է այդ գործընթացների կազմակերպման համար անհրաժեշտ տեղակայանքների և սարքավորումների (հատուկ ռեզերվուարների) առկայությունը, որոնցով գյուղական համայնքների ապահովվածությունը չափազանց ցածր է և խնդիր է դրանց համալրման մեխանիզմների և արդյունավետ օգտագործման մեխանիզմների ներդրումը: Ըստ ուսումնասիրությունների գյուղական համայնքների շուրջ 65 %-ը հագեցած չէ կաթի հավաքման և պահպանման տեղակայանքներով:

**Կաթնամթերքի հումքի իրացման հիմնախնդիրներ**: Այս հիմնախնդիրների շարքում են կաթ արտադրող և վերամշակող տնտեսավարող սուբյեկտների միջև փոխշահավետ պայմանագրային հարաբերությունների ներդրումը և զարգացումը, կաթի հավաքման և սահմանված տեխնոլոգիական պահանջներին համապատասխան վերամշակող ընկերություններ փոխադրման գործընթացի կազմակերպումը: Կարևոր խնդիր է կոոպերացման սկզբունքով կաթի իրացման գործընթացի կազմակերպումը, կաթնամթերքի հումքի փոխշահավետ գնի սահմանումը և կիրառումը: Էական մեծ տարբերություններ գոյություն ունի գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված կաթի գնի և մանրածախ գնի միջև: Մանրածախ և գյուղացիական տնտեսությունների կողմից կաթի իրացման գնի հարաբերակցության ցուցանիշները ներկայացված են 2.4.2 աղյուսակում:

Կաթի մանրածախ գնի և գյուղացիական տնտեսությունների կողմից կաթի գնի հարաբերակցությունը 2.1-2.9 սահմաններում գտնվելը իր հերթին պայմանավորված է կաթի իրացման համակարգի անկատարությամբ, հետևաբար այդ բնագավառում առկա են հիմնախնդիրներ որոնք լուծում են պահանջում:

Աղյուսակ 2.4.2

**ՀՀ-ում 1 լիտր կաթի մանրածախ գնի և գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման գնի հարաբերակցությունը**

**(դրամ)**

| Ցուցանիշները | 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. | 2014թ. |
|---|---|---|---|---|---|

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման գինը | 114 | 163 | 143 | 145 | 162 |
| Մանրածախ գինը | 328 | 342 | 343 | 394 | 411 |
| Մանրածախ գնի և գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման գնի հարաբերակցությունը | 2.9 | 2.1 | 2.4 | 2.7 | 2.5 |

**<u>Կաթնամթերքի արտադրության գործընթացի հետ կապված հիմնախնդիրներ</u>**: Այստեղ հիմնախնդիրներն առավել բազմազան են, մասնավորապես ներքին և արտաքին շուկայի պահանջարկին համապատասխան կաթնամթերքի տեսականու կազմի ապահովումը, արտադրանքի մրցունակության բարձրացումը, ներքին և արտաքին շուկաներում իրենց տեղի պահպանումն ու ընդլայնումը, գովազդի կազմակերպումը, շուկայի պահանջներին արագ արձագանքման հնարավորությունների ստեղծումը, արդիական տեխնոլոգիաների կիրառման և արտադրության կազմակերպման նպատակով կադրերի ուսուցումը և վերապատրաստումը, արտադրության գործընթացում արդիական տեխնոլոգիաների ներդրումը և արտադրության վերազինումը: Հիմնախնդիրների շարքում է նաև արտադրական հզորությունների օգտագործման մակարդակի բարձրացումը: Կարևոր հիմնախնդիրներից է կաթնամթերքի արտադրության հետ կապված շրջանառու միջոցների և կապիտալ ներդրումների իրականացման համար մատչելի վարկային միջոցների պակասը:

Կաթնամթերքի արտադրության բնագավառին 2015թ. հոկտեմբերի դրությամբ տրամադրված վարկերի մասին պատկերացում է տալիս 2.4.3 աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 2.4.3

**Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վակերի ընդհանուր և կաթնամթերքի արտադրության ոլորտում տրամադրված վարկերի ծավալը ՀՀ դրամով և արտարժույթով 2015թ. հոկտեմբերի դրությամբ**[84]

[84] Հիմք է ընդունվել https://www.cba.am/ տվյալները

| Ցուցանիշները | Չափի միավորը | ՀՀ դրամով | Արտարժույթով | Ընդամենը վարկեր |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **Ընդամենը առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկեր** | մլն դրամ | 689196.3 | 1296848.0 | 1986044.3 |
| Մշակող արդյունաբերության տրամադրված վարկեր | մլն դրամ | 28688.5 | 146150.9 | 174839.4 |
| Կաթնամթերքի ոլորտին տրամադրված վարկեր | մլն դրամ | 2071.9 | 10344.9 | 12416.8 |
| Մշակող արդյունաբերությանը տրամադրված վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր մեջ | % | 4.2 | 11.3 | 8.8 |
| Կաթնամթերքի ոլորտին տրամադրվող վարկերի տեսակակար կշիռը տրամադրված ընդհանուրի վարկերի մեջ | % | 0.3 | 0.8 | 0.6 |
| Կաթնամթերքի ոլորտին տրամադրվող վարկերի տեսակակար կշիռը մշակող արդյունաբերությանը տրամադրված վարկերի մեջ | % | 7.2 | 7.1 | 7.1 |
| **Ընդամենը վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկեր** | մլն դրամ | 202622.0 | 56921.1 | 259543.1 |
| Մշակող արդյունաբերության տրամադրված վարկեր | մլն դրամ | 36291.5 | 15517.4 | 51808.9 |
| Կաթնամթերքի ոլորտին տրամադրված վարկեր | մլն դրամ | 17511.2 | 5567.2 | 23078.4 |
| Մշակող արդյունաբերությանը տրամադրված վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր մեջ | % | 17.9 | 27.3 | 20.0 |
| Կաթնամթերքի ոլորտին տրամադրվող վարկերի տեսակակար կշիռը տրամադրված ընդհանուրի վարկերի մեջ | % | 8.6 | 9.8 | 8.9 |
| Կաթնամթերքի ոլորտին տրամադրվող վարկերի տեսակակար կշիռը մշակող արդյունաբերությանը տրամադրված վարկերի մեջ | % | 48.3 | 35.9 | 44.5 |

աղյուսակ 2.4.3-ի շարունակությունը

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| **Ընդամենը տրամադրված վարկեր** | մլն դրամ | 891818.3 | 1353769.1 | 2245587.4 |
| Ընդամենը մշակող արդյոնաբեորությանը տրամադրված վարկեր | մլն դրամ | 64980.0 | 161668.3 | 226648.3 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընդամենը կաթնամթերքի ու որտին տրամադրված վարկեր | մլն դրամ | 19583.1 | 15912.1 | 35495.2 |
| Մշակող արդյունաբերությանը տրամադրված վարկերի տեսակարա կշիռը ընդհանուր մեջ | % | 7.3 | 11.9 | 10.1 |
| Կաթնամթերքի ու որտին տրամադրվող վարկերի տեսակակար կշիռը տրամադրված ընդհանուրի վարկերի մեջ | % | 2.2 | 1.2 | 1.6 |
| Կաթնամթերքի ու որտին տրամադրվող վարկերի տեսակակար կշիռը մշակող արդյունաբերությանը տրամադրված վարկերի մեջ | % | 30.1 | 9.8 | 15.7 |

Ընդհանուր վերցրած կաթնամթերային ու որտին տրամադրած վարկերի ծավալը 2015թ. հոկտեմբերի դրությամբ կազմել է 35.5 մլրդ դրամ, որը կազմում է ընդհանուր տրամադրված վարկերի 1.6 և մշակող արդյունաբերությանը տրամադրած վարկերի 15.7 %-ը: Հաշվի առնելով, որ մշակող արդյունաբերության մեջ կաթնամթերքի արտադրության մասնաբաժինը կազմում է 6.1 %, ապա կարծես թե ծավալի առումով մշակող արդյունմաբերության այլ ոլորտների հետ համեմատած հարաբերակցությունը պահպանված է, սակայն այստեղ խնդիր կա վարկավորման տոկոսադրույքի, վարկերի ժամկետների և ՀՀ դրամով տրամադրվող վարկերի հետ:

**<u>Կաթնամթերքի արտադրությունում սննդամթերքի անվտանգության չափանիշներին և ստանդարտներին համապատասխանության ապահովման հիմնախնդիրներ</u>**: Ընդգրկում է կաթնամթերքի արտադրություններում լաբորատոր կարողություն-ների ստեղծումն ու ընդլայնումը, ԻՍՕ 22000 սննդամթերքի անվտանգության ստանդարտի և HACCP համակարգի ներդրումը: Սննդամթերքի անվտանգության չափանիշների կիրառման և վերահսկման ուղղությամբ մասնագետների ուսուցումն ու վերապատրաստումը:

**<u>Կաթնամթերքի իրացման հետ կապված հիմնախնդիրներ</u>**: Այստեղ հիմնախնդիրներն առնչվում են շուկաների ուսումնասիրության, մարկեթինգային աշխատանքների կազմակերպման, իրացման բանակցությունների վարման, առաքող ընկերությունների հետ պայմանագրային հարաբերությունների ձևավորման, փոխադրման

արդյունավետ ուղիների և միջոցների ընտրության, շուկայական պահանջարկի գնահատման հետ:

**<u>Կաթնամթերքի արտադրության հարաբերությունները կարգավորող իրավաօրենսդրական դաշտի համալրման և կատարելագործման հետ կապված հիմնախնդիրներ</u>**: Այստեղ կարևոր է համարվում Եվրասիական տնտեսական միության միասնական չափանիշներին համապատասխան կաթի և կաթնամթերքի տեխնիկական կանոնակարգերի մշակումը և կիրառումը, կաթ արտադրողների և վերամշակողների միջև կաթի իրացման օրինակելի պայմանագրերի մշակումը և ներդրումը: Օրենսդրական վերանայման անհրաժեշտություն ունեն կաթնամթերքի արտադրությանն առնչվող հարկային հարաբերությունները, նպատակ ունենալով կաթնա-մթերքի արտադրության խթանումը:

Նշված հիմնախնդիրները փոխկապակցված են պայմանավորված են մեկը մյուսով և դրանցից որևիցե մեկի անտեսումը կարող է հանգեցնել կաթի արտադրությունից մինչև կաթնամթերքի իրացումը շղթայի որևիցե օղակի խզմանը և անցանկալի արդյունքների ստացմանը: Ներկայացված հիմնախնդիրները և դրանց լուծումը պայմանավորված են բազմաթիվ գործոններով, որոնք խոշորացված ձևով կարելի է տարանջատել՝ գյուղատնտեսության առանձնահատկություններով պայմանավորված, տարածքային (տեղաբաշխման) և սոցիալ-տնտեսական:

Փորձ ենք արել ըստ առանձին խումբ հիմնախնդիրների գնահատել դրանց առկայությունն ու լուծումն պայմանավորող գործոնները:

Առանձին հիմնախնդիրները և դրանց լուծումը պայմանավորող գործոնները ներկայացվում է սխեմատիկ ձևով (գծապատկեր 4):

Այսպիսով տվյալ բաժնում կատարված ուսումնասիրությունները հնարավորություն տվեց բացահայտել կաթի վերամշակման փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները, որոնք հիմնականում հետևյալն են՝




**Գծապատկեր 4: ՀՀ կաթի վերամշակման փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները**

Կաթի արտադրության կազմակերպման հիմնախնդրի պայմանավորող գործոններն են՝ անասնապահության ձևավորված

մասնագիտացումը, բնական հանդակների տարածքները, դրանց օգտագործման վիճակը, դաշտային կերարտադրության կառուցվածքը, կաթնային մթերատվությունը, կաթնային անասնապահության մեքենայացման մակարդակը, շրջանառու միջոցների համալրման և կապիտալ ներդրումների համար սեփական և փոխառու միջոցների առկայությունը:

Կաթի նախնական մշակման, պահպանման հիմնախնդրի պայմանավորող գործոններն են՝ կաթի նախնական մշակման, հավաքման և պահպանման սարքավորումներով ապահովվածությունը, համապատասխան մասնագետների առկայությունը:

Կաթնամթերքի հումքի իրացման հիմնախնդրի պայմանավորող գործոններն են՝ կաթի իրացման պայմանագրերի առկայությունը, գնող իրացնող կառույցների առկայությունը, դրանց գործունեության վիճակը, արտադրողների և վերամշակողների կողմից առաջարկվող կաթի գների մակարդակը:

Կաթնամթերքի արտադրության գործընթացի հետ կապված հիմնախնդրի պայմանավորող գործոններն են՝ կաթնամթերքի տեսականին, կաթնամթերքի բացթողնման գները, արտադրական հզորությունների օգտագործման մակարդակը, համախառն արտադրանքի արժեքը, արդիական տեխնոլոգիաներով հագեցվածությունը, շրջանառու միջոցների համալրման և կապիտալ ներդրումների ապահովման հնարավորությունները:

Կաթնամթերքի արտադրությունում սննդամթերքի անվտանգության չափանիշներին և ստանդարտներին համապատասխանության հիմնախնդրի պայմանավորող գործոններն են՝ կաթնամթերքի կանոնակարգերի, սննդամթերքի անվտանգության չափանիշների կիրառման վիճակը, մասնավորապես՝ ԻՍO 22000 ստանդարտների և HACCP համակարգի ներդրվածությունը, կամ ընթացքը, լաբորատոր կարողությունների վիճակը:

Կաթնամթերքի իրացման հետ կապված հիմնախնդրի պայմանավորող գործոններն են՝ ապրանքային արտադրանքի ծավալը ըստ արտադրատեսակների, մարկեթինգային կառույցների առկայությունը, իրացման ուղղությունները ու աշխար-

հագրությունը, սպառողների հետ պայմանագրային հարաբերությունների վիճակը:

Կաթնամթերքի արտադրության հարաբերությունները կարգավո-րող իրավա-օրենսդրական դաշտի համալրումը և կատարելագործման հիմնախնդրի պայմանավորող գործոններն են՝ կաթնամթերքի հումք արտադրող և վերամշակող ընկերությունների միջև օրինակելի պայմանագրի առկայությունը, կաթնամթերքի հումքի երաշխավորված գների օրենսդրական հիմքերի ստեղծումը, առկա հարկային համակարգը:

ՀՀ կաթի վերամշակման փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման հիմնախնդիրների բացահայտումը և դրանք պայմանավորող գործոնների գնահատումը ելակետային հիմքեր են ստեղծել այդ հիմնախնդիրների լուծման քաղաքականության հիմնական ուղղությունների մշակման համար[85]:

## ԳԼՈՒԽ 3: ՀՀ ԿԱԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՓՈՔՐ ՈՒ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

[85] Ռ.Ա. Մակարյան-Հայաստանի հանրապետությունում կաթի վերամշակման փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները//: Ագրոգիտություն 5-6, 2016, էջ 129-135

### 3.1. Կաթի վերամշակման ոլորտի գործունեության վրա տարբեր գործոնների ազդեցության չափի գնահատումը

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի կաթի վերամշակման արտադրության վրա մի շարք գործոնների քանակական գնահատականը որոշակիորեն հիմք է հանդիսացել վերջինիս հիմնախնդիրների լուծման ուղղությունների կանխորոշման համար: Որպես ազդող գործոն հիմնականում դիտարկել ենք երկարատև ժամանակահատվածի համար (10 տարվա) կաթի մթերման գնի, կաթի արտադրության ծավալների և այլ գործոնների ազդեցությունը կաթնամթերքի արտադրության ծավալների, կաթնամթերքի մանրածախ գների վրա: Կաթնամթերքը դիտարկվել է ինչպես առանձին կաթնամթերքների, այնպես էլ առանձին կաթնամթերքների ծավալները վերահաշվարկած կաթի: Վերջինիս համար կիրառել ենք կաթնամթերքները կաթի վերածման համապատասխան գործակիցները: Մասնավորապես կաթնամթերքները կաթի վերածման համար ընդունվել են հետևյալ գործակիցները՝ թթվասերի համար՝ 5.0, սերուցքային կարագինը՝ 22.0, կաթնաշոռը՝ 3.8, պանիրը՝ 9.8, հալած պանիրը՝ 7.7, պաղպաղակը՝ 3.0[86]:

Որպես գործոն ցուցանիշ ընդունվել է ինչպես հիմնական կաթնամթերքները վերահաշվարկված կաթի, այնպես էլ առանձին կաթնամթերքներ:

Կաթի վերամշակման ոլորտի գործոնային վերլուծության համար ելակետային տվյալները ներկայացվել է 3.1.1 աղյուսակում:

[86] Հիմք է ընդունվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ Рекомендация «О Методологии расчета совместных прогнозов спроса и предложения государств-членов Таможенного союза и Единого экономического пространства по основным видам сельскохозяйственной продукции и продоволствия» «24» декабря 2014г. N22, г.Москва (Приложение N4)

Աղյուսակ 3.1.1

## ՀՀ-ում կաթի վերամշակման ոլորտի գործունեության վերլուծության համար 2006-2015թթ. ելակետային տվյալներ[87,88]

| Տարեթվերը | Կաթի համախառն արտադրանքը, հազ. տոննա | ...գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման գինը, դրամ | 1 լ հում կաթի իրացման միջին գինը, դրամ | 1 կգ «Չանախ» պանրի միջին մանրածախ գինը, դրամ | 1 կգ տեղական պանրի միջին մանրածախ գինը, դրամ | Կաթնամթերքների արտադրությունը ըստ տեսակների, | | | | | | | | | | Կաթնամթերքի ներմուծումը՝ վերահաշվարկված կաթի համարժեքով, հազ. տոննա |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Կաթ, մլն լիտր | Պանիր, տոննա | Կեֆիր, տոննա | Կաթնաշոռ, տոննա | Պանիրիկներ, տոննա | Մածուն, տոննա | Թթվասեր, տոննա | Յոգուրտ, տոննա | Կաթնասեր, տոննա | Պաղպաղակ, տոննա | |
| 2006 | 620.0 | 107 | 286 | 1336 | 1083 | - | 14653.9 | - | - | - | - | - | - | - | 2362.6 | 311.9* |
| 2007 | 641.2 | 112 | 296 | 1403 | 1089 | - | 16911.7 | - | - | - | - | - | - | - | 2502.6 | 351.0* |
| 2008 | 661.9 | 115 | 304 | 1456 | 1104 | 313.3 | 17311.7 | 168.3 | 727.2 | - | 2141.3 | 2337.6 | 152.3 | - | 3688.3 | 369.0* |
| 2009 | 615.7 | 105 | 326 | 1461 | 1098 | 369.0 | 17459.3 | 240.1 | 737.8 | 105.0 | 2487.5 | 3007.2 | 231.8 | 20.3 | 2852.9 | 581.8** |
| 2010 | 600.9 | 114 | 328 | 1563 | 1167 | 299.9 | 17047.1 | 230.4 | 736.1 | 127.8 | 3054.7 | 3152.9 | 306.8 | 40.6 | 3312.9 | 509.5** |
| 2011 | 601.5 | 163 | 342 | 2019 | 2367 | 315.8 | 17614.2 | 275.4 | 949.8 | 115.9 | 3518.8 | 2864.1 | 548.8 | 33.4 | 3480.8 | 532.0** |
| 2012 | 618.2 | 143 | 343 | 1838 | 2148 | 319.8 | 17658.0 | 247.0 | 849.4 | 105.6 | 3141.8 | 3400.5 | 373.0 | 36.1 | 3628.6 | 538.6** |
| 2013 | 657.0 | 145 | 394 | 2012 | 2349 | 362.7 | 17375.4 | 221.5 | 1010.6 | 92.8 | 3549.4 | 3452.6 | 371.5 | 36.7 | 4165.1 | 582.9** |
| 2014 | 700.4 | 162 | 411 | 2219 | 2558 | 430.0 | 18317.3 | 304.8 | 921.9 | 104.0 | 4720.9 | 3960.6 | 438.5 | 33.2 | 6345.0 | 671.6** |
| 2015 | 728.6 | 146 | 411 | 2094 | 2423 | 447.9 | 18592.5 | 466.8 | 989.4 | 78.5 | 6170.2 | 6064.9 | 617.1 | 70.1 | 9639.5 | 715.2** |

*ՀՀ ԱՎԾ-ի տվյալներով, **Հաշվարկային տվյալներ՝ հիմք ընդունելով կաթի և կաթնամթերքների ՀՀ ԱՎԾ-ի տվյալները

[87] Պարենային ապահովություն և աղքատություն 2010թ. հունվար-դեկտեմբերին, 2015թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ, Երևան 2011թ., 2016թ.

[88] Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2006թ. հունվար-դեկտեմբերին, 2007թ. հունվար-դեկտեմբերին, 2008թ. հունվար-դեկտեմբերին, 2009թ. հունվար-դեկտեմբերին, 2010թ. հունվար-դեկտեմբերին, 2011թ. հունվար-դեկտեմբերին, 2012թ. հունվար-դեկտեմբերին, 2013թ. հունվար-դեկտեմբերին, 2014թ. հունվար-դեկտեմբերին, 2015թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ, Երևան 2007թ., 2008թ., 2009թ., 2010թ., 2011թ., 2012թ., 2013թ., 2014թ. և 2015թ.

Նախ անդրադառնանք կաթի արտադրության ծավալների վրա ազդող գործոնների գնահատմանը:

Տվյալ դեպքում փորձել ենք սկզբում բացահայտել արտադրողների կողմից կաթի իրացման գնի և կաթի արտադրության ծավալների միջև կապի բնույթը:

Որպես արդյունքային հատկանիշ դիտարկել ենք կաթի արտադրության ծավալը (նշանակում ենք $y_i$-ով, հազ. տոննա), գործոն հատկանիշն ընդունում ենք արտադրողների կողմից 1 լիտր կաթի իրացման (մթերման) գինը (նշանակում ենք $x_i$-ով, դրամ): Ելակետային տվյալները ներկայացված է 3.1.2 աղյուսակում:

Աղյուսակ 3.1.2

**Ելակետային տվյալներ ՀՀ-ում կաթի արտադրության և դրա վրա ազդող գործոնի՝ արտադրողների կողմից կաթի իրացման գնի միջև**

| Տարեթվերը | Արտադրողների կողմից 1 լիտր կաթի իրացման (մթերման) գինը, դրամ | ՀՀ կաթի համախառն արտադրանքը, հազ. տոննա |
|---|---|---|
| | $x_i$ | $y_i$ |
| 2006 | 107 | 620.0 |
| 2007 | 112 | 641.2 |
| 2008 | 115 | 661.9 |
| 2009 | 105 | 615.7 |
| 2010 | 114 | 600.9 |
| 2011 | 163 | 601.5 |
| 2012 | 143 | 618.2 |
| 2013 | 145 | 657.0 |
| 2014 | 162 | 700.4 |
| 2015 | 146 | 728.6 |

<<Մեկ կամ այլ փոփոխականների շեղումը միջինից ընկած է կոռելյացիոն կապի գնահատման հիմքում: Գծային կապի դեպքում նրա սերտությունը չափվում է զույգային կոռելյացիայի գործակցով, որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$r_{xy} = \frac{\sum_i (x_i - \bar{x})(y_i - \bar{y})}{\sqrt{\sum (x_i - \bar{x})^2 \sum (y_i - \bar{y})^2}} \qquad (3.1.1)$$

Եթե միջինից շեղման նշանը համընկնում է, այդ դեպքում կապը ուղիղ է ($r_{xy} > 0$), եթե շեղման նշանը չի համընկնում ապա կապը հակադարձ է ($r_{xy} < 0$):

Զույգային կոռելացիայի գործակիցը չափվում է -1-ից (պատահական լրիվ հակադարձ կապ) մինչև 1 (լիարժեք ուղակի կապի դեպքում): Բացարձակ մեծությամբ՝ $0 \le |r_{xy}| \le 1$: Որքան մոտիկ է $r_{xy}$ նշանակությունը միավորին, այնքան կապը սերտ է, որքան մոտիկ է $r_{xy}$ նշանակությունը 0-ին, ապա կապը թույլ է: Երբ $|r_{xy}|$<0.30-ից կապը համարվում է թույլ է, $|r_{xy}|$=0.3-0.7 կապը համարվում է միջին, իսկ երբ $|r_{xy}|$>0.7 կապը համարվում է ուժեղ կամ սերտ>>[89]:

Հիմք ունենալով 3.1.2 աղյուսակի տվյալները, հաշվարկել ենք զույգային կոռելացիայի գործակիցը կաթի մթերման գնի և կաթի արտադրության ծավալների միջև: Հաշվարկային տվյալները ներկայացվում են 3.1.3 աղյուսակում:

Աղյուսակ 3.1.3

**ՀՀ-ում կաթի իրացման (մթերման) գնի և կաթի համախառն արտադրանքի միջև զույգային կոռելացիայի գործակցի հաշվարկային աղյուսակ**

| Տարեթվերը | $x_i - \bar{x}$ | $y_i - \bar{y}$ | $(x_i - \bar{x})(y_i - \bar{y})$ | $(x_i \quad \bar{x})^2$ | $(y_i - \bar{y})^2$ |
|---|---|---|---|---|---|
| 2006 | -24.200 | -24.540 | 593.868 | 585.640 | 602.212 |
| 2007 | -19.200 | -3.340 | 64.128 | 368.640 | 11.156 |
| 2008 | -16.200 | 17.360 | -281.232 | 262.440 | 301.370 |
| 2009 | -26.200 | -28.840 | 755.608 | 686.440 | 831.746 |
| 2010 | -17.200 | -43.640 | 750.608 | 295.840 | 1904.450 |
| 2011 | 31.800 | -43.040 | -1368.672 | 1011.240 | 1852.442 |
| 2012 | 11.800 | -26.340 | -310.812 | 139.240 | 693.796 |
| 2013 | 13.800 | 12.460 | 171.948 | 190.440 | 155.252 |
| 2014 | 30.800 | 55.860 | 1720.488 | 948.640 | 3120.340 |
| 2015 | 14.800 | 84.060 | 1244.088 | 219.040 | 7066.084 |
| $\sum$ | x | x | **3340.020** | **4707.600** | **16538.844** |

[89] Ñтатистика: ó÷åá. /È.È. Åëèñååâà и др. под. ред È.È. Åëèñååâîé. –М.: Проспект, 2010, ñ. 78-81

Տեղադրելով հաշվարկային տվյալները կոռելացիայի գործակցի բանաձևի մեջ ստանում ենք`

$$r_{xy} = \frac{3340.020}{\sqrt{4707.600*16538.844}} = \frac{3340.020}{8823.732} = 0.378$$

Կոռելացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ հանրապետության համար կաթի մթերման գնի և կաթի համախառն արտադրանքի միջև կապը միջին է` թույլին մոտ (այն գտնվում է 0.3-0.7 միջակայքում):

Կոռելացիայի գործակցի քառակուսին իրենից ներկայացնում է դետերմինացիայի գործակիցը[90]`

**Դետերմինացիայի գործակիցը** = $r^2$ (3.1.2)

Դետերմինացիայի գործակիցը առավել նախընտրելի է կապերի գնահատման համար: Այն կարող է արտահայտվել տոկոսներով: Դրա արժեքը մեր օրինակի համար կազմում է` $r^2$=0.143 կամ 14.3 %: Դետերմինացիայի գործակիցը ունի 0-1 արժեք և տվյալ դեպքում այն ցույց է տալիս, որ հանրապետությունում կաթի համախառն արտադրանքի ավելացումը 14.3 %-ով պայմանավորված է կաթի մթերման գնի ավելացումով:

Կիրառելով միևնույն մեթոդական մոտեցումը գնահատվել է արտադրողների կողմից 1 լիտր կաթի գնի փոփոխության ազդեցությունը կաթի մանրածախ գնի վրա:

Որպես արդյունքային հատկանիշ դիտարկել ենք 1 լիտր կաթի միջին մանրածախ գինը (նշանակում ենք $y_i$-ով, դրամ), գործոն հատկանիշն ընդունում ենք արտադրողների կողմից 1 լիտր կաթի իրացման (մթերման) գինը (նշանակում ենք $x_i$-ով, դրամ):

Հիմք ունենալով 3.1.1 աղյուսակի տվյալները, հաշվարկել ենք զույգային կոռելացիայի գործակիցը կաթի մթերման գնի և կաթի իրացման մանրածախ գնի միջև: Հաշվարկային տվյալները ներկայացվում են 3.1.4 աղյուսակում:

Տեղադրելով հաշվարկային տվյալները կոռելացիայի գործակցի բանաձևի մեջ ստանում ենք`

[90] Ñтатистика: ó÷åá. /È.È. Åëèñååâà и др. под. ред È.È. Åëèñååâîé. –М.: Проспект, 2010, ñ. 81.

$$r_{xy} = \frac{7389.800}{\sqrt{4707.600*19330.900}} = \frac{7389.800}{9539.504} = 0.775$$

Աղյուսակ 3.1.4

**ՀՀ-ում կաթի իրացման (մթերման) գնի և կաթի մանրածախ գնի միջև զույգային կոռելյացիայի գործակցի հաշվարկային աղյուսակ**

| Տարեթվերը | $x_i - \bar{x}$ | $y_i - \bar{y}$ | $(x_i - \bar{x})(y_i - \bar{y})$ | $(x_i \quad \bar{x})^2$ | $(y_i - \bar{y})^2$ |
|---|---|---|---|---|---|
| 2006 | -24.200 | -58.100 | 1406.020 | 585.640 | 3375.610 |
| 2007 | -19.200 | -48.100 | 923.520 | 368.640 | 2313.610 |
| 2008 | -16.200 | -40.100 | 649.620 | 262.440 | 1608.010 |
| 2009 | -26.200 | -18.100 | 474.220 | 686.440 | 327.610 |
| 2010 | -17.200 | -16.100 | 276.920 | 295.840 | 259.210 |
| 2011 | 31.800 | -2.100 | -66.780 | 1011.240 | 4.410 |
| 2012 | 11.800 | -1.100 | -12.980 | 139.240 | 1.210 |
| 2013 | 13.800 | 49.900 | 688.620 | 190.440 | 2490.010 |
| 2014 | 30.800 | 66.900 | 2060.520 | 948.640 | 4475.610 |
| 2015 | 14.800 | 66.900 | 990.120 | 219.040 | 4475.610 |
| $\sum$ | x | x | **7389.800** | **4707.600** | **19330.900** |

Կոռելյացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ հանրապետության համար կաթի մթերման գնի և կաթի մանրածախ գնի միջև կապը սերտ է՝ միջինին մոտ (այն գտնվում է 0.7-1.0 միջակայքում):

Դետերմինացիայի գործակիցը տվյալ դեպքում կազմում է՝ $r^2$=0.600 կամ 60.0 %: Այն ցույց է տալիս, որ հանրապետությունում կաթի մանրածախ գնի բարձրացումը 60.0 %-ով պայմանավորված է կաթի իրացման (մթերման) գնի ավելացումով, իսկ մնացածն այլ գործոններով:

Դիտարկվել է նաև արտադրողների կողմից կաթի իրացման գնի ազդեցությունը վերահաշվարկված կաթի կաթնամթերքների ծավալի, 1 կգ «Չանախ» պանրի միջին մանրածախ գնի, ինչպես նաև 1 կգ տնական պանրի միջին մանրածախ գնի վրա:

Կաթնամթերքի արտադրության ծավալների վրա վերահաշվարկված կաթի արտադրողների կողմից կաթի իրացման գնի

ազդեցության կոռելացիայի գործակցի հաշվարկման արդյունքային տվյալները հետևյալն է`

$$r_{xy} = \frac{18315.800}{\sqrt{4707.600 * 163995.845}} = \frac{18315.800}{27785.371} = 0.659$$

Կոռելացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ հանրապետության համար կաթի մթերման գնի և կաթնամթերքի արտադրության ծավալների վերահաշվարկված կաթի միջև կապը միջին է` սերտին մոտ (այն գտնվում է 0.3-0.7 միջակայքում):

Դետերմինացիայի գործակիցը կազմում է` $r^2$=0.434 կամ 43.4 %: Այն ցույց է տալիս, որ հանրապետությունում կաթնամթերքի արտադրության ծավալի վերահաշվարկված կաթի ավելացումը 43.4 %-ով պայմանավորված է կաթի մթերման գնի ավելացումով, իսկ մնացածն այլ գործոններով:

<<Չանախ>> պանրի մանրածախ գնի վրա արտադրողների կողմից կաթի իրացման գնի ազդեցության կոռելացիայի գործակցի հաշվարկման արդյունքային տվյալները հետևյալն է`

$$r_{xy} = \frac{64976.800}{\sqrt{4707.600 * 982796.900}} = \frac{64976.800}{68019.222} = 0.955$$

Զույգային կոռելացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ հանրապետության համար կաթի մթերման գնի և <<Չանախ>> պանրի մանրածախ գնի միջև կապը սերտ է (այն գտնվում է 0.7-1.0-ի միջակայքում):

Դետերմինացիայի գործակիցը կազմում է` $r^2$=0.912 կամ 91.2 %: Այն ցույց է տալիս, որ հանրապետությունում <<Չանախ>> պանրի մանրածախ գնի բարձրացումը 91.2 %-ով պայմանավորված է կաթի մթերման գնի ավելացումով, իսկ մնացածն այլ գործոններով:

Տնական պանրի մանրածախ գնի վրա արտադրողների կողմից կաթի իրացման գնի ազդեցության կոռելացիայի գործակցի հաշվարկման արդյունքային տվյալները հետևյալն է`

$$r_{xy} = \frac{133837.800}{\sqrt{4707.600 * 4066506.400}} = \frac{133837.800}{138359.980} = 0.967$$

Զույգային կոռելացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ հանրապետության համար կաթի մթերման գնի և տնական պանրի մանրածախ գնի միջև կապը սերտ է (այն գտնվում է 0.7-1.0-ի միջակայքում):

Դետերմինացիայի գործակիցը կազմում է՝ $r^2$=0.935 կամ 93.5 %: Այն ցույց է տալիս, որ հանրապետությունում տնական պանրի մանրածախ գնի բարձրացումը 93.5 %-ով պայմանավորված է կաթի մթերման գնի ավելացումով, իսկ մնացածն այլ գործոններով:

Այժմ փորձ ենք արել դիտարկել կաթի համախառն արտադրանքի արտադրության և կաթնամթերքի արտադրության վերահաշվարկված կաթի արտադրության միջև կապը:

Կաթնամթերքի արտադրության (վերահաշվարկված կաթի) վրա և կաթի համախառն արտադրանքի ազդեցության կոռելացիայի գործակցի հաշվարկման արդյունքային տվյալները հետևյալն է՝

$$r_{xy} = \frac{26380.000}{\sqrt{16538.844 * 163995.845}} = \frac{26380.000}{52079.763} = 0.506$$

Զույգային կոռելացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ հանրապետության համար կաթի համախառն արտադրանքի և կաթնամթերքի արտադրության (վերահաշվարկված կաթի) միջև կապը միջին է (այն գտնվում է 0.3-0.7-ի միջակայքում):

Դետերմինացիայի գործակիցը կազմում է՝ $r^2$=0.256 կամ 25.6 %: Այն ցույց է տալիս, որ հանրապետությունում կաթնամթերքի արտադրության (վերահաշվարկված կաթի) ավելացումը 25.6 %-ով պայմանավորված է կաթի համախառն արտադրանքի ավելացումով:

Դիտարկել ենք նաև արտադրողների կողմից կաթի իրացման գնի ավելացման ազդեցությունը պանրի արտադրության ծավալների վրա:

Պանրի արտադրության և կաթի մթերման գնի միջև կապի կոռելացիայի գործակցի հաշվարկման արդյունքային տվյալները հետևյալն է՝

$$r_{xy} = \frac{137195.980}{\sqrt{4707.600 * 10179773.309}} = \frac{137195.980}{218911.628} = 0.627$$

Զույգային կոռելացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ հանրապետության համար կաթի մթերման գնի և պանրի արտադրության միջև կապը միջին է (այն գտնվում է 0.3-0.7-ի միջակայքում):

Դետերմինացիայի գործակիցը կազմում է՝ $r^2$=0.393 կամ 39.3 %: Այն ցույց է տալիս, որ հանրապետությունում պանրի արտադրության ծավալի ավելացումը 39.3 %-ով պայմանավորված է կաթի մթերման գնի բարձրացումով:

Կոռելյացիոն վերլուծության արդյունքները ամփոփել ենք աղյուսակի տեսքով (աղյուսակ 3.1.5):

Աղյուսակ 3.1.5

**Կաթնամթերքի արտադրության ծավալների վրա 2006-2015թթ. ցուցանիշների հիման գործոնային վերլուծության արդյունքները՝ կոռելյացիայի և դետերմինացիայի գործակիցները**

| Գործոն հատկանիշ ($x_i$) / Արդյունքային հատկանիշ ($y_i$) | **1 լիտր կաթի իրացման միջին գինը արտադրողի կողմից** | **Կաթի համախառն արտադրանքը** |
|---|---|---|
| **Կաթի համախառն արտադրանքը** | **0.378** | |
| | **14.3 %** | |
| **Կաթի իրացման միջին մանրածախգինը** | **0.775** | |
| | **60.0 %** | |
| **Կաթնամթերքի արտադրությունը (վերահաշվարկած կաթի)** | **0.659** | **0.506** |
| | **43.4** | **25.6 %** |
| **<<Չանախ>> պանրի միջին մանրածախգինը** | **0.955** | |
| | **91.2 %** | |
| **Տնական պանրի միջին մանրածախգինը** | **0.967** | |
| | **93.5 %** | |
| **Պանրի արտադրության ծավալը** | **0.627** | |
| | **39.3 %** | |

Կաթնամթերքի արտադրության ծավալների վրա ազդող մի շարք գործոնների համատեղ ազդեցությունը գնահատելու համար համակարգչային ծրագրի միջոցով կատարվել է ռեգրեսիոն վերլուծություն, որպես արդյունքային հատկանիշ ընդունել ենք 2006-2015թթ. համար կաթնամթերքի արտադրության ծավալը վերահաշվարկած կաթի ($y_i$) (հազ. տոննա), իսկ գործոն հատկանիշներ է վերցվել՝ կովերի գլխաքանակը ($x_1$) (հազ. գլուխ), կաթի համախառն արտադրությունը ($x_2$) (հազ. տոննա), արտադրողների կողմից 1 լիտր կաթի իրացման գինը ($x_3$) (դրամ) և կաթնամթերքների գների ինդեքսը ($x_4$) (%):

Հաշվարկների արդյունքում ռեգրեսիոն հավասարումը ունի հետևյալ տեսքը`

$$Y_i=-372.377+2.165x_1+0.074x_2+5.827x_3-5.545x_4:$$

F նշանակալիության գործակցը հաշվարկների համաձայն ստացվել է 0.14-ի, այն նշանակում է, որ 85 տոկոս ճշգրտության դեպքում նշված մոդելը ունի վիճակագրական ազդեցություն: Մոդելի $R^2$ գործակիցը հավասար է 0.69, ինչը նշանակում է որ կախյալ փոփոխականի (կաթնամթերքի արտադրության ծավալը վերահաշվարկած կաթի) փոփոխությունների 69 %-ը պայմանավորված է մոդելի անկախ փոփոխականներով:

Ստացված ռեգրեսիոն հավասարումը ցույց է տալիս, որ կովերի գլխաքանակի 1000 գլխով ավելացումը այլ հավասար պայմաններում հանգեցնում է 2.165 հազ. տոննա կաթնամթերքի (վերահաշվարկված կաթի) ավելացման, իսկ կաթի համախառն արտադրանքի 1000 տոննայով ավելացումը այլ հավասար պայմաններում հանգեցնում է կաթնամթերքի (վերահաշվարկված կաթի) 74.0 տոննայով ավելացման, ինչ վերաբերովում է կաթի մթերման գնին, ապա նրա 1 դրամով ավելացումը այլ հավասար պայմաններում հանգեցնում է կաթնամթերքի (վերահաշվարկված կաթ) 5.827 հազ. տոննայով ավելացմանը, իսկ կաթնամթերքի գների ինդեքսի 1 %-ով ավելացումը այլ հավասար պայմաններում հանգեցնում է կաթնամթերքի (վերահաշվարկված կաթի) արտադրության ծավալների 5.545 հազ. տոննայով նվազեցմանը[91]:

Այսպիսով տվյալ բաժնում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս հետևյալը:

Հանրապետության համար կաթի մթերման գնի և կաթի համախառն արտադրանքի միջև կապը միջին է` թույլին մոտայն կազմում է 0.378: Դետերմինացիայի գործակիցը կազմում է 0.143 այն ցույց է տալիս, որ հանրապետությունում կաթի համախառն արտադրանքի ավելացումը 14.3 %-ով պայմանավորված է կաթի մթերման գնի ավելացումով:

---

[91] Ռ.Ա. Մակարյան-Հայաստանի հանրապետությունում կաթի վերամշակման ոլորտի գործունեության վրա տարբեր գործոնների ազդեցության չափի գնահատումը//: Ագրոգիտություն 5-6, 2016. էջ 136-141

Արտադրողների կողմից կաթի իրացման գնի և կաթի իրացման միջին մանրածախ գնի միջև կապը սերտ է՝ միջինին մոտ, կոռելյացիայի գործակիցը կազմել է 0.775: Դետերմինացիայի գործակիցը կազմում է 0.600 այն ցույց է տալիս, որ հանրապետությունում կաթի իրացման միջին մանրածախ գնի փոփոխությունը 60.0 %-ով պայմանավորված է կաթի մթերման գնի փոփոխությամբ:

Կաթնամթերքի արտադրության (վերահաշվարկված կաթի) ծավալների վրա արտադրողների կողմից կաթի իրացման գնի ազդեցության կոռելյացիայի գործակցը կազմել է 0.659, այսինքն գոյություն ունեցող կապը միջին է՝ ուժեղին մոտ: Դետերմինացիայի գործակիցը կազմում է 0.434 կամ 43.4 %: Այն ցույց է տալիս, որ հանրապետությունում կաթնամթերքի արտադրության ծավալը (վերահաշվարկված կաթի) ավելացումը 43.4 %-ով պայմանավորված է կաթի մթերման գնի ավելացումով:

Զույգային կոռելյացիոն գործակցի ստացված արժեքը (0.955) ցույց է տալիս, որ հանրապետության համար կաթի մթերման գնի և <<Չանախ>> պանրի մանրածախ գնի միջև կապը սերտ է: Դետերմինացիայի գործակիցը կազմում է՝ 0.912 կամ 91.2 %: Այն ցույց է տալիս, որ հանրապետությունում <<Չանախ>> պանրի մանրածախ գնի բարձրացումը 91.2 %-ով պայմանավորված է կաթի մթերման գնի ավելացումով, իսկ մնացածն այլ գործոններով:

Զույգային կոռելյացիոն գործակցի (0.967) ստացված արժեքը ցույց է տալիս, որ հանրապետության համար կաթի մթերման գնի և տնական պանրի մանրածախ գնի միջև կապը սերտ է: Դետերմինացիայի գործակիցը կազմում է՝ 0.935 կամ 93.5 %: Այն ցույց է տալիս, որ հանրապետությունում տնական պանրի մանրածախ գնի փոփոխությունը 93.5 %-ով պայմանավորված է կաթի մթերման գնի փոփոխությունով:

Զույգային կոռելյացիոն գործակցի (0.506) ստացված արժեքը ցույց է տալիս, որ հանրապետության համար կաթի համախառն արտադրանքի և կաթնամթերքի արտադրության (վերահաշվարկված կաթի) միջև կապը միջին է (այն գտնվում է 0.3-0.7-ի միջակայքում): Դետերմինացիայի գործակիցը կազմում է՝ 0.256 կամ 25.6 %: Այն ցույց

է տալիս, որ հանրապետությունում կաթնամթերքի արտադրության (վերահաշվարկված կաթի) փոփոխությունը 25.6 %-ով պայմանավորված է կաթի համախառն արտադրանքի փոփոխությունով:

Զույգային կոռելյացիոն գործակցի ստացված արժեքը (0.627) ցույց է տալիս, որ հանրապետության համար կաթի մթերման գնի և պանրի արտադրության միջև կապը միջին է: Դետերմինացիայի գործակիցը կազմում է` 0.393 կամ 39.3 %, այսինքն հանրապետությունում պանրի արտադրության ծավալի փոփոխությունը 39.3 %-ով պայմանավորված է կաթի մթերման գնի փոփոխությունով:

### 3.2. Կաթի վերամշակման ոլորտի փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացումը կոոպերացիայի և պայմանագրային հարաբերությունների խթանման միջոցով

Ագրարային ոլորտում կոոպերացիայի բնագավառում դիտարկումները հնարավորություն են տվել որոշակի հետևություններ անել կաթի վերամշակման ոլորտի փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման մոտեցումների վերաբերյալ: Մասնավորապես, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կաթ վերամշակման ոլորտի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն նպաստող կարևորագույն ուղղություններից կարող է լինել այդ բնագավառի հարաբերությունների կատարելագործումն և գործառույթների բարելավումը գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման և կաթ արտադրող ու կաթ վերամշակող ՓՄՁ սուբյեկտների միջև պայմանագրային հարաբերությունների ներդրրման միջոցով:

ՀՀ օրենսդրության համաձայն **գյուղատնտեսական կոոպերացիան`** գյուղատնտեսական կոոպերատիվների, կոոպերատիվների միությունների և դրանց անդամների համագործակցություն է, որն իրականացվում է ագրոպարենային համակարգում գործող տնտեսավարողների նյութական, սոցիալական և այլ կարիքներին առավել արդյունավետ

բավարարման նպատակով[92]: Օրենսդրությամբ **գյուղատնտեսական կոոպերատիվը`** ագրոպարենային համակարգում գործունեություն իրականացնող քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարների կամավոր միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված իրավաբանական անձ է[93]:

<<Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին>> ՀՀ օրենքով սահմանված է կոոպերատիվի գործունեության ուղղությունները, որոնց շրջանակում ներառված է **գյուղատնտեսական արտադրության և իրացման** ուղղությունը: Վերջինս վերաբերում է գյուղատնտեսական արտադրանքի արտադրությանը և իրացմանը, ծառայությունների մատուցմանը, գյուղատնտեսական արտադրանքի պահպանմանը, փոխադրմանը, փաթեթավորմանը, գովազդին և արտադրությունից մինչև սպառումը արժեքային շղթայի փուլերի այլ գործառույթներին:

Նշվածը վկայում է, որ գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության ուղղություններից կարող է լինել գյուղատնտեսական մթերքներ վերամշակող, մասնավորապես կաթ վերամշակող կարողությունների հետ տարբեր գործառույթների, մասնավորապես հումքի իրացման գործընթացի կազմակերպումը: Հետևաբար կաթի հավաքման և իրացման գործառույթ ունեցող կոոպերատիվների ստեղծումը, ինչպես նաև հումք արտադրող տնտեսավարողների և կաթի վերամշակման ոլորտի միջև փոխշահավետ պայմանագրային հարաբերությունների հաստատումը կարող է լինել կաթ վերամշակող փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման կարևորագույն ուղղություններից մեկը:

Կաթ վերամշակող փոքր և միջին ձեռնարատիրության ոլորտի զարգացման և արտադրության արդյունավետության կարևորագույն նախապայմաններից է հումքի` կաթի սահմանված ժամկետում, որակական պահանջվող չափանիշներով, երաշխավորված գներով մատակարարումը: Կատարված ուսումնասիրությունները և փորձը

---

92 <<Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին>> ՀՀ օրենք: ՀՕ-190-Ն, 2015թ.

93 Նույն տեղում

ցույց է տալիս, որ վերջինս հնարավոր է ապահովել գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության և կաթ արտադրող ու կաթ վերամշակող տնտեսավարողների հետփոխշահավետ պայմանագրային հարաբերությունների հաստատման միջոցով:

<<Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին>> ՀՀ օրենքի համաձայն կոոպերատիվի անդամ կարող են հանդիսանալ ինչպես ֆիզիկական անձինք (քաղաքացիները), այնպես էլ իրավաբանական անձինք, հետևաբար կազմակերպական առումով տարբերակ է դիտարկվում կոոպերատիվի ստեղծումը, որի անդամներ կլինեն կաթ արտադրող տնտեսավարողները (գյուղացիական տնտեսությունները) և տվյալ գյուղական համայնքում կամ համայնքից դուրս գործող կաթ վերամշակող փոքր ու միջին ձեռնարկությունը: Նշվածի կազմակերպական սխեման ներկայացված է 5-րդ գծապատկերում:




**Գծապատկեր 5: Կաթի իրացման և վերամշակման կոոպերատիվի կազմակերպական սխեման**

Նախընտրելի է համարվում, որ ՓՄՁ գործի տվյալ գյուղական համայնքում: Այս դեպքում պայմաններ կստեղծվի կոոպերատիվի անդամների կողմից արտադրված կաթն անմիջապես կաթ վերամշակող ձեռնարկությունում հանձնելու համար, այս դեպքում կբացառվեն լրացուցիչ կաթի հավաքման և սառեցման ագրեգատի ձեռք բերման և կտրուկ կկրճատվեն կաթի փոխադրման կազմակերպման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կպահպանվի կաթի որակական հատկանիշները, հնարավորինս կկրճատվի կորուստները:

Յաջորդ տարբերակը երբ խթանվում է կաթ արտադրող տնտեսավարող սուբյեկտների (գյուղացիական տնտեսությունների) և կաթ վերամշակող ՓՄՁ-ների միջև պայմանագրային հարաբերությունները, որի կազմակերպական սխեման ներկայացվում է 6-րդ գծապատկերում:




**Գծապատկեր 6: Կաթ արտադրող տնտեսությունների և կաթ վերամշակող փոքր և միջին ձեռնարկության միջև կաթի իրացման պայմանագրային հարաբերությունների սխեման**

Տվյալ դեպքում առանց կոոպերատիվի ձևավորման պայմանագրային հարաբերություններ է հաստատվում կաթ

արտադրող տնտեսավարողների (գյուղացիական տնտեսությունների) և կաթ վերամշակող ՓՄՁ-ների միջև: Այս տարբերակում վճռորոշ է համարվում փոխշահավետ հարաբերությունների հաստատումը, որի կարևոր նախապայմաններից է հիմնավորված պայմանագրերի օրինակելի ձևերի կիրառումը, որի մասին կանդրադառնանք տվյալ բաժնի շրջանակներում:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կաթի վերամշակման ոլորտում կոոպերացիայի և պայմանագրային հարաբերությունների խթանումը հնարավոր է իրականացնել հետևյալ քայլերի կիրառմամբ:

**Կաթ արտադրողների և վերամշակողների կոոպերացիայի խթանում.**

1. Կոոպերատիվների ձևավորման գործընթացում ՀՀ գյուղատնտեսության նախարարության խորհրդատվական կառույցների և համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների կողմից խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում, կոոպերացիայի առավելությունների ուղղությամբ իրազեկվածության մակարդակի բարձրացում:
2. Նախապայման ունենալով կաթի իրացման և վերամշակման կոոպերատիվների ստեղծումը, վերջիններիս համար աջակցության ծրագրերի իրականացումը, մասնավորապես մատչելի պայմաններով, կերարտադրությունում օգտագործվող մեքենաների (տրակտորներ, խոտհնձիչներ, հավիքիչ մամլիչներ և այլն) անասնաբուծությունում օգտագործվող (կթի ագրեգատներ, անասնապահական ֆերմաների այլ սարքավորումներ), կաթի հավաքման ագրեգատների, կաթի վերամշակման սարքավորումների մատակարարում:
3. ՀՀ պետական բյուջեում և վարկային ծրագրերում կոոպերատիվների խթանման համապատասխան ծրագրերի և բաղադրիչների նախատեսում:
4. Կոոպերատիվների ձևավորումն ելակետ ունելով կոոպերատիվներին (կաթ արտադրողների և վերամշակողների)

մատչելի լիզինգային մեխանիզմներով տեխնիկական միջոցների տրամադրում, լիզինգի կանխավճարի սուբսիդավորում:

5. Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրարը, մասնավորապես շուկայականից ցածր գներով սերմերի, նյութական ռեսուրսների մատակարարման, վարկերի մատչելիության բարձրացման ծրագրերը առաջնահերթ կոոպերատիվներին ուղորդումը:

**Կաթ արտադրողների և վերամշակողների միջև պայմանագրային հարաբերությունների խթանում.**

1. Կաթ արտադրողների և վերամշակողների միջև պայմանագրային հարաբերությունների առկայությունը ելակետ ունենալ մատչելի վարկավորման, լիզինգային և այլ աջակցության ծրագրերից օգտվելու համար:
2. Պայմանագրերում կաթ արտադրողների և վերամշակողների շահերի հաշվառմամբ` պարտավորություններ և իրավունքներ սահմանող դրույթների սահմանում:
3. Վերամշակողների կողմից կաթ արտադրողներին խորհրդատվության տրամադրում, որպես կանխավճար համակցված կերերի, բուժանյութեր և անհրաժեշտ այլ ռեսուրսների հատկացում:

Հաշվի առնելով վերը նշվածը մեր կողմից մշակվել և առաջարկվել է **Կաթի գնման** պայմանագրի օրինակելի ձև և քայլեր ենք ձեռնարկում ՀՀ կառավարության կողմից դրա ընդունման և ներդրման ուղղությամբ (պայմանագրի նախագիծը ներկայացված է հավելվածում):

Փորձենք ներկայացնել մշակված պայմանագրի օրինակելի ձևի առանձնահատկությունները:

Պայամանագրի օրինակելի ձևը ներառում է հետևյալ կառուցվածքային մասերը`

պայմանգրի առարկան, կողմերի իրավունքները և պարտականությունները, ապրանքի գինը և վճարման կարգը, կողմերի պատասխանատվությունը, անհաղթահարելի ուժի ազդեցությունը, եզրափակիչ դրույթներ:

Պայմանագրի առանձին հավելվածով տրված է կաթին ներկայացվող նորմատիվ պահանջները և դրանից թույլատրելի շեղումները և կաթի դասակարգումը ըստ տեսակների (բարձ, առաջին, երկրորդ):

Օրինակելի պայմանագրում **Կողմերի իրավունքներին ու պարտականություններին** վերաբերող բաժնում վաճառողի իրավունքի մասում ամրագրվում է պայմանագրի գործունեության ժամանակահատվածում գնվող կաթի քանակը, փորձարկման տվյալների հետ համաձայն չլինելու դեպքում կրկնակի փորձարկման հնարավորությունը, վճարումների ուշացման դեպքում կաթի մատակարարումից հրաժարումը:

Վաճառողի պարտավորությունների շրջանակը մասնավորապես ներառում են հետևյալը՝

- պայմանագրի գործողության ընթացքում օրենսդրությամբ սահմանված կարգով, Գնորդին ներկայացնել համապատասխան ուղեկցող փաստաթղթեր,
- կաթը Գնորդին հանձնել ամեն օր՝ օրական մեկ կամ երկու անգամ՝ փոխադարձ համաձայնեցված գրաֆիկով,
- անասնագոմում կամ ֆերմայում պահպանել զոո և սանիտարահիգիենիկ կանոնները,
- չխոչընդոտել Գնորդի կողմից Վաճառողի անասնագոմում կամ ֆերմայում սանիտարահիգիենիկ վիճակին ծանոթանալու գործընթացին:

Օրինակելի պայմանագրի նախագծով գնորդը մասնավորապես իրավունք ունի՝

- հրաժարվել կաթի ընդունումից, եթե այն չի համապատասխանում պայմանագրի պահանջներին.
- հրաժարվել կաթի ընդունումից, եթե Վաճառողը չի կատարում պայմանագրով սահմանված իր պարտավորությունները.
- արտադրական և կոնյունկտուրային անհրաժեշտությունից ելնելով, որոշակի ժամանակահատվածով դադարեցնել կաթի ընդունումը՝ այդ մասին առնվազն 7 օր առաջ տեղյակ պահելով վաճառողին:

Առաջարկված օրինակելի պայմանագրով գնորդի պարտավորություններից է`

- ընդունել վաճառողից արտադրանքը կոնկրետ նշված վայրում պահպանելով սանիտարահիգիենիկ նորմերը, սննդի արտադրությունում օգտագործման համար թույլատրելի տարաներով (ֆլյագաներ, ցիստերններ), որոնք դրսից և ներսից պետք է լինեն մաքուր,
- ստուգել կաթի որակը և քանակը, հայտնաբերված անհամապատաս-խանությունների կամ թերությունների մասին անհապաղ տեղեկացնել վաճառողին.
- պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում հաշվարկել և վճարել վաճառված կաթի դիմաց,
- վաճառված կաթի որակը լրացուցիչ պայմաններին համապատասխանությունը որոշելու համար կատարել կաթի գնի վերահաշվարկ,
- վաճառողի պահանջով կատարել կաթի կրկնակի փորձարկում և ընդունել այն որպես վերջնական:

Պայմանագրային հարաբերությունների ապահովման կարևոր մասերից է ապրանքի գինը և վճարման կարգը: Առաջարկված օրինակելի պայմանագրով վերջինս կարգավորվում է հետևյալ դրույթներով`

- մատակարարվող առաջին տեսակի կաթի բազիսային գինը սահմանվում է գնորդի կողմից տվյալ ժամանակահատվածի համար, որի մասին գնորդը ծանուցում է վաճառողին առնվազն 5 օր առաջ: Պայմանագրով սահմանվում է կաթի բազիսային նվազագույն գինը,
- մատակարարված կաթի գինը որոշվում է հետևյալ վերահաշվարկով` բարձր տեսակի կաթի համար կաթի բազիսային գինն ավելանում, իսկ երկրորդ տեսակի կաթի համար կաթի բազիսային գինը նվազում է 10 %-ով: Կաթի բազիսային 3.6 % յուղայնությունից յուրաքանչյուր 0.1 % շեղման համար Կաթի գնին ավելացվում կամ պակասեցվում է 2.7 %-ով: Կաթի յուղայնության համար գնի ավելացումը հաշվարկվում է յուղի պարունակության մինչև 4.0 %-ի համար: Կաթի մեջ 4.0 %-ից ավելի

յուղի պարունակության դեպքում կաթի գնին ավելացվում է 4.0 %-ը գերազանցող միայն յուղի արժեքը՝ յուղի շուկայական գներով, որը համաձայնեցվում է վաճառողի հետ,

- վաճառողը գնորդի կողմից սահմանված կաթի բազիսային գնի հետ չհամաձայնելու դեպքում՝ կարող է դադարեցնել սույն պայմանագրի գործողությունը՝ այդ մասին առնվազն 3 օր առաջ գրավոր տեղեկացնելով գնորդին,
- գնորդն իրեն վաճառված կաթի դիմաց վճարումը կատարում է պայմանագրով սահմանված չափանիշներով կատարված հաշվարկով ստացված գնով՝ 3 օրվա ընթացքում:

Պայմանագրի կարևոր բաղադրիչներից է **կողմերի պատասխանատվությանը վերաբերող** մասը, որտեղ սահմանված է, որ՝

- գնորդը կարող է հրաժարվել պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանող կամ ժամկետի ուշացումով տրամադրված կաթն ընդունելուց՝ չկրելով որևէ պատասխանատվություն,
- առանց պայմանագրով սահմանված կարգով գնորդին ծանուցելու կաթը չտրամադրելու համար վաճառողը գնորդին վճարում է չմատակարարված կաթի բազիսային արժեքի սահմանված տոկոսի չափով տույժ՝ յուրաքանչյուր օրվա համար,
- վաճառողի կողմից պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխանող և ժամկետում տրամադրված կաթն ընդունելուց հրաժարվելու համար գնորդն վաճառողին վճարում է տուգանք՝ չընդունված կաթի բազիսային արժեքի պայմանգրով սահմանված որոշակի տոկոսի չափով, ինչպես նաև վաճառողի կրած կորուստները,
- վաճառողի կողմից պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխանող և ժամկետում տրամադրված կաթի ընդունումն ուշացնելու դեպքում, եթե այդ պատճառով կաթը փչացել է, գնորդը տուգանքից բացի, վճարում է վաճառողին նաև կաթի բազիսային ամբողջ արժեքը և դրա տեղափոխման ծախսերը,
- վաճառված կաթի համար ժամանակին չվճարելու դեպքում՝ գնորդը վճարում է վաճառողի ուշացման յուրաքանչյուր օրվա համար տույժ՝ վաճառված ամբողջ կաթի արժեքի պայմանգրով սահմանված

տոկոսի չափով: Պայմանագրով սահմանված որոշակի օրվանից ավել ժամկետով ուշացման դեպքում տույժի հաշվեգրումը դադարեցվում է և գնորդն վաճառողին հաշվեգրված տույժից բացի վճարում է տուգանք՝ ժամանակին չվճարված գումարի սահմանված տոկոսի չափով:

Օրինակելի պայմանագրով կաթի նորմատիվ պահանջների սահմանման համար հիմք է ընդունվել ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի <<Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին>> N 1925-Ն որոշումը, մասնավորապես կաթի նորմատիվ պահանջների և թույլատրելի շեղումների և կաթի դասակարգման չափանիշները ներկայացված են 3.2.1 և 3.2.2 աղյուսակներում:

Աղյուսակ 3.2.1

**Կաթի նորմատիվ պահանջները և թույլատրելի շեղումները**[94]

| Հ/հ | Ցուցանիշի անվանումը | Նորմատիվ պահանջը | Թույլատրելի շեղումը |
|---|---|---|---|
| 1. | Համը, հոտը և գույն | Կաթին բնորոշ, առանց կողմնակի համի, հոտի և գույնի | Չի թույլատրվում |
| 2. | Ջերմաստիճան | Պաղեցված՝ մինչև 10 $^0$C | Չպաղեցված՝ կթից հետո մինչև 2 ժամվա ընթացքում |
| 3. | Թթվայնություն | 17-ից մինչև 18 $^0$T | 16-ից մինչև 19 $^0$T |
| 4. | Յուղայնություն | 2 %-ից մինչև 6 % | |
| 5. | Սպիտակուցների պարունակություն | 2.8 %-ից ոչ պակաս | |
| 6. | Չոր անյուղ նյութերի զանգվածային մաս | 8.2 %-ից ոչ պակաս | |
| 7. | Խտություն (20$^0$C-ում) | 1.028-ից մինչև 1.032 գ/սմ$^3$ | 1.026գ/սմ$^3$-ից ոչ պակաս |
| 8. | Ջերմակայունություն (ըստ 75%-անոց սպիրտով | Ջերմակայուն | Չի թույլատրվում |

[94] ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի <<Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին>> N 1925-Ն որոշում

| | | | |
|---|---|---|---|
| | ալկոհոլային փորձի,) | | |
| 9. | Հակաբիոտիկներ, ինհիբիդորային նյութեր (ֆերմենտների ակտիվությունը ճնշող) | Չի թույլատրվում | Չի թույլատրվում |
| 10. | Չեզոքացնող նյութեր (սոդա, ամոնիակ և այլն) | Չի թույլատրվում | Չի թույլատրվում |
| 11. | Սառեցման կետը ($^0$C) | -0.520 | -0.518 |
| 12. | Այլ գյուղատնտեսական կենդանիների կաթի առկայություն (ոչխարի, այծի և այլն) | Չի թույլատրվում | Չի թույլատրվում |

Այսպիսով տվյալ բաժնում կատարված ուսումնասիրությունները հնարավորություն է տալիս հետևություն անել, որ կաթ վերամշակող ոլորտի փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման և արտադրության արդյունավետության կարևորագույն նախապայմաններից է հումքի՝ կաթի սահմանված ժամկետում, որակական պահանջվող չափանիշներով, երաշխավորված գներով մատակարարումը: Կատարված ուսումնասիրությունները և փորձը ցույց է տալիս, որ վերջինս հնարավոր է ապահովել գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության և կաթ արտադրող ու կաթ վերամշակող տնտեսավարողների հետ փոխշահավետ պայմանագրային հարաբերությունների հաստատման միջոցով:

Աղյուսակ 3.2.2

**3.6 % բազիսային յուղայնությամբ և 8.2 % չոր անյուղ նյութերի պարունակությամբ կաթի դասակարգումն ըստ տեսակների**[95]

| | Ցուցանիշի անվանումը | Կաթի տեսակը | | |
|---|---|---|---|---|
| | | **բարձր** | **առաջին** | **երկրորդ** |
| 1. | Թթվայնություն | 16-18 $^0$T | 16-18 $^0$T | 16-19 $^0$T |
| 2. | Խտություն (20$^0$C-ում) | 1.028 գ/սմ$^3$-ից ոչ պակաս | 1.027 գ/սմ$^3$-ից ոչ պակաս | 1.026 գ/սմ$^3$-ից ոչ պակաս |
| 3. | Մաքրության աստիճանը ըստ | առաջին | առաջին | երկրորդ |

[95] ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի <<Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին>> N 1925-Ն որոշում

| | | | | |
|---|---|---|---|---|
| | էտալոնի, խումբ | | | |
| 4. | Բակտերիալ վարակվածություն | մինչև 300 հազ./սմ$^3$ | 301-500 հազ./սմ$^3$ | 501-4000 հազ./սմ$^3$ |
| 5. | Սոմատիկ բջիջների պարունակություն | մինչև 500 հազ./սմ$^3$ | 501-1000 հազ./սմ$^3$ | 501- 1000 հազ./սմ$^3$ |

Կազմակերպական առումով տարբերակ է դիտարկվում կոոպերատիվի ստեղծումը, որի անդամներ կլինեն կաթ արտադրող տնտեսավարողները (գյուղացիական տնտեսությունները) և տվյալ գյուղական համայնքում կամ համայնքից դուրս գործող կաթ վերամշակող փոքր ու միջին ձեռնարկությունը: Աշխատանքում տրվել է վերջինիս կազմակերպական սխեման: Նախընտրելի է համարվում, որ ՓՄՁ գործի տվյալ գյուղական համայնքում:

Հաջորդ տարբերակը երբ խթանվում է կաթ արտադրող տնտեսավարող սուբյեկտների (գյուղացիական տնտեսությունների) և կաթ վերամշակող ՓՄՁ-ների միջև պայմանագրային հարաբերությունները, որի կազմակերպական սխեման նույնպես ներկայացված է աշխատանքում: Այս տարբերակում կարևոր է համարվում փոխշահավետ հարաբերությությունների հաստատումը, որի կարևոր նախապայմաններից հիմնավորված պայմանագրերի օրինակելի ձևերի կիրառումը[96]:

## 3.3. Կաթի վերամշակման ոլորտի փոքր ու միջին ձեռնարկատիրության հիմնախնդիրների լուծման քաղաքականության հիմնական ուղղությունները

Հանրապետությունում փոքր ու միջին ձեռնարկատիրության, մասնավորապես՝ կաթի վերամշակման ոլորտի փոքր ու միջին ձեռնարկատիրության հիմնախնդիրների լուծման քաղաքականության համար ուղենիշային պետք է լինի «Փոքր ու

[96] Макарян Р.А. Развитие малого и среднего предпринимательства в сфере переработки молока в Республике Армения посредством стимулирования коопрации и договорных отношении/. Сборник материалов XXXII Международной научно-практической конференции, г. Новосибирск, 22 июля, 22 августа 2016г., с. 6-16

միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018թթ. ռազմավարությունը»:

Փոքր և միջին ձեռնարկատիրության հիմնախնդիրների համար չկա մեկ միասնական լուծում: Մի շարք երկրներ այս բնագավառում հասել են հաջողության փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ապակենտրոնացված քաղաքականությունների շնորհիվ, մյուսները` հատկապես փոքր երկրները, կարողացել են խթանել այդ սուբյեկտների մրցունակությունն ավելի կենտրոնացված մոտեցումների միջոցով:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ռազմավարության գլխավոր նպատակը ներքին և միջազգային շուկաներում մրցունակ սուբյեկտների գործունեության ապահովումն է, ինչպես նաև հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի խթանման համար հիմնական կարևոր սկզբունքների կանխորոշումը, բիզնեսի գործունեության համար մրցունակ միջավայր ապահովումը` կազմակերպությունների զարգացման և ձեռնարկատիրական գիտելիքի տարածման, ֆինանսական միջոցների հասանելիության, հարկային համակարգի պարզեցման և մասնավոր հատվածի հետ երկխոսության մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև նորարարությունների և կայուն զարգացման խթանման միջոցով:

Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունները, երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունը նոր պահանջներ են ներկայացնում մասնավոր հատվածի, մասնավորապես փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը: Հետևաբար անհրաժեշտություն էր առաջացել վերանայել և հստակեցնել հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման գործող չափորոշիչները, ինչը հնարավորություն կտա Հայաստանում այդ բնագավառում պետական աջակցության առավել նպատակային իրականացման, ոլորտին առնչվող վիճակագրության վարման գործընթացների պարզեցման ու կատարելագործման, ինչպես նաև Եվրամիության երկրներում գործող փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների

դասակարգման չափանիշներին մոտեցման և ոլորտը բնութագրող ցուցանիշների համադրելիության ապահովման համար:

Փոքր և միջին ձեռնարկատիրության դասակարգման Եվրամիության չափորոշիչներ կիրառող գրեթե բոլոր երկրները հնարավորություն ունեն իրականացնելու համեմատական վիճակագրական վերլուծություն, ինչն ակնհայտորեն ստեղծում է տարբեր երկրներում ՓՄՁ ոլորտի զարգացման մակարդակի վերաբերյալ առավել հստակ պատկեր՝ երկրի տնտեսության մեջ այդ ոլորտի տեղի ու դերի գնահատման առումով: Նման չափորոշիչներ կիրառող երկրներում, ՓՄՁ սուբյեկտների առավել հստակ տարանջատման շնորհիվ, հնարավորություն է ընձեռվում գերփոքր, փոքր և միջին կազմակերպությունների համար կիրառել համեմատաբար մեղմ հարկման ռեժիմ, իրականացնել առավել հասցեական պետական աջակցության միջոցառումներ:

«Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018թթ. ռազմավարության» մշակման գործընթացում օգտագործվել են «Փոքր բիզնեսի ակտի» գնահատման 10 ուղղությունները, որոնց սկզբունքները անուղակիորեն ներառված է փաստաթղթում: «Փոքր բիզնեսի ակտը» Եվրամիությունում մշակվել է 2008 թվականին՝ որպես փոքր և միջին ձեռնարկատիրության խթանման գլխավոր գործիք: Եվրոպական երկրներում «Փոքր բիզնեսի ակտի» գնահատումը փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնական փաստաթուղթն է հանդիսանում: Վերջինս 10 սկզբունքների համախումբ է, որոնք պետք է հաշվի առնել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականություններ մշակելիս և իրականացնելիս՝ ինչպես Եվրոպական Միության[97], այնպես էլ ազգային մակարդակներում: «Փոքր բիզնեսի ակտի» նպատակն է բարելավել ձեռնարկատիրության նկատմամբ մոտե-ցումները՝ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների համար պարզեցնելով օրենսդրական և գործառնական միջավայրը և վերացնելով վերջիններիս զարգացման խոչընդոտները:

Նշված փաստաթղթի հիմնական առաջնահերթություններն են՝ ձեռներեցության խթանումը, օրենսդրական խոչընդոտների

[97] EU 2008: Think Small First, A Small Business Act for Europe, Brussels 2008. See http://eur-lex.europe.eu/legalcontent/EN/TXT/PDF/?uri=CELEX:52008DC0394&from=EN

նվազեցումը, ֆինանսավորման հասանելիության բարձրացումը, շուկաների հասանելիությունը և բիզնեսի միջազգայնացումը:

Հայաստանի Հանրապետությունը «Փոքր բիզնեսի ակտի» գնահատմանը մասնակցում է 2012թ-ից: Նշված գնահատումը, ինչպես նշվեց, բաղկացած է 10 սկզբունքներից, որոնցից յուրաքանչյուրը ներառում է իրականացման համար նախատեսված մի շարք կոնկրետ գործողություններ: Այսպիսով, տվյալ սկզբունքները հստակ սահմանում են այն առաջնահերթությունները, որոնցով կարող են առաջնորդվել կառավարությունները՝ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը նպաստելու գործընթացում:

2011թ-ին «Փոքր բիզնեսի ակտի» վերանայումից հետո[98] ավելի մեծ նշանակություն է տրվել սկզբունքներից մեկին՝ «Սկզբում մտածեք փոքր» սկզբունքին: Վերջինս նաև սահմանվում է որպես «Փոքր բիզնեսի ակտի» հիմնական սկզբունք (ԵՄ 2011): Տվյալ սկզբունքը պահանջում է ոչ միայն փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության իրավական և վարչարարական միջավայրի պարզեցում, այլև ներառում է փոքր և միջին ձեռնարկատիրության վրա ազդեցություն ունեցող քաղաքականությունների ընթացակարգերի ստուգում: Քաղաքականություն մշակողների համար այն ապահովում է հստակ և կոնկրետ ուղղորդող հիմք փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեությունը խթանելու համար: Հաշվի առնելով նշվածը «Փոքր բիզնեսի ակտի» սկզբունքները ներառված են գործող ռազմավարությունում:

«Փոքր բիզնեսի ակտի» հիշատակված փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ուղղությունները հետևյալն են[99].

- **Ձեռնարկատիրության ուսումնառություն և կանանց ձեռներեցություն** (փոքր և միջին, ինչպես նաև ընտանեկան

[98] Eu 2011: Review of the Small Business Act for Europe, Brussel 2011. See http://eur-lex.europe.eu/legalcontent/EN/TXT/PDF/?uri=CELEX:52011DC0078&from=EN

[99] ՀՀ կառավարության 2015թ. հոկտեմբերի 1-ի <<Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018թթ. ռազմավարությանը հավանություն տալու մասին>> N44 արձանագրային որոշում

ձեռնարկատիրության համար ստեղծել զարգացմանը նպաստող միջավայր):

- **Սնանկացումը և երկրորդ հնարավորությունը ՓՄՁ սուբյեկտների համար** (ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ «ազնիվ» տնտեսվարողները, ովքեր սնանկացել են, կկարողանան երկրորդ հնարավորություն ստանալ ):
- **Քաղաքականության մշակման կարգավորման շրջանակ** (մշակել կանոնակարգեր «Սկզբում մտածեք փոքր» սկզբունքին համապատասխան:
- **Գործառնական միջավայր** (իրականացնել ՓՄՁ սուբյեկտների կարիքներին արձագանքող պետական կառավարում):
- **ՓՄՁ և սկսնակ ընկերությունների համար աջակցության մեխանիզմներ** (հաստատել ՓՄՁ սուբյեկտների կարիքներին արձագանքող պետական կառավարման գործիքներ):
- **Պետական գնումներ** (դյուրինացնել ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը պետական գնումների համակարգում և ՓՄՁ սուբյեկտների համար լավագույնս օգտագործել պետական աջակցության հնարավորությունները):
- **Ֆինանսավորման հասանելիություն** (դյուրինացնել ՓՄՁ սուբյեկտների հասանելիությունը ֆինանսավորմանը և զարգացնել այնպիսի իրավական և գործարար միջավայր, որը կնպաստի առևտրային գործարքների ժամանակին վճարումներին:
- **Ստանդարտներ և տեխնիկական կարգավորումներ** (օգնել ՓՄՁ սուբյեկտներին առավելագույն օգուտներ քաղել ԵՄ միասնական շուկայի առաջարկած հնարավորություններից):
- **Ձեռներեցության հմտություններ (**նպաստել ՓՄՁ սուբյեկտների ձեռնարկատիրական հմտությունների արդիականացմանը և բոլոր տեսակի նորարարությունների կիրառմանը, մշակել ՓՄՁ-ների համար նորարարության քաղաքականություն):
- **ՓՄՁ սուբյեկտները «կանաչ» տնտեսության մեջ** (խրախուսել ՓՄՁ սուբյեկտներին բնապահպանական մարտահրավերները հնարավորությունների վերածելու համար):
- **ՓՄՁ-ների միջազգայնացում** (խրախուսել և աջակցել ՓՄՁ սուբյեկտներին օգուտներ քաղել շուկաների աճից):

Ռազմավարական փաստաթղթով փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման նպատակների և գործողությունների հիմնական ուղղությունները հետևյալն են:

Նոր փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների ստեղծումը և հաջող, կայուն գործունեության խրախուսումը, զարգացումը տնտեսական քաղաքականության գերակայություններից են: ՓՄՁ զարգացման ռազմավարության առաքելությունն է սահմանել գործարար միջավայրի և ձեռնարկատիրական մշակույթի բարելավումը, որի նպատակը կայուն ՓՄՁ սուբյեկտների ստեղծումը և աճը ապահովելն է: Իսկ որպես ռազմավարական հիմնական նպատակ շեշտադրվում է հանրապետությունում մրցունակ ՓՄՁ ոլորտի ձևավորումն ու զարգացումը:

Ռազմավարական փաստաթղթով սահմանված է թվով յոթ ռազմավարական նպատակներ, որոնք հիմնականում հանգում են հետևյալին՝

- **Ինստիտուցիոնալ, օրենսդրական և գործառնական միջավայրի բարելավում ՓՄՁ-ների ստեղծման և զարգացման համար:** Ռազմավարական տվյալ նպատակը առնչվում է ՓՄՁ ոլորտի զարգացման հետևյալ խնդիրների լուծմանը՝

- ՓՄՁ սուբյեկտների զարգացման համար ստեղծել բարենպաստ գործարար միջավայր և հարկային դաշտ,
- ապահովել այնպիսի միջավայր, որտեղ բարեխիղճ տնտեսվարողները, ովքեր բախվել են սնանկությանը, կարող են հեշտությամբ երկրորդ հնարավորություն ստանալ,
- կարգավորումները իրականացնել «Սկզբում մտածեք փոքր» սկզբունքին համապատասխան,
- բարձրացնել ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման հասանելիությունը:

Տվյալ ուղղությամբ իրականացվող միջոցառումները կներառեն հասցեական և առանձին իրավիճակային բնույթ ունեցող գործնական աջակցության գործողություններ, որոնք կիրառականացվեն ՓՄՁ սուբյեկտների պահանջների և հարցումների հիման վրա: Որպես հիմնական քայլեր առանձնացվում են.

- ՓՄՁ-ների հիմնադրման և ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովումը,
- ՓՄՁ ոլորտում Հայաստանում իրականացվող քաղաքականության և աջակցման ծրագրերի լուսաբանումը,
- օրենսդրական փոփոխություններին մասնավոր հատվածի ակտիվ ներգրավվածության ապահովում:

- **ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսավորման հասանելիության բարելավում:** Նախատեսում է բարձրացնել ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսավորման հասանելիությունը և զարգացնել այնպիսի օրենսդրական և գործառնական միջավայր, որը կնպաստի առևտրային գործարքների ժամանակին վճարմանը:

Սահմանված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- ֆինանսական շուկայում առկա գործիքների վերաբերյալ իրազեկվածության ապահովում,
- ֆինանսական միջոցների պահանջի ուսումնասիրություն,
- մատչելի վարկերի տրամադրման շարունակություն,
- վարկային պարտավորությունների երաշխիքների տրամադրում,
- նոր ստեղծվող ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսական միջոցների ներգրավման հնարավորությունների խորհրդատվության տրամադրում,
- գործարար ծրագրերի կազմման աջակցություն և ուսուցում:

- **Ձեռնարկատիրական կարողությունների (մշակույթի) խթանում և զարգացում:** Ռազմավարական սույն նպատակը վերաբերում է ՓՄՁ սուբյեկտների կարողությունների արդիականացմանը և նորարարությունները խթանելուն նպաստմանը:

Տվյալ նպատակին հասնելու քայլերն են`

- ձեռնարկատիրական կարողությունների զարգացում,
- տնտեսվարող սուբյեկտների (բիզնես ասոցացիաների) և ուսումնական հաստատությունների միջև համագործակցության խթանում և ուժեղացում,

- ՓՄՁ-ների կողմից նորարարական հետազոտությունների և տեխնոլոգիաների, արդյունքի ստեղծման ու ներդրման համար ֆինանսական մատչելի գործիքների ստեղծումը, երկարաժամկետ վարկերի տրամադրումն առանձին նպատակային ծրագրերի միջոցով,
- ՓՄՁ-ների կողմից նորարարական արտադրանքի արտադրության համար բարենպաստ պայմանների ստեղծումը՝ գիտական և խորհրդատվական կազմակերպությունների ներգրավմամբ, ֆինանսական երկարաժամկետ մատչելի վարկային ռեսուրսների տրամադրումը:
- **ՓՄՁ սուբյեկտների ներքին և արտաքին մրցունակության բարձրացում:**

ՓՄՁ սուբյեկտների միջազգայնացմանն ուղղված քայլերը կներառեն հետևյալը.

- ՓՄՁ սուբյեկտների արտադրանքի միջազգայնորեն ընդունված ստանդարտներին համապատասխանեցնել ու գործողություններ,
- արտադրանքի արտահանման համար կարողությունների հզորացում, մասնագիտական խորհրդատվական ծառայությունների մատուցում, արտերկրում անցկացվող ցուցահանդեսներին, գործարար համաժողովներին մասնակցության աջակցություն,
- արտահանման գործարքների ֆինանսավորման և ապահովագրման նպատակային ծրագրերի մշակում և իրականացում,
- արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ների բացահայտում և նրանց կարողությունների հզորացում:
- **Պետություն-մասնավոր հատված երկխոսության բարելավում:** Ռազմավարական սույն նպատակը վերաբերում է պետական կառավարումը ՓՄՁ կարիքներին արձագանքող դարձնելուն:

Հաշվի առնելով ներկայիս իրավիճակը՝ պետություն-մասնավոր հատված երկխոսության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ կլինի իրականացնել հետևյալ միջոցառումները.

- օրենսդրական փոփոխությունների իրականացման ընթացքում ակտիվ հանրային քննարկումների իրականացում տարբեր միջոցներով,

- բիզնես-ասոցացիաների ակտիվ մասնակցության ապահովում և իրականացված միջոցառումների վերաբերյալ հետադարձ կապի ապահովում:

- **ՓՄՁ ոլորտի զարգացմանն աջակցող կառույցների ուժեղացում:** ՓՄՁ ոլորտի զարգացման աջակցող կառուցների արդյունավետ գործունեության ապահովման նպատակով անհրաժեշտ է սերտ համագործակցության ապահովում ինչպես միմյանց, այնպես էլ պետական մարմինների հետ:

ՓՄՁ զարգացման տարեկան միջոցառումների իրականացման շրջանակներում նախատեսվում է ներգրավել տարբեր բիզնես ասոցացիաների և պետական հատվածի ներկայացուցիչների՝ սույն ռազմավարության մեջ արտացոլված բոլոր նպատակների իրականացումն ապահովելու նպատակով:

- **Կանանց ձեռներեցության խթանում, ինչպես նաև սկսնակ գործարարներին աջակցության տրամադրում:** Առանձին նպատակի սահմանումը ենթադրում է այս խնդիրներին լրացուցիչ ուշադրության առանձնացումը:

Ելակետ ունենալով ռազմավարության դրույթները և կատարված ուսումնասիրությունները փորձ ենք արել ներկայացնել կաթի վերամշակման ոլորտի փոքր ու միջին ձեռնար-կատիրության հիմնախնդիրների լուծման քաղաքականության հիմնական ուղղությունները: Վերջինս դիտարկվել է նախորդ գլխում բացահայտված հիմնախնդիրների հաջորդականությամբ:

Դիտարկված՝ **Կաթի արտադրության կազմակերպման հիմնախնդիրների** լուծման հիմնական ուղղություններից մեկը դա կերապահովության, մասնավորապես՝ կաթնային անասնապահության կերապահովության վիճակի բարելավումն է: Վերջինս պետք է իրականացվի ինչպես բնական կերահանդակների համակարգված և արդյունավետ օգտագործման, այնպես էլ դաշտային կերարտադրության հնարավորությունների արդյունավետ օգտագործման միջոցով:

Բնական կերահանդակների արդյունավետ օգտագործումը կաթի արտադրության արդյունավետության բարձրացման կարևորագույն ուղղություններից է: Վերջինս իրականացման կարևորագույն

միջոցառումներից կարող է լինել **<<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>>** երկրորդ վարկային ծրագրի իրականացումը, որի <<Համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգ>> բաղադրիչի շրջանակներում իրականացվում է արոտավայրերի ջրարբիացման, դեգրադացված արոտների վերականգնման, արոտներ տանող ճանապարհների անցանելիության ապահովման, հեռագնա արոտներում փարախների և անասնապահի տնակների կառուցման աշխատանքներ: Վերջինս հնարավորություն է ստեղծում արոտների, առավել ևս հեռագնա արոտների համակարգված և արդյունավետ օգտագործման համար: Նշված վարկային առաջին ծրագրում ընդգրկված էր հանրապետության 6 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) շուրջ 90 համայնք, իսկ երկրորդ ծրագրով ընդլայնվել է ընդգրկվող մարզերը երկուսով (Վայոց ձոր, Կոտայք), ներառելու է 100 գյուղական համայնք: Նշված ծրագիրը փաստորեն ներառում է հանրապետության գյուղական համայնքների ընդհանուր թվի հազիվ 22.0 %-ը: Հետևաբար անհրաժեշտությունն է նման ուղղվածության վարկային ծրագրերի շարունակումը և նոր ծրագրերի իրականացում, որոնք ուղղված կլինեն բնական կերահանդակների, մասնավորապես արոտների ջրարբիացման, դրանց համակարգված և արդյունավետ օգտագործմանը: Վերջինս արտադրվող կաթի ինքնարժեքի իջեցման և արդյունավետության բարձրացման կարևոր նախապայմաններից է:

Հիմնախնդրի լուծման կարևոր ուղղություններից է դաշտային կերարտադրության վիճակի բարելավումը և հնարավորությունների լիարժեք օգտագործումը: Տվյալ ուղղությամբ կարևորվում է նույնպես <<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> ծրագրի շրջանակներում <<Արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվների>> ստեղծումը և դրանց կարողությունների ընդլայնումը: Վերջինս հնարավորություն է տալիս ընդլայնել դաշտային կերային մշակաբույսերի ցանքատարածությունները, բարձրացնել արտադրության արդյունավետությունն ու ավելացնել կերարտադրության ծավալները:

Այս ուղղությամբ առանձնակի կարևորվում է կերային մշակաբույսերի սերմնաբուծության և սերմապահովության ուղղությամբ պետական ծրագրերի իրականացումը: Գարու և կերային մշակաբույսերի սերմապահովության պետական ծրագրերի հետ մեկտեղ անհրաժեշտություն է պետություն-մասնավոր հատված համագործակցության արդյունքում իրականացնել կերային մշակաբույսերի սերմնաբուծության ծրագրեր, այդ գործընթացում ընդգրկելով <<Գյումրիի սելկցիոն կայան>> ՓԲԸ-ն, <<Երկրագործության գիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ը, <<Սյունիքի մարզի սերմարտադրողների իրավաբանական անձանց միությունը>> և այլ տնտեսավարողներ: Այստեղ առաջարկվում է պետական աջակցությամբ կերային մշակաբույսերի էլիտային սերմերի ձեռք բերում և դրանց վերարտադրության կազմակերպում վերը նշված կազմակերպություններում և խոշոր գյուղացիական տնտեսություններում ու մատչելի պայմաններով, առնվազն բերքահավաքից հետո ընկած ժամանակահատվածում, դրանց փոխատուցում կամ փոխհատուցման տարաժամկետ վճարման պայմանների կիրառում:

Տվյալ հիմնախնդրի լուծման կարևոր ուղղություններից կարող է լինել դաշտային կերարտադրության կառուցվածքի բարելավումը: Դաշտային կերարտադրության ներկայիս կառուցվածքը ոչ արդյունավետ է: Այս մասին վկայում են կերային մշակաբույսերի ցանքատարածությունների և դրանց կառուցվածքի վերջին տարիների ցուցանիշները (աղյուսակ 3.3.1):

Աղյուսակ 3.3.1

**ՀՀ կերային մշակաբույսերի ցանքատարածությունները և դրա կառուցվածքը 2013-2015թթ. տվյալ ներով**[100]

| Կերային մշակաբույսերը | 2013թ. | | 2014թ. | | 2015թ. | |
|---|---|---|---|---|---|---|
| | հա | % | հա | % | հա | % |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Կերի արմատապտուղներ | 489 | 0.65 | 464 | 0.60 | 350 | 0.45 |
| Եգիպտացորեն սիլոսի, կանաչ կերի և սենաժի համար | 516 | 0.69 | 358 | 0.46 | 415 | 0.53 |

[100] Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը 2013; 2014 և 2015թթ.: ՀՀ ԱՎԾ, Երևան 2014; 2015; 2016թթ., էջ 27-30

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Սիլոսային մշակաբույսեր (առանց եգիպտա-ցորենի) | 178 | 0.24 | 379 | 0.49 | 910 | 1.16 |
| Միամյա խոտեր | 13394 | 17.92 | 10906 | 14.15 | 11551 | 14.77 |
| աղյուսակ 3.3.1-ի շարունակությունը | | | | | | |
| 1 | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** |
| Բազմամյա անծածկույթ խոտերի ընթացիկ տարվա ցանք | 6297 | 8.42 | 6866 | 8.91 | 7116 | 9.10 |
| Բազմամյա խոտերի անցյալ տարիների ցանք | 53883 | 72.08 | 58094 | 75.38 | 57851 | 73.98 |
| **Ընդամենը կերային մշակաբույսեր** | **74757** | 100.00 | **77067** | 100.00 | **78193** | 100.00 |

Աղյուսակի տվյալներից երևում է, որ կերային մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացման միտումի հետ մեկտեղ դրանց կառուցվածքը մնում է վատթար: Չափազանց փոքր տեսակարար կշիռ ունի հյութալի կերերը, սիլոսային մշակաբույսերը, որոնց օգտագործումը կաթնային մթերատվության բարձրացման կարևոր ուղղություններից է: Բացարձակ գերակշռող մասնաբաժին ունի բազմամյա խոտերի նախորդ տարիների ցանքը, որոնք օգտագործվում են ագրոտեխնիկայով սահմանված ժամկետից մի քանի անգամ երկար, որի հետևանքով նվազում է կերային մշակաբույսերի բերքատվությունը և որակական հատկանիշները: Ստեղծված վիճակը պահանջում է որոշակի խթանիչ միջոցառումների իրականացմամբ նպաստել կերային մշակաբույսերի կառուցվածքի բարելավմանը, մասնավորապես կերի արմատապտղի, սիլոսային մշակաբույսերի և բազմամյա խոտերի ընթացիկ տարվա ցանքերի ավելացմանը:

Կերային մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքի բարելավման խթանիչ միջոցառումներից կարող է լինել նախընտրելի մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացման համար սուբսիդիաների տրամադրումը, ինչպես նաև որոշ կերային մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացման համար նպատակային մատչելի վարկերի տրամադրումը:

Նշվածի հետ մեկտեղ <<Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> վարկային ծրագրի

շրջանակներում <<Արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվների>> ստեղծումը, դրանց կարողությունների ընդլայնումը նույնպես հնարավորություններ կստեղծի կերային մշակաբույսերի կառուցվածքի բարելավման համար:

Կաթի արտադրության հիմնախնդիրների լուծման կարևոր գործիքներից է նպատակային մատչելի վարկերի տրամադրումը: Ներկայումս գյուղատնտեսությունում գործող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի պայմանները բարենպաստ են հիմնականում բուսաբուծության ճյուղի, այն էլ միամյա մշակաբույսերի մշակության համար, որի առավելագույն ժամկետը 2 տարի է: Ինչպես նշել էինք անասնաբուծության ճյուղին տրամադրված վարկերի ծավալները էականորեն զիջում են գյուղատնտեսության մեջ նրա տեղը բնութագրող ցուցանիշներին, և ճյուղի առանձնահատկությունները պահանջում են, որ վարկավորման ծավալների ավելացման հետ մեկտեղ անասնապահության համար վերանայվեն վարկավորման պայմանները, այն տրամադրվեն ոչ թե առավելագույնը 2 տարի ժամկետով, այլ առնվազն 5 տարի ժամկետով, ինչպես նաև վարկի մայր գումարի և տոկոսադրույքների մարման արտոնյալ ժամկետը հասցնել առնվազն մեկ տարվա, մեծացնել նաև մայր գումարի առավելագույն չափը՝ հասցնելով 7 մլն դրամի:

Հաջորդ՝ **Կաթի նախնական մշակման, պահպանման հետ կապված հիմնախնդիրների** լուծման կարևոր միջոցառումներից պետք է լինի գյուղական համայնքները կաթի հավաքման, պաղեցման և պահպանման տեղակայանքներով հագեցումը: Հաշվի առնելով անասնապահական տնտեսությունների ցածր վճարունակությունը կարևոր է համարվում այդ տեղակայանքների մատակարարումը մատչելի պայմաններով, մասնավորապես նպատակային մատչելի վարկերի, լիզինգային մատչելի մեխանիզմների կիրառումը: Վերջինս արդյունավետ կարող է լինել կոոպերատիվների ձևավորման դեպքում, այդ սարքավորումները կոոպերատիվների անդամների կողմից ձեռքբերումը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետության գյուղական համայնքների համար կիրառման և

սպասարկման առումով նպատակահարմար է համարվում բացվող սառեցման ագրեգատները: Կարող է կիրառվել ռուսական արտադրության, սակայն առավել նպատաակահարմար է գտնվում ֆրանսիական արտադրության սառեցման ագրեգատները, որոնց տեխնիկական պարամետրերը լայն միջակայքում են, նախընտրելի է համարվում նաև գերմանական և իտալական սարքավորումները: Ֆրանսիական արտադրության սարքավորումներից առավել նպա-տակահարմար է համարվում <<Թարմ կաթ>> YOM-R և YOM-S մոդելները: Տվյալ սարքավորումներից <<Թարմ կաթ>> YOM-S-ի կառուցվածքը հնարավորություն է տալիս այն օգտագործել առավել հեշտ: Նշված սարքավորումների համար տարբեր մակնիշների մոտ կաթի լցման ծավալը գտնվում է 300-5000 լիտրի սահմաններում[101]: Մյուս մոդելը՝ <<Թարմ կաթ>> YOM-R-ի կառուցվածքը այլ է, այն ուղղաձիգ խողովակի տեսք ունի, տարողությունը համեմատաբար փոքր է: Տվյալ տեղակայանքը ունի որոշակի առավելություններ, մոնտաժվում է առավել դյուրին, կահավորված է խառնիչով, որը հնարավորություն է տալիս կաթի հավասարաչափ սառեցման համար[102]:

Տեղական հետազոտողների կողմից գնահատվել է առաջարկվող կաթի սառեցման տեղակայանքների օգտագործման տնտեսական արդյունավետությունը: Մասնավորապես մեկ տարվա ընթացքում <<Թարմ կաթ>> YOM-S 3000 մակնիշի կաթի սառեցման տարեկան ծախսերը ներկայացված է 3.3.2 աղյուսակում:

Աղյուսակ 3.3.2

**<<Թարմ կաթ>> YOM-S 3000 ագրեգատի շահագործման ծախսերը տարվակտրվածքով** (համատեղ գործունեության համար)[103]

| № | Ծախսերի անվանումը | Չափի միա-վորը | Օրական ծախսի նորման | Տարեկան ծախսը | Միավորի գինը, դրամ | Տարեկան դրամական ծախսը, հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |

[101] www. progress-st.ru/prod/tanki_ahladiteli_milika/
[102] www. progress-st.ru/prod/tanki_ahladiteli_milika/
[103] Աբրահամյան Ս.Վ. <<Կաթի արտադրության արդյունավետության բարձրացման խնդիրները և դրանց լուծման ուղիները (ՀՀ Շիրակի մարզի օրինակով)>>: Ը.00.02-<<Տնտեսություն, նրա ոլորտների տնտեսություն և կառավարում>> մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածու գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր: Երևան 2016, էջ 18

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Էլեկտրաէներգիայի ծախսը, այդ թվում` | - | - | - | - | 847.365 |
| 1.1 | ցերեկային | Կվտ.ժամ | 31.5* (4.5x7) | 11497.5 | 41.85 | 481.170 |
| 1.2 | գիշերային | Կվտ.ժամ | 31.5* | 11497.5 | 31.85 | 366.195 |
| 2 | Ջրի ծախսը | $մ^3$ | 0.6 | 219 | 150 | 32.850 |
| 3 | Լվացող միջոցների ծախսեր | կգ | 1.2 | 438 | 300 | 131.400 |
| | | | | | | աղյուսակ 3.3.2-ի շարունակությունը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 4 | Աշխատանքային ծախսումներ | մարդ.օր | 2.0 | 730 | 3500 | 2555.0 |
| 5 | Այլ ծախսեր | դրամ | 300 | | | 109.5 |
| | **Ընդամենը ծախսեր** | | | | | 3676.115 |

*տեղակայանքի հզորությունը 4.5 Կվտ է, ծանրաբեռնված աշխատանքի ժամանակահատվածը գնահատվում է 7 ժամ ցերեկը և 7 ժամ գիշերը

Հաշվարկները ցույց են տվել, որ լրացուցիչ ստացվող եկամտի հաշվին տեղակայանքի մոնտաժման և շահագործման ծախսերը փոխհատուցվում է 1.4 տարվա ընթացքում:

Հաջորդ հիմնախնդրի` **կաթնամթերքի հումքի իրացման** բնագավառում վարվող քաղաքականությունը պետք է իրականացվի հետևյալ երկու ուղղություններով`

- կաթի հավաքման և իրացման կոոպերատիվների ձևավորման խթանումը: Վերջինս, ինչպես նշվել է նախորդ բաժնում, հնարավոր է համարվում երկու տարբերակով, երբ կոոպերատիվի անդամ հանդիսանում են միայն կաթ արտադրող գյուղացիական տնտեսությունները և մյուսը երբ կոոպերատիվի անդամ հանդիսանում են կաթ արտադրող տնտեսությունները (գյուղացիական տնտեսությունները) և կաթ վերամշակող փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտը,
- կաթ արտադրողների և կաթ վերամշակող փոքր ու միջին ձեռնարկության հետ կաթի գնման պայմանագրային հարաբերությունների հաստատումը, որով հստակ պետք է սահմանվեն կաթ արտադրողների և վերամշակողների պարտականություններն ու իրավունքները, կաթի գնի հաշվարկման չափանիշները և կաթի որակական հատկանիշների պահանջները:

Քաղաքականության նշված ուղղությունների կիրառումը իրատեսական կլինի աշխատանքի նախորդ բաժնում նշված վերջիններիս խթանման միջոցառումների կիրառման պայմաններում, որի վերաբերյալ մոտեցումները նույնպես ներկայացված են նախորդ բաժնում:

Կաթի ապրանքայնության մակարդակը 2015թ. տվյալներով կազմել է 59.6 %[104]: Նշված ցուցանիշի փաստացի մակարդակը վկայում է, որ այն զգալիորեն ցածր է և չի նպաստում անասնապահական տնտեսությունների կարողությունների ընդլայնմանը և եկամուտների ավելացմանը: Ըստ գնահատման կաթի իրացման վիճակի բարելավման ուղղված քայլերի ձեռնարկումը հնարավորություն կտա կաթի ապրանքյնության մակարդակը հասցնել 67.0-70.0 %-ի:

Հաջորդ՝ **<u>կաթնամթերքի արտադրության գործընթացի հետ կապված հիմնախնդիրների</u>** լուծման քաղաքականության ուղղությունները հետևյան են:

Կարևոր հիմնախնդիր է հանդիսանում արտադրանքի մրցունակության բարձրացումը, վերջինս հնարավոր է համարվում հետևյալ մոտեցումներով:

Կաթնամթերքի մրցունակության բարձրացման համար կարևոր է համարվում արտադրության ռացիոնալ կազմակերպման միջոցով արտադրական գործընթացում ծախսերի և կորուստների հնարավոր կրճատումը: Մրցունակության բարձրացման նպաստող միջոցառումներից է նաև արտադրանքի որակական հատկանիշների բարելավումը, որի արդյունքը կարող է լինել շուկայում ինչպես սպառման ծավալների ավելացումը, այնպես էլ գնի հնարավոր բարձրացումը:

Մրցունակության բարձրացման ուղղություններից մեկը կիրառվող տեխնոլոգիաների կատարելագործման, արդիական տեխնոլոգիաների ներդրման միջոցով կաթնամթերքի միավորի արտադրության ծախսերի կրճատումն է, դրանց որակական հատկանիշների բարելավումը, ինչպես նաև նոր արդյունավետ

---

104 Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2015թ., ՀՀ ԱՎԾ: Երևան 2016թ. էջ 4

արտադրատեսակների ներդրումը: Վերջինս պահանջում է նաև առկա սարքավորումների մոդեռնացում, նորերով փոխարինում:

Արդիական սարքավորումների ներդրումը բարդ գործընթաց է, այն պահանջում է մեծածավալ ներդրումներ, որի իրականացման համար կաթնամթերք արտադրող ՓՄՁ-ները, ըստ կատարված դիտարկումների, չունեն սեփական ֆինանսական ռեսուրսներ:

Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի <<Կաթի, տավարի և ոչխարի մսի վրա հիմնված սննդի բիզնեսով զբաղվողների ուսումնասիրության>> վերջնական հաշվետվության համաձայն կաթ վերամշակող ընկերությունների մեծ մասը՝ 68.2 %-ը նշում է, որ առկա տեխնոլոգիաները բավարարում են իրենց պահանջները, իսկ 31.8 %-ի մոտ առկա տեխնոլոգիաները չեն բավարարում առկա պահանջներին[105]:

Սակայն պատկերը փոխվում է, երբ տեխնոլոգիաների համապատասխանության հարցման արդյունքները համադրվում են կազմակերպությունների արտադրական հզորությունների հետ: Այսպիսով, մինչեւ 2000 տ արտադրական հզորություն ունեցող ընկերությունների 50 %-ի կարծիքով, նրանց մոտ առկա տեխնոլոգիաները չեն համապատասխանում իրենց պահանջներին: Այլ պատկեր է 2000 տ և ավել արտադրական հզորություն ունեցող կազմակերպությունների մոտ, որոնցից ընդամենը 28.6 տոկոսն է կարծում, որ ունի տեխնոլոգիայի խնդիր:

Նոր ներդրումներ նախատեսում են կատարել հիմնականում խոշոր ընկերությունները, ինչը պայմանավորված է ներդրումների ծախսատարությամբ: Ներդրումների հիմնական ուղղվածությունն է նոր տեխնոլոգիաների ձեռք բերումը: Հարկ է նշել, որ խոշոր ներդրումներ նախատեսում են կատարել 3000 տ և ավել արտադրական հզորություն ունեցող ընկերությունները: Կաթի վերամշակմամբ զբաղվող ընկերությունների կողմից նախատեսվող ներդրումների հիմնական նպատակն է նոր տեխնոլոգիաների ձեռքբերումը:

---

105 Վերջնական հաշվետվություն: Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր 2 <<Կաթի, տավարի եւ ոչխարի մսի վրա հիմնված սննդի բիզնեսով զբաղվողների ուսումնասիրություն>>, էջ 31-32

Կաթ վերամշակող ընկերությունների նախատեսվող ներդրումների ուղղվածությունը հետևյալն է՝ լրացուցիչ սարքավորումներ արտադրողականությունը բարձրացնելու համար՝ 26.3 %, նոր սարքավորումների ձեռք բերման՝ 23.5 %, նոր տեխնոլոգիաների ներդրման՝ 50.2 %[106]:

Արդիական տեխնոլոգիաների ներդրման խթանման կարևորագույն ուղղություններից կարող է լինել կաթ վերամշակող ՓՄՁ սուբյեկտներին նպատակային մատչելի վարկերի տրամադրումը (այն պետք է մատչելի լինի ինչպես տոկոսադրույքի, այնպես էլ տրամադրվող վարկի ծավալների առումով, որը հնարավորություն տա տեխնոլոգիական սարքավորումների ձեռքբերման, այնպես էլ վարկավորման ժամկետի առումով), կարևորվում է նաև տեխնոլոգիական սարքավորումների ձեռք բերումը մատչելի լիզինգային մեխանիզմների կիրառման, մասնավորապես լիզինգի կանխավճարի մասնակի սուբսիդավորումը, լիզինգի իրատեսական ժամկետների սահմանումը:

Այսպիսով կաթնամթերքի արտադրական գործընթացի հետ կապված կաթ վերամշակող ՓՄՁ-ների հիմնախնդիրների լուծման կարևոր ուղղություններից է, ոլորտին տրամադրվող վարկերի ծավալների և մատչելիության բարձրացումը, որը հնարավոր է համարվում հետևյալ մեխանիզմների կիրառմամբ՝

- ինչպես հումքի ձեռք բերման, այնպես էլ տեխնիկական վերազինման համար նպատակային մատչելի վարկերի տրամադրումը,
- տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման մեխանիզմների կիրառում,
- հայկական դրամով տեխնոլոգիաների վերազինման վարկերի տրամադրում:

Արդիական տեխնոլոգիաների ներդրաման համար կարևոր է համարվում կադրերի ուսուցման կազմակերպումը: Կադրերի ուսուցումը հիմնականում պետք է նպատակաուղղված լինի

[106] Վերջնական հաշվետվություն: Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր 2 <<Կաթի, տավարի եւ ոչխարի մսի վրա հիմնված սննդի բիզնեսով զբաղվողների ուսումնասիրություն>>, էջ 34

արդիական տեխնոլոգիաների կիրառման հմտությունների զարգացմանը և սննդի անվտանգության համակարգերի ներդրմանը (վերջինիս կանդրադառնանք առանձին):

Նոր տեխնոլոգիանների ներդրմանն ուղղությամբ կադրերի ուսուցումը անհրաժեշտ է իրականացնել հետևյալ երեք ուղղություններով՝

- ուսուցում և վերապատրաստում հանրապետությունում գործող համապատասխան ուսումնական հաստատություններում,
- ուսուցման կազմակերպում կաթ վերամշակող ընկերություններում, համապատասխան տեղական և արտերկրի մասնագետների հրավիրմամբ,
- ուսուցման կազմակերպում տեխնոլոգիական սարքավորումների մատակարարող ընկերությունների կողմից մատակարար երկրի տարածքում, ինչպես նաև հանրապետությունում, կոնկրետ տեխնոլոգիաները ներդրող արտադրության տարածքում:

Կաթի վերամշակման ոլորտի ՓՄՁ-ների հաջորդ դիտարկված հիմնախնդիրը՝ **<u>կաթնամթերքի արտադրությունում սննդամթերքի անվտանգության չափանիշներին և ստանդարտներին համապատասխանության ապահովման հիմնախնդիրն է:</u>**

Դիտարկումները ցույց են տալիս, որ սննդի անվտանգության կանոնակարգերին և իրավական ակտերին կաթնամթերք արտադրող կազմակերպությունների իրազեկվածությունը կազմում է 91.3 %, իսկ 8.7 %-ը իրազեկ չեն նշվածին:

Կաթի վերամշակմամբ զբաղվող ընկերությունների 13 տոկոսը (2013թ. դիտարկումներով) չունի որևէ սերտիֆիկացում, մնացած ընկերություններում սերտիֆիկացումների բաշխումը ներկայացվում է 7-րդ գծապատկերում:




**Գծապատկեր 7: Սերտիֆիկացում ունեցող կաթ վերամշակող ընկերությունների սերտիֆիկատների տեսակների հարաբերակցությունը (%)**[107]

Գծապատկերից երևում է, որ սերտիֆիկացում ունեցող կաթի վերամշակմամբ զբաղվող ընկերությունների 46.7 %-ը ունի «HST» սերտիֆիկատ: Միջազգային ISO սերտիֆիկացում ունեն կազմակերպությունների ընդամենը 20 տոկոսը: Կաթ վերամշակող ընկերությունների 80 տոկոսը, նախատեսում է ձեռք բերել նոր սերտիֆիկացում: Նշված ընկերությունների 73.9 տոկոսը վարում է սննդամթերքի անվտանգության վերաբերյալ գրանցումներ, իսկ մնացած 26.1 %-ը՝ մասնակի գրանցումներ:

Սննդամթերքի անվտանգության չափանիշների ապահովման համար անհրաժեշտ է կատարել որոշակի ներդրումներ: Այդ ներդրումների ուղղությունները բազմազան են: Կատարված ուսումնասիրություններով և դիտարկումներով բացահայտվել է կաթ վերամշակող ընկերությունների մոտ այդ ներդրումների կառուցվածքը, որի վերաբերյալ տվյալները ներկայացվում է 8-րդ գծապատկերում:

---

[107] Յիմք է ընդունվել Յամայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր 2 <<Կաթի, տավարի եւ ոչխարի մսի վրա հիմնված սննդի բիզնեսով զբաղվողների ուսումնասիրություն>> վերջնական հաշվետվության տվյալները, էջ 37




**Գծապատկեր 8: Կաթի վերամշակող ընկերություններում սննդամթերքի անվտանգության պահանջները բավարարելու նպատակով կատարված ներդրումների կառուցվածքը** (%)[108]

Գծապատկերից երևում է, որ սննդամթերքի անվտանգության չափանիշների համար կատարվող ներդրումների կառուցվածքում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն ներքին շինությունների, փաթեթավորման և պիտակավորման, աշխատակիցների հիգենիայի, հումքի տնօրինման և պահպանման ծախսերը:

Կաթի վերամշակմամբ զբաղվող ընկերությունների բացարձակ մեծամասնությունը, մասնավորապես 72.7 %-ը, կարծում են, որ սննդի անվտանգության վերաբերյալ վերապատրաստման կարճաժամկետ դասընթացների մասնակցելու կարիք կա, իսկ 13.6 %-ը գտնում են, որ իրենց աշխատակիցները վերապատրաստման կարիք չունեն, հարցվածների մնացած 13.7 %-ը տվել են անորոշ պատասխան:

Կաթի վերամշակմամբ զբաղվող ընկերությունների կողմից` որպես կարճաժամկետ վերապատրաստման դասընթացների ուղղվածություն ամենամեծ հետաքրքրություն ունեն լաբորատոր հետազոտությունների ընթացակարգերի և սննդի արտահանման ընթացակարգերի վերաբերյալ դասընթացները, այնուհետև

---

[108] Յիմք է ընդունվել` Յամայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր 2 <<Կաթի, տավարի եւ ոչխարի մսի վրա հիմնված սննդի բիզնեսով զբաղվողների ուսումնասիրություն>> վերջնական հաշվետվության տվյալները, էջ 39

հաջորդում են սննդի անվտանգության օրենքներին և կանոնակարգերին, ինչպես նաև ISO 22000 ստանդարտին առնչվող դասընթացները:

Կաթի վերամշակող ընկերությունների կողմից վերապատրաստման թեմաների նախընտրելի ուղղությունների բաշխվածությունը ներկայացված է 9-րդ գծապատկերում:




**Գծապատկեր 9: Կաթի վերամշակող ընկերությունների կողմից վերապատրաստման թեմաների նախընտրելի ուղղությունների բաշխումը (%)**[109]

Գծապատկերում ներկայացված տվյալներից երևում է, որ կաթ վերամշակող ընկերությունները սննդամթերքի անվտանգության ուղղությամբ դասընթացների ուղղվածության մեջ առավել մեծ մասնաբաժին, ավելի քան 18.0 %, կազմում են սննդի արտահանման և լաբորատոր հետազոտությունների ընթացակարգերին:

Վերը նշվածը կողմնորոշիչ կարող է լինել սննդամթերքի անվտանգության չափանիշների ներդրման համար վերապատրաստման ծրագրերը կազմելու համար:

Հաշվի առնելով կաթի վերամշակող ՓՄՁ ների սննդամթերքի անվտանգության չափանիշների ներդրման ներկա վիճակը և մասնագիտական կարողությունները անհրաժեշտ է համարվում այդ

109 Հիմք է ընդունվել` Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր 2 <<Կաթի, տավարի եւ ոչխարի մսի վրա հիմնված սննդի բիզնեսով զբաղվողների ուսումնասիրություն>> վերջնական հաշվետվության տվյալները, էջ 41

կազմակերպություններին տրամադրել տեխնիկական օժանդակություն սննդի անվտանգության համակարգերի ներդրման ուղղությամբ, մասնավորապես ISO 22000, HACCP, ներառյալ՝ համակարգերի ներդրման հետ կապված ծախսեր (հիմնականում համապատասխան սարքերի ձեռքբերում, կադրերի վերապատրաստում և սերտիֆիկացման հետ կապված ծախսեր):

Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորման նպատակով առաջարկվում է օգտվել ՀՀ կառավարության 2016թ. հունվարի 20-ի N104-Ն որոշմամբ հաստատված «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության՝ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման 2016թ. ծրագրի» և հետագա տարիների ծրագրերի հնարավորություններից:

Հաջորդ կարևոր հիմնախնդիրը կապված է **կաթնամթերքի իրացման հետ:**

Կաթ վերամշակող փոքր ու միջին ձեռնարկությունների կողմից ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայի պահանջների բավարարման, կաթնամթերքի իրացման կարևոր նախապայմաններից է մարքեթինգային հետազոտությունների իրականացումը, որը հնարավոր է համարվում ՓՄՁ սուբյեկտներում համապատասխան պատշաճ ծառայությունների կազմակերպման միջոցով:

Մարքեթինգի արդյունավետ կառավարումը նշանակում է ինչպես կառուցել տեղեկատվության հավաքագրման, շուկայի ուսումնասիրության իրականացման, գովազդի կազմակերպման, իրացման գործարքների և սպասարկման ծառայությունը (համակարգը) որպեսզի ապահովել առավելագույն արդյունք (շահութաբերություն, իրացման ծավալ և այլն) նվազագույն ծախսումների պայմաններում: Մարքեթինգային ծառայությունների բազմաթիվ կառուցվածքներից ձեռնարկություններում տարածում ունեն հետևյալը՝ ֆունկցիոնալ, ապրանքային, տարածքային, սեգմենտային կողմնորոշում ունեցողներ: Երբ ապրանքների և շուկաների թիվը դառնում է չափից դուրս (մարկեթինգային ծառայության մեկ մասնագետի հաշվով գերազանցում է 7-9), ի հայտ է

գալիս իրական վտանգ, որ ապրանքներին և շուկաներին բավարար ուշադրություն չի դարձվի: Այս դեպքում ֆունկցիոնալ կառուցվածքը վեր է ածվում ապրանքայինի, որի դեպքում առանձնացվում է կառավարիչ առանձին ապրանքային խմբերի համար: Ապրանքային կողմնորոշումը ցուցաբերում է իր դրական հատկանիշները, երբ գովազդի պահանջները, իրացման և սպասարկման կազմակերպումը, փաթեթավորումը և այլն էականորեն տարբերվում են յուրաքանչյուր ապրանքի համար[110]:

Տարածքային կողմնորոշումը իր կառուցվածքով անալոգ է ապրանքայինին, սակայն հիմք է ընդունվում տարանջատումը ոչ թե ըստ ապրանքի, այլ ըստ շուկաների: Այս դեպքում ապրանքների անվանացանկը պետք է լինի ոչ մեծ: Տարածքային կողմնորոշումը հնարավորություն է տալիս առավել խորը ուսումնասիրել գնորդների պահանջարկը, որը բնորոշ է յուրաքանչյուր տարածքին: Սեգմենտային (ուղորդված դեպի գնորդները) կողմնորոշման կառուցվածքը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր մարկեթինգ-կառավարիչ պատասխան է տալիս որոշակի սեգմենտում պոտենցիալ գնորդների հետաշխատանքի համար, անկախնարից թե որ աշխարհագրական շուկայում է գտնվում այդ սեգմենտը[111]:

Հաշվի առնելով հանրապետության կաթ վերամշակող փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների չափերը և արտադրված արտադրանքի տեսականին նպատակահարմար է համարվում մարքեթինգային ծառայության ֆունկցիոնալ կողմնորոշումը:

Վերը նշվածից ելնելով առաջարկվում է հանրապետությունում գործող կաթ վերամշակող փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների մարքեթինգային ծառայության կազմակերպական նախընտրելի կառուցվածք (գծապատկեր 7):

Առաջարկվող կառուցվածքում, կոնկրետ կաթ վերամշակող ՓՄՁ-ի կոնկրետ պայմաններից ելնելով հնարավոր է կառուցվածքի որոշ փոփոխություններ, մասնավորապես հնարավոր է համարվում մարքեթինգային ծառայության ղեկավարի համակարգումն

[110] Малыш М.Н. Аграрная экономика: Учебник / 2-е изд., Санкт-П.: “Лань”, 2002.- с. 578
[111] Նույն տեղում с. 579

իրականացվի անմիջապես տնօրենի կողմից, մարքեթինգային ծառայության ոլորտային պատասխանատուների գործառույթների միավորում, օրինակ հնարավոր է, արտադրության ծավալներից կախված, շուկայի ուսումնասիրման և կաթնամթերքի արտադրության ծրագրավորման պատասխանատվությունը դրվի մեկ անձնավորության վրա կամ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում իրացման պատասխանատվությունը դրվի մեկ անձի վրա:




**Գծապատկեր [illegible]. ՓՄՁ սուբյեկտների մարքեթինգային ծառայության առաջարկվող կազմակերպական կառուցվածքը**

Առաջարկվող մարկեթինգային ծառայության կարևոր խնդիրներից մեկը պետք է լինի շուկայի ուսումնասիրության հիման վրա արտադրանքի նախընտրելի տեսակային կազմի առաջադրումը և դրանց ապահովման համար նախադրյալների ստեղծումը: Տվյալ ծառայության կարևոր գործառույթը պետք է լինի գովազդի կազմակերպումը և շուկայում դիրքի պահպանումը:

Կաթնամթերքի իրացման հիմնախնդրի լուծման կարևոր ուղղություններից պետք է լինի կաթնամթերք առաքող ընկերությունների և առևտրային կազմակերպությունների հետ պայմանագրային հարաբերությունների հաստատումը և դրանց համապատասխան ծրագրավորված աշխատանքի կազմակերպումը:

Կաթնամթերքի որոշ տեսակների համար, որոնք ունեն արտահանման պոտենցիալ (մասնավորապես պանրի և պաղպաղակի տարբեր տեսակներ), կարևոր է համարվում արտահանող ընկերությունների հետ կապերի հաստատումը, ինչպես նաև արտաքին շուկայում գործող առևտրային ներկայացուցչությունների և առևտրային կազմակերպությունների հետ կապերի հաստատումը:

Տվյալ դեպքում կարևոր է համարվում կաթ վերամշակող ՓՄՁ սուբյեկտներին ինչպես հանրապետությունում, այնպես էլ այլ երկրներում ցուցահանդեսների մասնակցության գործընթացում խորհրդատվական և նյութական որոշակի աջակցության տրամադրումը:

Արտահանման պոտենցիալ ունեցող արտադրատեսակների արտահանման խթանման նպաստող գործոն կարող է լինել **«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն»** հնարավորությունների օգտագործումը: Գործակալության առաքելությունն է`

- խթանել արտահանումը` ապահովագրելով արտահանողներին օտարերկրյա գնորդների չվճարման ռիսկից,
- նպաստել մատչելի և հասանելի ֆինանսական ռեսուրսների տրամադրմանը` փոքր և միջին ձեռնարկություններին,
- նպաստել արտահանման առևտրային ռիսկերի ապահովագրության մասնավոր շուկայի զարգացմանը:

Գործակալության կողմից իրականացվում են շարունակական քայլեր՝ նոր գործիքների մշակմանն ուղղված, որոնք հնարավորություն կտան նաև ՓՄՁ սուբյեկտներին լուծելու շրջանառու միջոցների հետկապված խնդիրները:

Արտահանման խթանման քայլերից կարող է լինել մասնագիտական խորհրդատվական ծառայությունների մատուցումը արտերկրում անցկացվող ցուցահանդեսներին, գործարար համաժողովներին մասնակցության աջակցություն, ինչպես նաև արտահանման գործարքների ֆինանսավորման և ապահովագրման նպատակային ծրագրերի մշակում և իրականացում:

Արտահանման խթանման առումով կարևոր է համարվում նաև ՀՀ կառավարության 2016թ. հունվարի 20-ի N104-Ն որոշմամբ հաստատված **«Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության՝ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման 2016թ. ծրագրի»** և հետագա տարիների ծրագրերի հնարավուրությունների օգտագործումը:

Կաթ վերամշակող ՓՄՁ-ների նշված ծրագրից հնարավոր է համարվում օժանդակությունը ֆինանսական գործիքների կիրառմամբ, մասնավորապես՝

- արտադրական գործունեության մասնակի սուբսիդավորում (վարկերի տոկոսադրույքի 3 տոկոսային կետի համարժեք մասը),
- օտարերկրյա պետություններում սերտիֆիկացման ծախսերի համաֆինանսավորում (ծախսերի 50 %-ի չափով),
- հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում:

Կարևոր է համարվում նաև հայկական ապրանքների՝ նպատակային շուկաներում առաջմղումը, հայկական ապրանքների ներկայացումը, շուկայական տեղեկատվության ապահովման միջոցառման ուղղությամբ քայլերը կարող են լինել՝

- օտարերկրյա պետություններում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորում,
- ցուցահահանդեսների կազմակերպման և մասնակցության ապահիվման գործընթացում աջակցութուն (միասնական հայկական

տաղավարով մասնակցություն կամ անհատական մասնակցության ծախսերի փոխհատուցում 50.0 %-ի չափով),

- գործարար կապերի հաստատման գործընթացում աջակցություն:

Արտահանման գործընթացում կարևոր է համարվում արտահանման ռացիոնալ ուղիների գնահատումը և դրանց կիրառումը, ինչպես նաև շուկայական կոնյուկտուրայի և ապրանքների պահանջարկի վերաբերյալ միասնական տեղեկատվական հարթակի ստեղծումը:

Յաջորդ կարևոր հիմնախնդրի՝ **կաթնամթերքի արտադրության հարաբերությունները կարգավորող իրավաօրենսդրական դաշտի համալրման և կատարելագործման** ուղղությամբ քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի հետևյալին:

Տվյալ հիմնախնդրի լուծման համար առանցքային նշանակություն ունի «Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի կատարումը (ընդունված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ 2013 թվականի հոկտեմբեր 9-ի թիվ 67 որոշմամբ):

Կանոնակարգը մշակվել է մարդու կյանքը և առողջությունը, շրջակա միջավայրը, կենդանիների կյանքը և առողջությունը պաշտպանելու, կաթի և կաթնամթերքի հետ կապված սպառողներին շփոթության մեջ գցող ազդեցությունների, մասնավորապես՝ դրանց նշանակության և անվտանգության մասին նախազգուշացնելու նպատակով, ինչպես նաև տարածվում է Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող կաթի և կաթնամթերքի, դրանց արտադրության, պահման, փոխադրման, իրացման ու օգտագործման գործընթացների վրա:

Տվյալ տեխնիկական կանոնակարգը տարածվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող և սննդումն օգտագործվող կաթի և կաթնամթերքի վրա, այդ թվում նաև՝

- հում կաթ՝ հումք, յուղազերծված կաթ (հում և ջերմամշակված)՝ հումք, սերուցք (հում և ջերմամշակված)՝ հումք,
- կաթնամթերք, այդ թվում նաև՝

- կաթնային մթերք,
- կաթնային բաղադրյալ մթերք,
- կաթ պարունակող մթերք,
- կաթի մշակումից ստացված կողմնակի մթերք,
- կաթնային հիմքով մանկական սննդի համար արտադրանք,

- կաթի և կաթնամթերքի արտադրության, պահման, փոխադրման, իրացման եւ օգտագործման գործընթացներ,
- գործառութային բաղադրիչներ, որոնք անհրաժեշտ են կաթի վերամշակումից ստացված մթերքի արտադրության համար:

Կանոնակարգը սահմանում է կաթի և կաթնամթերքի բնագավառում կիրառվող հասկացությունները, կաթի և կաթնամթերքի նույնականացման հարցերը: Կանոնակարգում տեղ է գտել Եվրասիական տնտեսական միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ պետության շուկայում կաթի և կաթնամթերքի շրջանառության կանոնները, ինչպես նաև հում կաթին, հում յուղազերծված կաթին, հում սերուցքին ներկայացվող անվտանգության պահանջներն` արտադրելիս, պահպանելիս, փոխադրելիս, իրացնելիս և օգտագործելիս, ինչպես նաև կաթի վերամշակումից ստացված մթերքի արտադրության համար անհրաժեշտ ֆունկցիոնալ բաղադրիչներին ներկայացվող անվտանգության պահանջները: Փաստաթղթով սահմանված է կաթի և կաթնամթերքի արտադրության, պահման, փոխադրման և իրացման գործընթացներում դրանց անվտանգության ապահովմանը ներկայացվող պահանջները: Կանոնակարգով սահմանված է նաև մանկական սննդում օգտագործվող բաղադրատարերին ներկայացվող անվտանգության պահանջները:

Փաստաթուղթը ներառում է նաև կաթնամթերքի փաթեթվածքին և մականշվածքին ներկայացվող պահանջները:

Կանոնակարգը սահմանում է նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշման հարցերը:

Կանոնակարգը ներառում է նաև Կաթի վերամշակումից ստացվող մթերքների ֆիզիկաքիմիական եւ մանրէաբանական նույնականացման ցուցանիշները, կաթի վերամշակումից ստացված մթերքի

նույնականացման օրգանոլեպտիկ ցուցանիշները, կաթի և կաթնամթերքի մեջ պոտենցիալ վտանգավոր նյութերի պարունակության թույլատրելի մակարդակները, կաթի վերամշակումից ստացված մթերքի մեջ միկրոօրգանիզմների պարունակության թույլատրելի մակարդակները, տեղ են գտել կաթնամթերքի փաթեթվածքի կամ պիտակի վրա զետեղված մականշվածքում նշված սննդային արժեքի ցուցանիշների՝ այդպիսի արտադրանքի սննդային արժեքի իրական ցուցանիշներից թույլատրելի շեղումների սահմանները:

Կաթ վերամշակող ՓՄՁ-ների գործունեության կանոնակարգման կարևոր քայլերից կարող է լինել կաթ արտադրող և կաթ վերամշակող սուբյեկտների միջև կաթի իրացման օրինակելի պայմանագրի ընդունումը (պայմանագրի նախագիծը ներկայացված է 1-ին հավելվածում):

Կաթ վերամշակող ՓՄՁ-ների գործունեությունը խթանելու և տեղական հումքի գնման պայմանագրային երաշխիքների ստեղծման նպատակով օրենսդրական փոփոխության միջոցով տեղական հումքի օգտագործման դեպքում դրա արժեքին համարժեք մասով հաշվարկել ԱԱՀ և դրան համապատասխան չափով այն հաշվանցել կաթնամթերքի իրացումից հետո: Վերջինս կխթանի տեղական հումքի օգտագործման ծավալները, կսահմանվեն կաթի մթերման երաշխավորված գներ, որը կնպաստի ինչպես կաթնային անասնապահության, այնպես էլ կաթ վերամշակող ՓՄՁ-ների զարգացմանը, արտադրության ծավալների ընդլայնմանը:

Խթանիչ միջոցառում կարող է լինել տեղական հումքի օգտագործմամբ ՓՄՁ սուբյեկտների կողմից արտադրված կաթնամթերքի համար, օրենսդրական համապատասխան փոփոխությունով, ԱԱՀ-ի նվազեցված դրույքաչափի սահմանումը (10 %):

Կաթ վերամշակող ՓՄՁ սուբյեկտների համար կաթի վերամշակման հոսքագծերի առանձին հանգույցների ներմուծումը «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն

ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ օրենքում համապատասխան լրացում անելու միջոցով ազատել ԱԱՀ-ի վճարումից[112]:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսական հումքի, մասնավորապես կաթի վերա-մշական փոքր և միջին ձեռնարկատիրության հիմնախնդիրների

[112] Макарян Р.А. Основные пути решения проблем малого и среднего бизнеса, занятого в сфере переработки молока, в Республике Армения//. Сборник материалов XXIX Международной научно-практической конференции, г. Новосибирск, 26 августа 2016г., с. 113-129

լուծումը հանդիսանում է կաթնային անասնապահության զարգացման, կաթնամթերքի արտադրության ծավալների ավելացման ու արդյունավետության բարձրացման, երկրի պարենային անվտանգության մակարդակի ապահովման կարևոր նախապայմաններից մեկը: Նշվածը պահանջում է հանրապետության գյուղատնտեսական հումքի վերամշակման, այդ թվում` կաթի վերամշակման ոլորտում փոքր ու միջին ձեռնարկատիրության վիճակի համակողմանի գնահատման արդյունքում բացահայտել ծառացած հիմնախնդիրները և մշակել առաջարկություններ դրանց լուծման ուղղությամբ:

Գյուղատնտեսական հումքի վերամշակման համատեքստում կաթի վերամշակման ոլորտի փոքր և միջին ձեռնարկատիրության հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղիների առաջադրման ուղղությամբ իրականացված հետազոտությունների հիման վրա հանգել ենք հետևյալ եզրակացությունների:

1. Գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության ոլորտի փոքր և միջին ձեռնարկատիրության արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ է ռազմավարական միջոցառումների համալիր: Փոքր և միջի ձեռնարկատիրության արդյունավետ գործունեության ապահովման համար ռազմավարական ուղղությունների կանխորոշումը նպատակահարմար է դիտարկել հեռանկարային զարգացման պրիզմայի ձևաչափի ընդգրկման տեսանկյունից (գյուղատնտեսական կոոպերատիվների համակարգ, տնտեսավարման փոքր ձևերի մասնակցություն ինտեգրացիոն միավորումներին, նորարարական մշակումների յուրացումը) և դրանց պետական ինստիտուցիոնալ աջակցություն (նորմատիվ-տնտեսական բազայի կատարելագործում, պետական ֆինանսական աջակցություն, արտադրական, շուկայական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացում և այլն):
2. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը հանդիսանում է պետական քաղաքականության հեռանկարային ուղղություններից մեկը, ինչպես ամբողջության տնտեսության, այնպես էլ գյուղատնտեսական մթերքների վերամշակման ոլորտի համար: Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը ապահովում է երկրի

սոցիալ-տնտեսական համակարգի զարգացումը, ստեղծում է մեծ թվով աշխատատեղեր, բարձրացնում է գյուղական տարածքների բնակչության սոցիալական պաշտպանվածությունը, պայմաններ է ստեղծում գյուղատնտեսության համապատասխան ճյուղի զարգացման համար, ստեղծում է մրցունակ միջավայր, ապահովում է սպառողներին նոր արտադրատեսակներով և ծառայություններով, նպաստում է խոշոր բիզնեսի ձևավորմանը և զարգացմանը:

3. Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն է տվել բացահայտել գյուղատնտեսական մթերքներ վերանշակող արդյունաբերության, մասնավորապես այդ ոլորտի ՓՄՁ-ների որոշ առանձնահատկություններ, որոնք հիմնականում հետևյալն են`

3.1. գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության համախառն արտադրանքը ունեցել է աճի միտում, այն ընթացիկ գներով դիտարկվող ժամանակահատվածում` 2010-2014թ. աճը կազմել է 77.9 %: Գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության համախառն արտադրանքի տեսակարար կշիռն ընդհանուր արդյունաբերության համախառն արտադրանքի արժեքում ունեցել է աճի միտում, այն դիտարկված 5 տարիների ընթացքում տատանվել է 33.7-38.4 %-ի սահմաններում,

3.2. գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ոլորտի ՓՄՁ-ների թիվը ունեցել է աճի միտում, այն 2014թ. կազմել է 2605 միավոր, իսկ 2010թ.` 2013 միավոր, աճը կազմել է 29.4 %: 2014թ. ՓՄՁ-ների մեջ գերակշռել են գերփոքր տնտեսավարող սուբյեկտները: Գերփոքր, փոքր և միջին տնտեսավարող սուբյեկների տեսակարար կշիռը, համապատասխանաբար կազմել է` 87.2; 10.0 և 2.8 %,

3.3. ինչպես ամբողջ արդյունաբերության, այնպես էլ մշակող արդյունաբերության մեջ գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության ՓՄՁ-ների թիվը ունեցել է որոշակի աճի միտում, մասնավորապես ընդհանուր արդյունաբերության և մշակող արդյունաբերության ՓՄՁ-ների մեջ դիտարկվող ժամանակահատվածում, համապատասխանաբար տատանվել է 3.4-3.5 և 40.0-40.13 %-ի սահմաններում,

3.4. գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության ՓՄՁ սուբյեկտների աշխատողների թիվը վերջին հրապարակված տվյալներով՝ 2014թ. կազմել է 21076, դրանց մեջ գերփոքր, փոքր և միջին տնտեսավարող սուբյեկտներում աշխատողների թիվի հարաբերակցությունը կազմել են համապատասխանաբար՝ 31.8; 29.5 և 38.7 %, այսինքն գերակշռող են միջին սուբյեկտների աշխատողների թիվը: Գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության ՓՄՁ-ների աշխատողների թիվը ընդհանուր արդյունաբերության և մշակող արդյունաբերության աշխատողների մեջ համապատասխանաբար կազմել են՝ 5.69 և 41.56 %,

3.5. գյուղատնտեսական մթերքների վերամշակող ոլորտի ՓՄՁ-ների շրջանառության ծավալը կազմել է 72328 մլն դրամ, շրջանառությունը ըստ գերփոքր, փոքր և միջին սուբյեկտների համապատասխանաբար բաշխվել է հետևյալ հարաբերակցությամբ՝ 23.34; 34.96 և 41.70 %: Այսինքն, շրջանառությունը գերակշռել է միջին ՓՄՁ սուբյեկտների մոտ: Գյուղատնտեսական մթերքների վերամշակող ՓՄՁ-ների մասնաբաժինը ընդհանուր արդյունաբերության և մշակող արդյունաբերության շրջանառության մեջ կազմել է համապատասխանաբար՝ 4.62 և 36.10 %,

3.6. գյուղատնտեսական մթերքների վերամշակող ոլորտի ՓՄՁ-ների կողմից մուծված հարկերի գումարը 2014թ. կազմել է 9796 մլն դրամ (շրջանառության 12.9 %-ը), մուծված հարկերը ըստ գերփոքր, փոքր և միջին սուբյեկտների համապատասխանաբար բաշխվել են հետևյալ հարաբերակցությամբ՝ 20.3; 29.1 և 50.6 %: Այսինքն, շրջանառությունը գերակշռել է միջին ՓՄՁ սուբյեկտների մոտ: Գյուղատնտեսական մթերքների վերամշակող ՓՄՁ-ների մասնաբաժինը ընդհանուր արդյունաբերության և մշակող արդյունաբերության մուծած հարկերի մեջ կազմել է համապատասխանաբար՝ 5.2 և 36.78 %: Շրջանառության 4.62 %-ի դիմաց մուծված հարկերը դրան գերազանցել են շուրջ 0.6 տոկոսային կետով,

3.7. հանրապետության գյուղատնտեսության մթերքների վերամշակող ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի մեջ գերակշռող մաս ունի

հացաթխման տնտեսավարող սուբյեկտները՝ շուրջ 37.0 %, այնուհետև չոր մթերքների և համեմունքների արտադրությունը՝ շուրջ 26.0 %, հրուշակեղենի և մակարոնեղենի արտադրությունը՝ 10.0 %: Կաթի վերամշակման սուբյեկտներին ավելի քան 5.0 %:

4. ՓՄՁ գործունեության և աջակցության զարգացած երկրների փորձի ուսումնասիրությունից կարելի է անել հետևյալ հետևությունները՝ բոլոր զարգացած երկրներում ՓՄՁ ոլորտը զգալի տեղ ունի երկրների համախառն ներքին արդյունքի ձևավորման և բնակչության զբաղվածության ապահովման գործում, ՓՄՁ սուբյեկտներին ինչպես մեկնարկի, այնպես էլ գործունեության փուլերում ցուցաբերվում են պետական և այլ համակողմանի աջակցություն, գոյություն ունի ՓՄՁ ձևավորման և գործունեության բարենպաստ օրենսդրական դաշտ, զարգացած երկրներում գործում են ՓՄՁ աջակցության և դրա համակարգման տարբեր (պետական և ոչ պետական կարգավիճակում գործող) մասնագիտացված կազմակերպություններ, ՓՄՁ սուբյեկտներին ձևավորման և գործունեության փուլերում աջակցությունն իրականացվում է բազմաթիվ գործիքներով՝ վարկային երաշխիքների տրամադրում, արտոնյալ վարկերի տրամադրում, փոխառությունների տրամադրում, առաջադիմական ծրագրերի սուբսիդավորում, հարկային արտոնությունների կիրառում, խորհրդատվության ծառայությունների մատուցում, կադրերի ուսուցում, տեղեկատվության մատչելիության ապահովում, հետազոտությունների իրականացում, արդիական տեխնոլոգիաների ներդրման աջակցություն, մարկեթինգի, մենեջմենտի բնագավառում աջակցություն, մրցունակության խթանում, իրացման գործընթացին աջակցություն և այլն:

5. Կաթի վերամշակման ոլորտի հիմնական բազան հանդիսանում է հանրապետության տավարաբուծության ճյուղը: Հանրապետությունում ստացված կաթի 95 %-ը ստացվում է տավարաբուծությունից: Կովերի գլխաքանակը դիտարկվող ժամանակահատվածում՝ 2011-2015թթ. ավելացել է 15.2 %-ով և կազմել 313.9 հազ. գլուխ: Շոշափելի ծավալի հումքի բազա է հանդիսանում մանր եղջերավոր անասնապահությունը, որը հիմնականում է

օգտագործվում է պանրի արտադրության համար: Ընդհանուր վերցրած կաթի արտադրությունը հանրապետության բոլոր մարզերում ունեցել է աճի միտում: 2014թ. կաթի համախառն արտադրանքը կազմել է 700.4 հազ. տոննա, որը գերազանցում է 2010թ. ցուցանիշը 16.6 %-ով: Հանրապետությունում կաթի համախառն արտադրանքը վերջին տասնամյակում էականորեն փոփոխվել է: Դիտարկված ժամանակահատվածի 2005-2008թթ. այն ունեցել է կայուն աճի միտում, իսկ 2009-2010թթ. այն ընդգծված ձևով նվազել է: 2011թ. գրեթե պահպանվել է կաթի արտադրության 2010թ. մակարդակը, իսկ 2012թ. նկատվել է կաթի արտադրության ծավալների աճ, որը լավագույն նախադրյալ է կաթնամթերքի արտադրության ծավալների և տեսականու ավելացման համար:

6. Կաթնամթերք արտադրող ՓՄՁ սուբյեկտների համար հումքի բազա է հանդիսանում նաև ներմուծվող և հանրապետությունում արտադրվող չոր կաթը: Դիտարկվող` 2010-2014թթ. նկատելիորեն ավելացել է չոր կաթի տեղական արտադրության ծավալները, այն 2014թ. 10 անգամից ավել գերազանցել է 2010թ. ծավալները և կազմել 971 տոննա: Դիտարկվող ժամանակահատվածում, որոշակի տատանումներով, ավելացել է չոր կաթի ներմուծման ծավալները, այն 2014թ. կազմել է 2435.5 տոննա, 2010թ. 1810.6 տոննայի դիմաց: Ընդհանոր վերցրած ավելացել է չոր կաթի օգտագործման ծավալները:
7. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներկայումս հանրապետությունում գոյություն ունի թվով 180 կաթնամթերք և պաղպաղակ արտադրող ընկերություններ, որից 18-ը Երևանում, իսկ 162-ը ՀՀ մարզերում: Սակայն ըստ դիտարկումների գործունեություն են իրականացնում 65 ընկերություններ, որից Երևան քաղաքում 8-ը, 57-ը` ՀՀ մարզերում: 2010-2014թթ. կաթնամթերք արտադրող գործող ընկերությունների թիվը նվազել է 7 միավորով, այն 72-ից իջել է 65-ի: Կաթնամթերք արտադրող ձեռնարկությունների կողմից արտադրված արտադրանքի ծավալը ընթացիկ գներով ունեցել է աճի միտում, այն որոշակիորեն նվազել է 2012թ., 2014թ. կազմել է 51.2 մլրդ դրամ 2010թ. 31.9 մլրդ դրամի դիմաց, նույն միտումը գոյություն է

ունեցել նաև ապրանքային արտադրանքի համար: Արտադրական անձնակազմի թիվը որոշակիորեն տատանվել է, այն դիտարկվող ժամանակահատվածի սկզբի հետ համեմատած որոշակի նվազել է և կազմել 1720 մարդ: Կաթնամթերք արտադրող մեկ ընկերության աշխատողների միջին թիվը 2014 թվականի տվյալներով կազմում է շուրջ 27 մարդ: Հետևաբար ակնհայտ է, որ կաթնամթերք վերամշակող ընկերությունների բացարձակ գերակշռող մասը համապատասխանում են ՓՄՁ չափանիշներին: Դիտարկվող ժամանակահատվածում, բացառությամբ 2012 թվականի, աշխատանքի արտադրողականությունը ունեցել է աճի միտում:

8. Համադրելի գներով գնահատված կաթնամթերքի արտադրանքի ծավալի ինդեքսը 2012-2013թթ. ունեցել է նվազման միտում, սակայն ընթացիկ գներով գնահատման դեպքում դա ակնհայտ չէ, կապված գների աճի հետ: 2010-2014 թվականներին կաթնամթերքների հիմնական տեսակների համար արտադրության ծավալները էականորեն ավելացել են: Մասնավորապես 2014 թվականին պանրի արտադրության ծավալը կազմել է 18317.3 տոննա, որը գերազանցում է 2010 թվականի ցուցանիշը 7.5 %-ով: Կաթի արտադրության ծավալը դիտարկված ժամանակահատվածում ավելացել է 28.9 %-ով: Նկատելի աճ է գրանցվել կեֆիրի և կաթնաշոռի արտադրության ուղղությամբ, այն դիտարկված ժամանակահատվածում համապատասխանաբար՝ ավելացել է 32.3 և 25.2 %-ով, իսկ թթվասերի արտադրությունն ավելացել է 25.6 %-ով: Մածունի արտադրության ծավալները 2014թ. կազմել է 4720.9 տոննա, որը դիտարկվող ժամանակահատվածի սկզբի՝ 2010թ. հետ համեմատած ունեցել է էական աճ, որը կազմել է 54.5 %: Գրեթե կրկնակի աճ է ունեցել պաղպաղակի արտադրությունը, այն 2014թ. կազմել է 6345.0 տոննա 2010թ. 3312.9 տոննայի դիմաց: Նշվածի հետ մեկտեղ որոշ կաթնամթերքների, մասնավորապես պանրիկների և կաթնասերի համար գրանցվել է արտադրության ծավալների 18-19 % կրճատում (պայմանավորված պահանջարկի որոշակի կրճատման հետ):

9. Միայն պանրի արտադրության մեջ մասնագիտացված ընկերությունների թիվը բավականին մեծ է (շուրջ 20 %): Կաթի վերամշակմամբ զբաղվող ընկերությունները հիմնականում

ունեն փոքր հզորություն (տարեկան մինչև 2000 տոննա): Կաթի վերամշակմամբ զբաղվող ընկերությունների զգալի մասը, այն է 46.2 % մասնագիտացված է պանրի արտադրության մեջ: Մինչև 2001 տոննա արտադրական հզորություն ունեցող ընկերությունների տեսակարար կշիռը կազմում է 68.0 %, իսկ 2002 տոննայից բարձր հզորություն ունեցողներինը 32.0 %: Մեծ մասնաբաժին ունեն մինչև 50 աշխատող ունեցող ընկերությունները: Վերջինիս տեսակարար կշիռը կազմում է 74.0 %, 51-99 աշխատող ունեցող կաթնամթերք արտադրող ընկերությունների մասնաբաժինը 9.0 % է, իսկ 100 աշխատակցից ավել ունեցող ընկերությունների տեսակարար կշիռը` 17.0 %: 2001 տոննայից փոքր արտադրական հզորություն ունեցող կազմակերպությունների 92.3 % ունեն մինչև 50 աշխատողներ, իսկ 7.7 %-ը 51-99 աշխատողներ: 2002 տոննայից բարձր արտադրական հզորություններ ունեցող կազմակերպությունների ընդհանուր թվի 50.0 %-ը ունեն մինչև 50 աշխատողներ, իսկ մնացած 50 %-ը 100-ից ավել աշխատողներ: 2000 տոննայից փոքր արտադրական հզորություններ ունեցող կազմակերպությունների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում փոքր ձեռնարկությունները, որոնց տարեկան հասույթը չի գերազանցում 50 միլիոն դրամը և կազմում է 63.6 %:

10. Ուսումնասիրությունները հնարավորություն են տվել բացահայտել կաթի վերամշակման փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները, որոնք հիմնականում հետևյալն են`

10.1. կաթի արտադրության կազմակերպման հիմնախնդիրները պայմանավորող գործոններն են` անասնապահության ձևավորված մասնագիտացումը, բնական կերահանդակների տարածքները, դրանց օգտագործման վիճակը, դաշտային կերարտադրության կառուցվածքը, կաթնային մթերատվությունը, կաթնային անասնապահության արտադրական գործընթացների մեքենայացման մակարդակը, շրջանառու միջոցների համալրման և կապիտալ ներդրումների համար սեփական և փոխառու միջոցների առկայությունը,

10.2. կաթի նախնական մշակման, պահպանման հիմնախնդիրները պայմանավորող գործոններն են` կաթի նախնական մշակման,

հավաքման և պահպանման սարքավորումներով ապահովվածությունը, համապատասխան մասնագետների առկայությունը,

10.3. կաթնամթերքի հումքի իրացման հիմնախնդիրները պայմանավորող գործոններն են՝ կաթի իրացման պայմանագրերի առկայությունը, գնող իրացնող կառույցների առկայությունը, դրանց գործունեության վիճակը, արտադրողների և վերամշակողների կողմից առաջարկվող կաթի գների մակարդակը,

10.4. կաթնամթերքի արտադրության գործընթացի հետ կապված հիմնախնդիրները պայմանավորող գործոններն են՝ կաթնամթերքի տեսականին, կաթնամթերքի բացթողնման գները, արտադրական հզորությունների օգտագործման մակարդակը, համախառն արտադրանքի արժեքը, արդիական տեխնոլոգիաներով հագեցվածությունը, շրջանառու միջոցների համալրման և կապիտալ ներդրումների ապահովման հնարավորությունները,

10.5. կաթնամթերքի արտադրությունում սննդամթերքի անվտանգության չափանիշներին և ստանդարտներին համապատասխանության հիմնախնդիրներն պայմանավորող գործոններն են՝ կաթնամթերքի կանոնակարգերի, սննդամթերքի անվտանգության չափանիշների կիրառման վիճակը, մասնավորապես՝ ԻՍՕ 22000 ստանդարտների և HACCP համակարգի ներդրվածությունը, կամ ընթացքը, լաբորատոր կարողությունների վիճակը,

10.6. կաթնամթերքի իրացման հետ կապված հիմնախնդիրները պայմանավորող գործոններն են՝ ապրանքային արտադրանքի ծավալը ըստ արտադրատեսակների, մարկեթինգային կառույցների առկայությունը, իրացման ուղղություններն ու աշխարհագրությունը, սպառողների հետ պայմանագրային հարաբերությունների վիճակը,

10.7. կաթնամթերքի արտադրության հարաբերությունները կարգավորող իրավա-օրենսդրական դաշտի համալրման և կատարելագործման հիմնախնդիրները պայմանավորող գործոններն են՝ կաթնամթերքի հումք արտադրող և վերամշակող ընկերությունների միջև օրինակելի պայմանագրի

առկայությունը, կաթնամթերքի հումքի երաշխավորված գների օրենսդրական հիմքերի ստեղծումը:

11. Աշխատանքի շրջանակներում կատարված էկոնոմետրիկ հաշվարկներով, մասնավորապես ստացել ենք հետևյալ արդյունքները: Հանրապետության համար կաթի մթերման գնի և կաթի համախառն արտադրանքի միջև կապը միջին է՝ թույլին մոտ, այն կազմում է 0.378, կաթի համախառն արտադրանքի ավելացումը 14.3 %-ով պայմանավորված է կաթի մթերման գնի ավելացումով: Արտադրողների կողմից կաթի իրացման գնի և կաթի իրացման միջին մանրածախ գնի միջև կապը սերտ է՝ միջինին մոտ, կոռելացիայի գործակիցը կազմել է 0.775, կաթի իրացման միջին մանրածախ գնի փոփոխությունը 60.0 %-ով պայմանավորված է կաթի մթերման գնի փոփոխությամբ: Կաթնամթերքի արտադրության (վերահաշվարկված կաթի) ծավալների վրա արտադրողների կողմից կաթի իրացման գնի ազդեցության կոռելացիայի գործակցը կազմել է 0.659, այսինքն գոյություն ունեցող կապը միջին է՝ ուժեղին մոտ, կաթնամթերքի արտադրության ծավալի վերահաշվարկված կաթի ավելացումը 43.4 %-ով պայմանավորված է կաթի մթերման գնի ավելացումով: Զույգային կոռելացիոն գործակցի (0.506) ստացված արժեքը ցույց է տալիս, որ հանրապետության համար կաթի համախառն արտադրանքի և կաթնամթերքի արտադրության (վերահաշվարկված կաթի) միջև կապը միջին է, կաթնամթերքի արտադրության (վերահաշվարկված կաթի) փոփոխությունը 25.6 %-ով պայմանավորված է կաթի համախառն արտադրանքի փոփոխությունով:

12. Կաթնամթերքի արտադրության ծավալների վրա ազդող մի շարք գործոնների համատեղ ազդեցությունը գնահատելու համար համակարգչային ծրագրի միջոցով կատարված ռեգրեսիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ կովերի գլխաքանակի 1000 գլխով ավելացումը հանգեցնում է 2.165 հազ. տոննա կաթնամթերքի (վերահաշվարկված կաթի ավելացման), իսկ կաթի համախառն արտադրանքի 1000 տոննայով ավելացումը հանգեցնում է կաթնամթերքի (վերահաշվարկված կաթի) 74.0 տոննայով ավելացման, ինչ վերաբերվում է կաթի մթերման գնին,

ապա նրա 1 դրամով ավելացումը հանգեցնում է կաթնամթերքի (վերահաշվարկված կաթի) 5.827 հազ. տոննայով ավելացմանը, իսկ կաթնամթերքի գների ինդեքսի 1 %-ով ավելացումը հանգեցնում է կաթնամթերքի (վերահաշվարկված կաթի) արտադրության ծավալների 5.545 հազ.տոննայով նվազեցմանը:

13. Կաթի վերամշակող փոքր և միջին ձեռնարատիրության ոլորտի զարգացման և արտադրության արդյունավետության կարևորագույն նախապայմաններից է հումքի՝ կաթի սահմանված ժամկետում, որակական պահանջվող չափանիշներով, երաշխավորված գներով մատակարարումը: Վերջինս հնարավոր է ապահովել գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության և կաթ արտադրող ու կաթ վերամշակող տնտեսավարողների հետ փոխշահավետ պայմանագրային հարաբերությունների հաստատման միջոցով: Կազմակերպական առումով տարբերակ է դիտարկվում կոոպերատիվի ստեղծումը, որի անդամներ կլինեն կաթ արտադրող տնտեսավարողները (գյուղացիական տնտեսությունները) և տվյալ գյուղական համայնքում կամ համայնքից դուրս գործող կաթ վերամշակող փոքր ու միջին ձեռնարկությունը: Աշխատանքում տրվել է վերջինիս կազմակերպական սխեման: Յաջորդ տարբերակը երբ խթանվում է կաթ արտադրող տնտեսավարող սուբյեկտների (գյուղացիական տնտեսությունների) և կաթ վերամշակող ՓՄՁ-ների միջև պայմանագրային հարաբերությունները, որի կազմակերպական սխեման նույնպես ներկայացված է աշխատանքում: Այս տարբերակում կարևոր է համարվում փոխշահավետ հարաբերությությունների հաստատումը, որի կարևոր նախապայմաններից հիմնավորված պայմանագրերի օրինակելի ձևերի կիրառումը:

14. Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն է տվել առաջադրել կաթի վերամշակման ոլորտում կոոպերացիայի և պայմանագրային հարաբերությունների, ինչպես նաև կաթ արտադրողների և վերամշակողների միջև պայմանագրային հարաբերությունների խթանման քայլերը: **Կաթ արտադրողների և վերամշակողների կոոպերացիայի խթանման ուղղությամբ**՝ խոր-

իրդատվական կառույցների և համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների կողմից խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում, կոոպերացիայի առավելությունների ուղղությամբ իրազեկվածության մակարդակի բարձրացում, աջակցության ծրագրերի իրականացում, մասնավորապես՝ մատչելի պայմաններով կերարտադրությունում օգտագործվող մեքենաների, անասնաբուծությունում օգտագործվող սարքավորումների, կաթի հավաքման ագրեգատների, կաթի վերամշակման սարքավորումների մատակարարում, ՀՀ պետական բյուջեում և վարկային ծրագրերում կոոպերատիվների խթանման համապատասխանաբար ծրագրերի և բաղադրիչների նախատեսում, կոոպերատիվներին (կաթ արտադրողներին և վերամշակողների) մատչելի լիզինգային մեխանիզմներով տեխնիկական միջոցների տրամադրում, լիզինգի կանխավճարի սուբսիդավորում, գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրարը, մասնավորապես՝ շուկայականից ցածր գներով սերմերի, նյութական ռեսուրսների մատակարարման, վարկերի մատչելիության բարձրացման ծրագրերը առաջնահերթ կոոպերատիվներին ուղղորդումը: **Կաթ արտադրողների և վերամշակողների միջև պայմանագրային հարաբերությունների խթան ուղղությամբ՝** պայմանագրային հարաբերությունների առկայությունը ելակետ ունենալ մատչելի վարկավորման, լիզինգային և այլ աջակցության ծրագրերից օգտվելու համար, պայմանագրերում կաթ արտադրողների և վերամշակողների շահերի հաշվառմամբ պարտավորություններ և իրավունքներ սահմանող դրույթների ամրագրում, վերամշակողների կողմից կաթ արտադրողներին խորհրդատվության տրամադրում, որպես կանխավճար համակցված կերի, բուժանյութեր և անհրաժեշտ այլ ռեսուրսների հատկացում:

15. Մշակվել և առաջարկվել է **կաթի գնման** պայմանագրի օրինակելի ձև և քայլեր են ձեռնարկվում ՀՀ կառավարության կողմից դրա ընդունման և ներդրման ուղղությամբ: Օրինակելի պայմանագիրը ներառում է հետևյալ կառուցվածքային մասերը՝

պայմանգրի առարկան, կողմերի իրավունքները և պարտականությունները, ապրանքի գինը և վճարման կարգը, կողմերի պատասխանատվությունը, անհաղթահարելի ուժի ազդեցությունը և եզրափակիչ դրույթներ: Օրինակելի պայմանագրով սահմանվել է նաև կաթի նորմատիվ պահանջները և թույլատրելի շեղումները, ինչպես նաև կաթի դասակարգման չափանիշները:

16. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ռազմավարության գլխավոր նպատակը պետք է լինի ներքին և միջազգային շուկաներում մրցունակ սուբյեկտների գործունեության ապահովումը, ինչպես նաև հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի խթանման համար հիմնական կարևոր սկզբունքների կանխորոշումը, բիզնեսի գործունեության համար մրցունակ միջավայր ապահովումը՝ կազմակերպությունների զարգացման և ձեռնարկատիրական գիտելիքի տարածման, ֆինանսական միջոցների հասանելիության, հարկային համակարգի պարզեցման և մասնավոր հատվածի հետ երկխոսության մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև նորարարությունների և կայուն զարգացման խթանման միջոցով:

17. Ելակետ ունենալով ՓՄՁ զարգացման ռազմավարության դրույթները և կատարված ուսումնասիրությունները ներկայացրել ենք կաթի վերամշակման ոլորտի փոքր ու միջին ձեռնարկատիրության հիմնախնդիրների լուծման քաղաքականության հիմնական ուղղությունները: Վերջինս դիտարկվել է՝ կաթի արտադրության կազմակերպման, կաթի նախնական մշակման, պահպանման, կաթնամթերքի հումքի իրացման, կաթնամթերքի արտադրության գործընթացի հետ կապված, կաթնամթերքի արտադրությունում սննդամթերքի անվտանգության չափանիշներին և ստանդարտներին համապատասխանության ապահովման, կաթնամթերքի իրացման, կաթնամթերքի արտադրության հարաբերությունները կարգավորող իրավա-օրենսդրական դաշտի համալրման և կատարելագործման ուղղությամբ: Մասնավորապես՝

17.1. կաթի նախնական մշակման և պահպանման համար հանրապետության գյուղական համայնքներում կիրառման և սպասարկման առումով նպատակահարմար է համարվում բացվող սառեցման ագրեգատները: Կարող է կիրառվել ռուսական արտադրության, սակայն առավել նպատակահարմար է գտնվում ֆրանսիական արտադրության սառեցման ագրեգատները, որոնց տեխնիկական պարամետրերը լայն միջակայքում են, նախընտրելի է համարվում նաև գերմանական և իտալական սարքավորումները,

17.2. կաթնամթերքի հումքի իրացման համար առաջարկվել է կաթի հավաքման և իրացման կոոպերատիվների ձևավորման խթանումը: Վերջինս հնարավոր է համարվում երկու տարբերակով, երբ կոոպերատիվի անդամ հանդիսանում են միայն կաթ արտադրող գյուղացիական տնտեսությունները և մյուսը երբ կոոպերատիվի անդամ հանդիսանում են կաթ արտադրող տնտեսությունները և կաթ վերամշակող փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտը,

17.3. հաշվի առնելով կաթի վերամշակող ՓՄՁ ների սննդամթերքի անվտանգության չափանիշների ներդրման ներկա վիճակը և մասնագիտական կարողությունները անհրաժեշտ է համարվում այդ կազմակերպություններին տրամադրել տեխնիկական օժանդակություն սննդի անվտանգության համակարգերի ներդրման ուղղությամբ, մասնավորապես ISO 22000, HACCP, ներառյալ՝ համակարգերի ներդրման հետ կապված ծախսեր (հիմնականում համապատասխան սարքերի ձեռքբերում, կադրերի վերապատրաստում և սերտիֆիկացման հետ կապված ծախսեր),

17.4. առաջարկվել է հանրապետությունում գործող կաթ վերամշակող փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների մարկեթինգային ծառայության կազմակերպական նախընտրելի կառուցվածք,

17.5. կաթ վերամշակող ՓՄՁ-ների գործունեությունը խթանելու և տեղական հումքի գնման պայմանագրային երաշխիքների ստեղծման նպատակով օրենսդրական փոփոխության միջոցով տեղական հումքի օգտագործման դեպքում դրա արժեքին համարժեք մասով հաշվարկել ԱԱՀ և դրան համապատասխան

չափով այն հաշվանցել կաթնամթերքի իրացումից հետո: Վերջինս կխթանի տեղական հումքի օգտագործման ծավալները, կսահմանվեն կաթի մթերման երաշխավորված գներ, որը կնպաստի ինչպես կաթնային անասնապահության, այնպես էլ կաթ վերամշակող ՓՄՁ-ների զարգացմանը, արտադրության ծավալների ընդլայնմանը:

Վերը նշված և աշխատանքում արված եզրակացությունների և առաջարկությունների կիրառումը կնպաստի գյուղատնտեսական հումքի, մասնավորապես կաթի վերամշակման ՓՄՁ հիմնախնդիրների լուծմանը և արդյունքում երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ


1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք: Հոդված 2: Երևան, 28 հուլիսի 1998թ. ՀՕ-239
2. <<Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին>> ՀՀ օրենք: 28 դեկտեմբերի, 2000թ., ՀՕ 121
3. <<Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին>> ՀՀ օրենք: 21 դեկտեմբերի, 2015թ.,ՀՕ 190
4. <<Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթների մասին>> 2000թ. օգոստոսի 3-ի ՀՀ կառավարության նիստի N32 արձանագրություն
5. ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 5-ի <<Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին>> 2015թ.

ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին>> N 217-Ն որոշում
6. ՀՀ կառավարության 2015թ. հոկտեմբերի 1-ի <<Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018թթ. ռազմավարությանը հավանություն տալու մասին>> N44 արձանագրային որոշում
7. ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի <<ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունը և ՀՀ ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության կատարում ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին>> N 1476-Ն որոշում
8. ՀՀ կառավարության 2015թ. հոկտեմբերի 15-ի <<Հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2015թ. հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին>> N1189-Ն որոշում
9. ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի <<Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին>> N 1925-Ն որոշում
10. Հաշվետվություն: Փոքր և միջին ձեռնարկությունները բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ.: Երևան 2013, 22 էջ
11. Վերջնական հաշվետվություն: Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր 2 <<Կաթի, տավարի եւ ոչխարի մսի վրա հիմնված սննդի բիզնեսով զբաղվողների ուսումնասիրություն>>, 76 էջ
12. Гражданский кодекс Российской Федерации. Режим доступа: http://ivo. garant.ru/SESSION/ PILOT/main.htm, 2013
13. О развитии малого и средного предпринимательства в Российской Федерации [Текст]: Федер. закон от 24 июля 2007г. N209-ФЗ//Собр. законодательства Рос. Федерации.-2007.- N31.- (с. 4006)
14. Рекомендация «О Методологии расчета совместных прогнозов спроса и предложения государств-членов Таможенного союза и Единого экономического пространства по основным видам сельскохозяйственной продукции и продоволствия» «24» декабря 2014г. N22, г.Москва (Приложение N4)

15. EU 2008: Think Small First, A Small Business Act for Europe, Brussels 2008. See http://eur-ex.europe.eu/legalcontent/EN/TXT/PDF/?uri=CELEX:52008DC0394&from=EN
16. Eu 2011: Review of the Small Business Act for Europe, Brussel 2011. See http://eur-lex.europe.eu/legalcontent/EN/TXT/PDF/?uri=CELEX:52011DC0078&from=EN

**ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

17. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ. հոնվար-դեկտեմբերին: Տեղեկատվական ամսական զեկույց: ՀՀ ԱՎԾ: Երևան 2011թ.
18. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հոնվար-դեկտեմբերին: Տեղեկատվական ամսական զեկույց: ՀՀ ԱՎԾ: Երևան 2012թ.
19. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2012թ. հոնվար-դեկտեմբերին: Տեղեկատվական ամսական զեկույց: ՀՀ ԱՎԾ: Երևան 2013թ.
20. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հոնվար-դեկտեմբերին: Տեղեկատվական ամսական զեկույց: ՀՀ ԱՎԾ: Երևան 2014թ.
21. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2014թթ. հոնվար-դեկտեմբերին: Տեղեկատվական ամսական զեկույց: ՀՀ ԱՎԾ: Երևան 2015թթ.
22. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ հոնվար-դեկտեմբերին: Տեղեկատվական ամսական զեկույց: ՀՀ ԱՎԾ: Երևան 2016թ.
23. Պարենային ապահովություն և աղքատություն 2010թ. հունվար-դեկտեմբերին, 2015թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ, Երևան 2011թ., 2016թ.
24. Պարենային ապահովություն և աղքատություն: 2014թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ, Երևան 2015թ.
25. Պարենային ապահովությունը և աղքատությունը 2015թ. հունվար-հունիսին: ՀՀ ԱՎԾ: Երևան 2015թ.
26. Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2000-2005թթ.: Վիճակագրական ժողովածու: ՀՀ ԱՎԾ: Երևան 2006թ.
27. Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2006-2010թթ.: Վիճակագրական ժողովածու: ՀՀ ԱՎԾ: Երևան 2011թ.
28. 2015թ. բերքի տակ կատարված գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի համատարած հաշվառման հանրագումարները: Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, 2015թ.

29. Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2014թ., ՀՀ ԱՎԾ: Երևան 2015թ.
30. Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2015թ., ՀՀ ԱՎԾ: Երևան 2016թ.
31. Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2010 հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ: Երևան 2011թ.
32. Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2011թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ: Երևան 2012թ.
33. Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2012թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ: Երևան 2013թ.
34. Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2013թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ: Երևան 2014թ.
35. Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2014թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ: Երևան 2015թ.
36. Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2015թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ: Երևան 2016թ.

## ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

37. Ալեքսանյան Ի. <<Կաթի իրացման բնագավառում ստեղծված վիճակն ու գնագոյացման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում>>: Սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր) գիրք 2 (Պատ. խմբագիր` Վ.Լ. Հարությունյան), ՀՀ ԳԱԱ <<Գիտություն>> հրատարակչություն, Երևան, 2011թ., էջ 186-182

38. Ավետիսյան Ս.Ս. <<Հայաստանի Հանրապետության ագրարային շուկայի ձևավորման հիմնախնդիրները անցումային տնտեսության պայմաններում>>, <<Վահան>>, Երևան, 2002թ., 260 էջ
39. Ավետիսյան Ս.Ս. -<<Հայաստանի գյուղատնտեսությունը>> Երևան: <<Լիմուշ>> հրատարակչություն, 2008.- 71 էջ
40. Ավետիսյան Ս.Ս. -<<Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը>>: Երևան: <<Լիմուշ>> հրատարակչություն, 2010թ., 237 էջ
41. Աբրահամյան Ս.Վ. <<Կաթի արտադրության արդյունավետության բարձրացման խնդիրները և դրանց լուծման ուղիները (ՀՀ Շիրակի մարզի օրինակով)>>: Ը.00.02-<<Տնտեսության, նրա ոլորտների տնտեսություն և կառավարում>> մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածու գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր: Երևան 2016, էջ 18
42. Աբրահամյան Վ.Ս. ՀՀ ագրարային ոլորտի փոքր և միջին ձեռնարկատիրությյան զարգացման հիմնախնդիրները (Արմավիրի մարզի օրինակով): Տնտեսագիտութ. թեկնածուի գիտակ. աստիճանի համրասեղմագիր` Ը.00.02/ Երևան, 2013.- 28 էջ
43. Բայադյան Ա.Հ. Ֆինանսավիճակագրական բացատրական բառարան.- Երևան.: Լիմուշ, 2008թ., էջ 254
44. Գրիգորյան Կ.Ա. Պարենային անվտանգության ապահովման և աղքատության նվազեցման խնդիրների լուծման ուղիները ՀՀ-ում/ Եր.:ՀՊԱՀ, 2011.-250 էջ
45. Դավթյան Գ., Մարգարյան Լ. և ուրիշներ Գյուղատնտեսական արտադրության կազմակերպումը: Ուսումնական ձեռնարկ: Երևան, ՀԳԱ, 2004.- 430 էջ
46. Ծպնեցյան Հ.Ս. <<Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների ձևավորման հիմնախնդիրներն անցումային տնտեսության պայմաններում>>, Երևան: Հեղինակային հրապարակություն, 2005.- 266 էջ
47. Հակոբյան Լ.Լ., Ճեպեճյան Շ.Ա. Գյուղատնտեսության էկոնոմիկա: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան: ՀՊԱՀ, 2012.- 268 էջ
48. Հովհաննիսյան Հ.Ա. Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում ֆինանսական ճգնաժամի

պայմաններում. տնտեսագիտութ. թեկնածուի գիտակ. աստիճանի համրասեղմագիր՝ Ը.00.02/ Երևան, 2012.- 25 էջ

49. Ձեռնարկատիրության գործունեության կազմակերպում: Ուսումնական ձեռնարկ /ՀՊՏՀ, Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոն: Ընդհ. դեկ. և խմբ.՝ Մ. Մելքումյան.-Եր.; ՀԱՆԳԱԿ< 2014. -512 էջ

50. Ղազարյան Ս., Սահակյան Կ. <<Նոր պահանջներ մարկեթինգային գործունեությանը ՀՀ ագրոպարենային համակարգում>>: Սոցիալ -տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (Գիտաոդովի նյութեր). Երևան: <<Էդիթ Պրինտ>>, 2007. էջ 268-272

51. Մակարյան Ռ.Ա. -Կաթնամթերքի արտադրության և ՓՄՁ զարգացման վիճակը Հայաստանի Հանրապետությունում//: Ագրոգիտություն 1-2, 2012, էջ 37-44

52. Ռ.Ա. Մակարյան, Ա.Մ. Բաղդասարյան-Փոքր և միջին ձեռնարկատիրության ռիսկայնության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում//: Ագրոգիտություն 3-4, 2012թ. էջ 148-155

53. Մակարյան Ռ.Ա. -Հայաստանի հանրապետությունյում կաթի վերամշակման փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները//: Ագրոգիտություն 5-6, 2016, էջ 129-135

54. Մակարյան Ռ.Ա. <<Հայաստանի հանրապետությունում կաթի վերամշակման ոլորտի գործունեության վրա տարբեր գործոնների ազդեցության չափի գնահատումը>>//:Ագրոգիտություն 5-6, 2016, էջ 136-141

55. Մանասերյան Ն. <<Ագրարային հարցը երեկ և այսօր>>, Երևան, Տնտեսագետ, 2005թ. 266 էջ

56. Մարմարյան Յու.Գ., Ներսիսյան Շ.Ս., Աբրահամյան Վ.Ա. <<Անասնաբուծության հիմունքներ>>, Երևան, Աստղիկ, 2001.- 436 էջ

57. Մադոյան Հ. <<Կաթի և կաթնամթերքների արտադրության հաշվառումը և վերահսկողությունը>> Երևան, Հայաստան Հրատարակչություն, 1971.-195 էջ

58. Մամիկոնյան Հ.Մ., Բաբայան Է.Ա. ՀՀ սննդարդյունաբերության հումքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնահարցերը:-Եր: Դանամա, 2004.-74 էջ
59. Մամիկոնյան Հ.Մ. Սննդարդյունաբերության էկոնոմիկա (դասախոսությունների շարք).-Եր.: ՀԱԱՀ, 2013. – 300 էջ
60. <<Մենեջմենթ>>, պրոֆ. Յու. Մ. Սուվարյանի ընդհանուր ղեկավարությամբ և խմբագրությամբ (երկրորդ՝ լրացված, բարեփոխված հրատարակություն),-Երևան: Տնտեսագետ, 2002թ., 560 էջ
61. Միքայելյան Մ.- <<Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում>>, Երևան, Նահապետ, 2005թ. 253 էջ
62. Ոսկանյան Ա.Ե. - <<ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարություն>>, (ազգային փորձագետների խմբի ղեկավար, մասնագիտական խմբագիր) Երևան, 2002թ., 158 էջ
63. Ջավադյան Հ.Ս. Գյուղատնտեսական կոոպերացման հիմնական դրույթները, 100 և մեկ հարց ու պատասխան: Ուսումնական ձեռնարկ: ՀՊԱՀ, 2011, 97 էջ
64. Ուռուտյան Վ., Ավետիսյան Ս. Գյուղատնտեսական կոոպերատիվներ: Երևան: Ասողիկ, 2011.- 84 էջ
65. Аграрная политика /А.П. Зинченко, В.И. Назаренко, В.В. Шайкин и др.; Под. Ред. А.П. Зинченко.-М.: КолосС, 2004., 304 с.
66. Агеев А.И. Предпринимательство: проблемы собственности и культуры/ А.И Агеев.-Москва: Наука, 1991. -112 с.
67. Большой экономический словар [Текст]; под ред. А.Н. Азрилияна.-7-е изд. доп.-Москва: Инститвут новой экономики, 2008. -1472 с.
68. Бусыгин А.В. Предпринимательство: учебник / А.В. Бусыгин.-3-е изд.- Москва: Изд-во “Дело”., 2003. -644 с.
69. Блинов А. Малыи бизнес в Росси: вчера, сегодня, завтра/ учеб.-метод. пособие/ А. Блинов, Н. Голенко. –Краснодар, 2009. -460с.
70. Гурьянов П.А. Критерии определения размеров малого и средного бизнеса/П.А.Гуряьнов //Экономика, предпринимательство и право. 2011.-N10 (10). с.3-12
71. Европа. Специальный выпуск. 2004. –N8.- с. 11

72. Илина З.М., Мирочицкая И.В. Ринки сельскохозяйственного сыря и продовольствия: Учеб. пособие по изуч. Курса “Сельскохозяйственные рынки”. Минск.: БГЭУ, 2000. -226 с.
73. Казарян С.Г. Эффективность интенсификации животноводства в условиях научно - технического процесса – Ер.: Айастан, 1985.- 302 с.
74. Карлоф Б. Деловая стратегия: Концепция. Содержание. Символы: Пер. с англ. М.: Экономика, 1991. -272 с.
75. Коваленко, Н.Я. Экономика сельского хозяйства. – М.: ЮрКнига. – 2004. – 384с.
76. Макарян Р.А. -К вопросу о государственном содействии малому и среднему предпринимательству в Армении//. ИЗВЕСТИЯ Государственного аграрного университета Армении, N4, 2007, с. 169-174
77. Маркарян Л.А., Р.А. Макаряан-Сущность и роль малого и среднего предпринимательства в экономической ситеме Республики Армения//. Известия аграрной науки. Том 6, Ном. 3, 2008. с.98-100
78. Макарян Р.А. Развитие малого и среднего предпринимательства в сфере переработки молока в Республике Армения посредством стимулирования коопрации и договорных отношении//. Сборник материалов XXXII Международной научно-практической конференции, г. Новосибирск, 22 июля, 22 августа 2016г., с. 6-16
79. Макарян Р.А. Основные пути решения проблем малого и среднего бизнеса, занятого в сфере переработки молока, в Республике Армения//. Сборник материалов XXIX Международной научно-практической конференции, г. Новосибирск, 26 августа 2016г., с. 113-129
80. Литау Е.Я. Среднии бизнес: проблемы определения и предпосылки возникновения.-Режим доступа://http://elibrary.finec.ru/materials_files/380034741.pdf
81. Малый бизнес В Росси. Аналитический сборник.-Москва: КОНСШЩЭКО, 1998.-130 с.
82. Основы предпринимательской деятельности в Российской Федерации: монография / Т.В. Епифанова, Т.А. Скворцова.-Ростов-на-Дону: Изд-во Южного федерального университета, 2011. -280 с.
83. Малыш М.Н. Аграрная экономика: Учебник/2-е изд., Санкт-П.: «Лань», 2002.-688 с.
84. Разумов И. Мелкие фирмы в США: Экономика и управление:/ И. Разумов.-Москва: Наука, 1989.- с. 87

85. Райзберг Б.А. Современный экономический словарь/ Б.А. Райзберг, Л.Ш. Лозовский, Е.Б. Стародубцева.-6-е изд., перераб. и доп.-Москва: ИНФРА-М, 2011.-512 с.
86. Ричард Л. Колз, Джозеф Н. Ул. -Маркетинг сельскохозяйственной продукции. М., "Колос" 2000, 512 с.
87. Смит А. Исследование о природе и причинах богатства народов. М.: Эконов, 1993. Т.-1-2. М., -с. 25
88. Серова Е.В. -Аграрная экономика: Учебник для студентов экономических вузов, факультетов и специальностей. - М.: ГУ ВШЭ, 1999, 480 с.
89. Сей Ж.Б. Трактат политической экономии. М.: Солдатенков, 1986.- с. 58
90. Синтез понятий "бизнес" и "предпринимательство" Режим доступа://http://do.gendocs.ru/docs/index-102093.html.
91. Статистика: учеб./И.И. Елисеева и др. под.ред. И.И. Елисеевой.-М.:Проспект, 2010, -448 с.
92. Ткач А. В. -Сельскохозяйственная кооперация: Учебное пособие. М.: Издательско-торговая корпорация "Дашков и Ко" 2002, 304 с.
93. Цпнецян Г.С. -Развитие малого и среднего предпринимательства как один из важнейщих компонентов дальнейшего совершенствования инфраструктуры аграрного сектора Республики Армения. Известия аграрной науки. Тбилиси, 2005, том 3, N 1 с. 141-144
94. Шахматов Ф.И. Государственная поддержка предпринимательства в россии/ Ф.И. Шахматова, В.С. Нечипренко. – Москва, 1997. -265 с.
95. Шумпетер Й. Теория экономического развития. М.: Прогресс, 1982. -с. 169
96. Хоскинг А.А. Курс предпринимательства/ А. Хоскинг.-Москва: Международные отношения, 1993.-350 с.
97. Экономика в Сингапуре: значение и роль малого предпринимательства [Электронный ресурс], [2011] – Режим доступа: http://www. kredit-business.ru/foreignbusiness/72-jekonomika-v-singapure-znachenie-i-rol-malogo.html
98. Яковлев Б.И., Яковлев В.Б. Организация производства и предпринимательство в АПК.-М.: КолосС, 2004. 424 с.
99. Velu H.A.F. The Development Process of the Personally Managed Enterprise/H.A.F. Velu// European Foundation for Management Development's, 10th Seminar on Small Business, Nottingham Business School.-Nottingham, 1980.-p.1-21

## ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ


100. http://www. minagro.am
101. http://www.mineconomy.am
102. http://www.moluch.ru/archive/39/4640/
103. http://www.acgrf.ru/opit/
104. https://www.cba.am/
105. www. progress-st.ru/prod/tanki_ahladiteli_milika/

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**Հավելված 1**

/օրինակելի ձև/

**Կարի գնման**
**պայմանագիր N**

---------------------------- ----------------------------
(կնքման վայրը) (օր, ամիս, տարի)

«...........» -ը, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ------------ -ի, որը գործում է/ հանդես է գալիս ----------------------------------------------------------------------------------------------------------------

(կազմակերպության անվանումը /անձի անուն ազգանունը), (կանոնադրություն /լիազորագիր/իր անունից) հիման վրա, մի կողմից, և «...........»-ը, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս ------------ -ի, որը գործում է/հանդես է գալիս ---------------------------------------------------------------------------------- (կազմակերպության անվանումը /անձի անուն ազգանունը), (կանոնադրություն /լիազորագիր/ իր անունից) հիման վրա մյուս կողմից, Գնորդը և Վաճառողը միասին այսուհետ՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

## 1. Պայմանագրի առարկան

1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, Գնորդին, որպես սեփականություն հանձնել իր -------------------------------------------------------------------

(գյուղացիական, ֆերմերային և այլն)

տնտեսությունում արտադրված կովի կաթը (այսուհետ՝ Կաթ), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այն և վճարել դրա դիմաց:

2. Վաճառողը Գնորդին է հանձնում սույն պայմանագրով և հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանող Կաթ:

3. Գնորդը Վաճառողից Կաթը ընդունում է փորձարկման տվյալների հիման վրա:

4. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող է ժամանակավորապես դադարեցվել Կաթի հանձնումը:

## 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

5. Վաճառողը իրավունք ունի

1) Գնորդին վաճառել, իսկ Գնորդը պարտավորվում է, սույն պայմանագրի գործողության ընթացքում Վաճառողից տարեկան գնել -------------------------- լիտր Կաթ սույն պայմանագրի՝ հավելվածով նախատեսված պահանջներով, կարգով և ժամկետներում.

2) Կաթի փորձարկման տվյալների հետ չհամաձայնվելու դեպքում՝ պահանջել Գնորդից կատարելու կրկնակի փորձարկում՝ Գնորդի կամ անկախ հավատարմագրված լաբորատորիայում և ստացված տվյալները համարել վերջնական.

3) Վաճառված Կաթի արժեքի վճարումների պարբերաբար ուշացման, անհիմն ձգձգման դեպքում հրաժարվել Կաթի մատակարարումից:

6. Վաճառողը պարտավոր է՝

1) սույն պայմանագրի գործողության ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, Գնորդին ներկայացնել համապատասխան ուղեկցող փաստաթղթեր.

2) կենդանիների հիվանդության և դեղորայքային բուժման դեպքում, նույն օրը տեղեկացնել Գնորդին և անմիջապես դադարեցնել Կաթի վաճառքը: Բուժումը կամ դեղորայքի ընդունումն ավարտելուց հետո ներկայացնել համապատասխան անասնաբուժական տեղեկանք՝ Կաթի վաճառքը վերսկսելու նպատակով, որում պետք է նշված լինի Կաթի մթերման պիտանելիությունը.

3) Կաթը Գնորդին հանձնել ամեն օր՝ օրական մեկ կամ երկու անգամ՝ փոխադարձ համաձայնեցված գրաֆիկով.

4) անասնագոմում կամ ֆերմայում պահպանել զոո և սանիտարահիգիենիկ կանոնները,

5) առավոտյան և երեկոյան կթից ստացված կաթերը չխառնել և Գնորդին հանձնել առանձին տարաներով.

6) չխոչընդոտել Գնորդի կողմից Վաճառողի անասնագոմում կամ ֆերմայում սանիտարահիգիենիկ վիճակին ծանոթանալու գործընթացին:

7. Գնորդն իրավունք ունի՝

1) հրաժարվել Կաթի ընդունումից, եթե այն չի համապատասխանում սույն պայմանագրին կից հավելվածի պահանջներին.

2) հրաժարվել Կաթի ընդունումից, եթե Վաճառողը չի կատարում սույն պայմանագրով սահմանված իր պարտավորությունները.

3) արտադրական և կոնյունկտուրային անհրաժեշտությունից ելնելով, որոշակի ժամանակահատվածով դադարեցնել Կաթի ընդունումը՝ այդ մասին առնվազն 7 օր առաջ տեղյակ պահելով Վաճառողին.

4) Վաճառողից պահանջել սույն պայմանագրի պահանջների պատշաճ կատարում:

8. Գնորդը պարտավոր է՝

1) ընդունել Վաճառողից արտադրանքը՝ -----------------------------------------------------------
(վերջինիս գտնվելու վայրում կամ գնորդի գնման տեղամասում)

պահպանելով սանիտարահիգիենիկ նորմերը, սննդի արտադրությունում օգտագործման համար թույլատրելի տարաներով (ֆլյագաներ, ցիստեռններ), որոնք դրսից և ներսից պետք է լինեն մաքուր.

2) ստուգել Կաթի որակը և քանակը, հայտնաբերված անհամապատասխանությունների կամ թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3) սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում հաշվարկել և վճարել վաճառված Կաթի դիմաց,

4) վաճառված Կաթի որակը լրացուցիչ պայմաններին համապատասխանությունը որոշելու համար կատարել Կաթի գնի վերահաշվարկ՝ համաձայն 10-րդ կետի,

5) Վաճառողի պահանջով կատարել Կաթի կրկնակի փորձարկում և ընդունել այն որպես վերջնական:

### 3. Ապրանքի գինը և վճարման կարգը

9. Սույն պայմանագրով մատակարարվող առաջին տեսակի Կաթի բազիսային գինը սահմանվում է Գնորդի կողմից տվյալ ժամանակահատվածի համար, որի մասին Գնորդը ծանուցում է Վաճառողին առնվազն 5 օր առաջ, Կաթի բազիսային նվազագույն գինը -------------------------- դրամ է:

10. Մատակարարված Կաթի գինը որոշվում է հետևյալ վերահաշվարկով՝

1) բարձր տեսակի Կաթի համար Կաթի բազիսային գինն ավելանում, իսկ երկրորդ տեսակի Կաթի համար Կաթի բազիսային գինը նվազում է 10 %-ով.

2) Կաթի բազիսային 3,6 % յուղայնությունից յուրաքանչյուր 0.1% շեղման համար Կաթի գնին ավելացվում կամ պակասեցվում է 2.7 %.

3) Կաթի յուղայնության համար 12-րդ կետով գնի ավելացումը հաշվարկվում է յուղի պարունակության մինչև 4.0 %-ի համար.

4) Կաթի մեջ 4.0 %-ից ավելի յուղի պարունակության դեպքում Կաթի գնին ավելացվում է 4.0 %-ը գերազանցող միայն յուղի արժեքը՝ յուղի շուկայական գներով, որը համաձայնեցվում է Վաճառողի հետ:

11. Վաճառողը Գնորդի կողմից սահմանված Կաթի բազիսային գնի հետ չհամաձայնելու դեպքում՝ կարող է դադարեցնել սույն պայմանագրի գործողությունը՝ այդ մասին առնվազն 3 օր առաջ գրավոր տեղեկացնելով Գնորդին:

12. Գնորդն իրեն վաճառված Կաթի դիմաց վճարումը կատարում է սույն պայմանագրի 10-րդ կետով կատարված հաշվարկով ստացված գնով՝ 3 օրվա ընթացքում:

### 4. Կողմերի պատասխանատվությունը

13. Գնորդը կարող է հրաժարվել սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանող կամ ժամկետի ուշացումով տրամադրված Կաթն ընդունելուց՝ չկրելով որևէ պատասխանատվություն:

14. Առանց սույն պայմանագրով սահմանված կարգով Գնորդին ծանուցելու Կաթը չտրամադրելու համար Վաճառողը Գնորդին վճարում է չմատակարարված Կաթի բազիսային արժեքի __ տոկոսի չափով տույժ՝ յուրաքանչյուր օրվա համար:

15. Վաճառողի կողմից սույն պայմանագրի հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանող և ժամկետում տրամադրված Կաթն ընդունելուց հրաժարվելու համար Գնորդն Վաճառողին վճարում է տուգանք՝ չընդունված Կաթի բազիսային արժեքի ___ տոկոսի չափով ինչպես նաև Վաճառողի կրած կորուստները:

16. Վաճառողի կողմից սույն պայմանագրի հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանող և ժամկետում տրամադրված Կաթի

ընդունումն ուշացնելու դեպքում, եթե այդ պատճառով Կաթը փչացել է, Գնորդը տուգանքից բացի, վճարում է Վաճառողին նաև Կաթի բազիսային ամբողջ արժեքը և դրա տեղափոխման ծախսերը:

17. Վաճառված Կաթի համար ժամանակին չվճարելու դեպքում՝ Գնորդը վճարում է Վաճառողի ուշացման յուրաքանչյուր օրվա համար տույժ՝ վաճառված ամբողջ Կաթի արժեքի ___ տոկոսի չափով: ____ օրվանից ավել ժամկետով ուշացման դեպքում տույժի հաշվեգրումը դադարեցվում է և Գնորդն Վաճառողին հաշվեգրված տույժից բացի վճարում է տուգանք՝ ժամանակին չվճարված գումարի ___ տոկոսի չափով:

### 5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ - ՄԱԺՈՐ)

18. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է որպես անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք (երկրաշարժ, ջրհեղեղ, պատերազմ, ռազմական և արտակարգ դրություն, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, անասնահամաճարակներ և այլն), որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրի պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին տեղյակ պահելով մյուս Կողմին:

### 7. Եզրափակիչ դրույթներ

19. Գնորդը կարող է Վաճառողին տրամադրել խորհրդատվություն, կանխավճար, համակցված կերեր, բուժանյութեր և այլն:

20. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցու-թյունների միջոցով՝ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

21. Սույն պայմանագրի լուծումը կամ ցանկացած փոփոխություն կատարվում է Կողմերի միջև գրավոր փաստաթուղթ ստորագրելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

22. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը կամ դադարում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված պարտավորությունների դադարման հիմքերով:

23. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, -------------- օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, հավելվածը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ԳՆՈՐԴ　　　　　　　　　　ՎԱՃԱՌՈՂ

______________________________

____________________________

Հավելված

Կաթի գնման N պայմանագրի

1. Ընդունման ենթակա չէ.

1) հիվանդ Կաթը (հիվանդությունների ցանկը տալիս է համայնքի, տարածքի, մարզի անասնաբուժական ծառայությունը)

2) խեժը, այսինքն կովի ծնից հետո առաջին 10 օրվա ընթացքում ստացված Կաթը,

3) լակտացիայի վերջին 10 օրվա ընթացքում ստացված Կաթը,

4) հակաբիոտիկներ, բակտերիոստատիկ մնացորդներ (նյութեր) պարունակող Կաթը,

5) եռացնելիս կոագուլացվող (ըստ ալկոհոլային փորձի` ոչ ջերմակայուն) Կաթը,

6) կեղծված (այդ թվում` ջրով) և/կամ ներկված Կաթը,

7) Կաթին ոչ բնորոշ համ և հոտ ունեցող (այդ թվում` նավթամթերքի, ապուխտի և այլնի) Կաթը,

8) խեժի և ցամաքեցման փուլում գտնվող կովերի կաթի խառնուրդով Կաթը,

9) ՀՀ կառավարության 21.12.2006թ. N 1925-Ն որոշմամբ հաստատված Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին չհամապատասխանող Կաթը:

2. Մատակարարվող Կաթի ընդունման ժամանակ վերահսկվում և որոշվում են հետևյալ հիմնական ցուցանիշները՝ զգայորոշում (օրգանոլեպտիկա), կեղծվածություն (այդ թվում՝ խառնված ջրի տոկոս), ջերմաստիճան, ջերմակայունություն, թթվայնություն, յուղայնության, չոր անյուղ նյութերի և սպիտակուցների պարունակության տոկոս, խտություն և տեսակ, ըստ N 1 և N 2 Աղյուսակների:

Աղյուսակ N 1

| Հ/հ | Ցուցանիշի անվանումը | Նորմատիվ պահանջը | Թույլատրելի շեղումը |
|---|---|---|---|
| 1. | Համը, հոտը և գույն | Կաթին բնորոշ, առանց կողմնակի համի, հոտի և գույնի | Չի թույլատրվում |
| 2. | Ջերմաստիճան | Պաղեցված՝ մինչև 10 $^0$C | Չպաղեցված՝ կթից հետո մինչև 2 ժամվա ընթացքում |
| 3. | Թթվայնություն | 17-ից մինչև 18 $^0$T | 16-ից մինչև 19 $^0$T |
| 4. | Յուղայնություն | 2%-ից մինչև 6% | |
| 5. | Սպիտակուցների պարունակություն | 2.8 %-ից ոչ պակաս | |
| 6. | Չոր անյուղ նյութերի զանգվածային մաս | 8,2 %-ից ոչ պակաս | |
| 7. | Խտություն (20$^0$C-ում) | 1.028-ից մինչև 1.032գ/սմ$^3$ | 1.026գ/սմ$^3$-ից ոչ պակաս |
| 8. | Ջերմակայունություն (ըստ 75%-անոց սպիրտով ալկոհոլային փորձի,) | Ջերմակայուն | Չի թույլատրվում |
| 9. | Հակաբիոտիկներ, ինհիբիդորային նյութեր (ֆերմենտների ակտիվությունը ճնշող) | Չի թույլատրվում | Չի թույլատրվում |
| 10. | Չեզոքացնող նյութեր (սոդա, ամոնիակ և այլն) | Չի թույլատրվում | Չի թույլատրվում |
| 11. | Սառեցման կետը ($^0$C) | -0.520 | -0.518 |

| | | | |
|---|---|---|---|
| 12. | Այլ գյուղատնտեսական կենդանիների Կաթի առկայություն (ոչխարի, այծի և այլն) | Չի թույլատրվում | Չի թույլատրվում |

Աղյուսակ N 2

**3.6% բազիսային յուղայնության և 8.2% չոր անյուղ նյութերի պարունակության Կաթի դասակարգումն ըստ տեսակների**

| Հ/հ | Ցուցանիշի անվանումը | Կաթի տեսակը | | |
|---|---|---|---|---|
| | | **բարձր** | **առաջին** | **երկրորդ** |
| 1. | Թթվայնություն | 16-18 $^0$T | 16-18 $^0$T | 16-19 $^0$T |
| 2. | Խտություն (20$^0$C-ում) | 1.028 գ/սմ$^3$-ից ոչ պակաս | 1.027 գ/սմ$^3$-ից ոչ պակաս | 1.026 գ/սմ$^3$-ից ոչ պակաս |
| 3. | Մաքրության աստիճանը ըստ էտալոնի, խումբ | առաջին | առաջին | երկրորդ |
| 4. | Բակտերիալ վարակվածություն | մինչև 300 հազ./սմ$^3$ | 301-500 հազ./սմ$^3$ | 501-4000 հազ./սմ$^3$ |
| 5. | Սոմատիկ բջիջների պարունակություն | մինչև 500 հազ./սմ$^3$ | 501-1000 հազ./սմ$^3$ | 501- 1000 հազ./սմ$^3$ |

**Վաճառող** ________________ **Գնորդ** ___________________

(ստորագրություն) (ստորագրություն)